



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

491.99-5  
Գ-34

2517

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՅԵԱՆ

ՑԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ




Կ. ՊՕԼԻՍ

ՑԳԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱԳԱՅԵԱՆ

1876

425  
48-90



ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՏ

491.542-5

425 9-37

48-9Ա ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԼԵՁՈՒԻ



ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱԾԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1876

1004  
76393

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՎԱՅԵԱՆ  
ՔԻՒՐԲՃԻ ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ  
ԹԻՎ. 26, 33.

2010

12002

12068

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED


RECEIVED

RECEIVED

RECEIVED

RECEIVED

12068





Ահա նոր քերականութիւն մը որուն ընթացքը մինչեւ հիմա հրատարակուած քերականութեանց ընթացքին տարբեր է : Ասոր մեծ տարբերութիւնը , եւ , ինչպիսի կը յոտանք , գեթ գործնական կրթութեան մասին ունենայու առաւելութիւնը՝ գլխաւորաբար գործնական հրահանգներ պարունակելուն մեջ կը հայանայ : Ասոր մեջ տղան , անոռնն ու բայը մանչնայու օրէն , պիտի սկսի ևսեւ ստուց գործածութիւնն ընելու վարժիչ :

Դարձեալ այս քերականութեան ընթացքին մեջ , տղան ոչ թէ , մինչեւ հիմա գրեթէ առ հասարակ եղածին պէս , իորաբանչիօր մասին բանի այլ եւ այլ ձեւերն ու բոլոր գիտելիները , եւ հաճածայնութեան կանոններուն երկայն շարքը միանգամայն եւ միայն տեսականապէս միտք առնելու պիտի յոգնի , կամ թէ ըսենք , քերականութեան երկայն մասիւն մեկ ծայրէն մինչեւ միւս ծայրը վազելով պիտի երթայ առանց տեղ մը զկայ եւ շունչ առնելու , այլ իորաբանչիօր հրահանգ , այն երկայն ընթացքին մեջ իրրեւ մէկ մի օթեանս , անոր թէ շունչ եւ հանգիստ առնելու , եւ թէ իոր կարճ մասիւնն միայ ստեպ ստեպ դառնալով ևայելու եւ անցած ստներ մանչցածէն առելի շառ զայն մանչնայու պիտի ծառայէ : Զորօրինակ՝ հոս քերականութեան բոլորովին անտեղեակ տղան անոռններուն բոլոր հոլովներն ու հոլովոսները ոչ թէ մէկին թոթմախօրէն բերան մանառանդ բան թէ միտք պիտի առնէ , ոչ ուղղականը սորված առնէ անուականը , տրականը , բացառականը միանգամայն հասկնալու պիտի չյոգնի . ստուց մեկը սորվելէ եւ շառ մը հասկնալ

Բ.

շէ եւ անոր գործնական կրթութիւնն ընելի ետքը միասին  
սխտի սնցնի : Այս կերպով քերականութիւնը խառն եւ  
տեսական ըլլալէն դարձելով՝ կ'ըլլայ ստոխոսական , եւ  
գործնականսպէս տրոջելոս ուսում մը :

Կը յոսանք թէ այս քերականութիւնը մասնաւոր կեր-  
պով շատերուն ուղարկութիւնը սխտի գրասէ , մասնաւոր  
որ կը տեսնէինք թէ քանի մը յաջողակ ուսուցիչներ արդէն  
իրենք իրենցոյձ այն ընթացքը բռնած էին , եւ անոր հա-  
մանատ դասագրքի մը կը սխտարէին : Եթէ մեր աշխատու-  
թիւնն ընդունելի ըլլայ , կը խոստանանք անոր յաջորդ  
տպագրութեանը կարեւոր զարգացում մը տալ :



ԳՈՐԾԵՍԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ԳԱՍ Ա.

ԼԵԶՈՒ , ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ , ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

ՀԱՐՑՈՒՄ . Լեզուն ինչ է :

ՊԱՏԱՍԽԱՆ . Լեզու կ'ըսուին այն արտաքին նշան-  
ները՝ որով մարդիկ իրենց գաղափարները , խորհուրդ-  
ները եւ զգացումները կը յայտնեն :

Հ . Այս արտաքին նշաններուն գլխաւորները որո՞նք են :

Պ . Այս արտաքին նշաններուն գլխաւորներն են  
յայնք եւ էիբը :

Հ . Չայնիւ կամ գրով բացատրութիւնը ինչ կը կոչուի :

Պ . Չայնիւ կամ գրով եղած բացատրութիւնը Խօսք կը  
կոչուի :

Հ . Խօսքն ինչ բաներէ կը բաղկանայ :

Պ . Ամէն խօսք Բառերէ կը բաղկանայ . զոր օրինակ՝  
Ա՛ն ճարտ Երջանկո՛ւնն էր ղէ՛ն , Բայց շատ ինչն անոր  
էր հանին . այս խօսքն ինք բառէ բաղկացած է , որք են՝  
ան , ճարտ , Երջանկո՛ւնն , ղէ՛ն , Բայց , շատ , ինչ , ան ,  
հանին :

Հ . Բառերն ինչպէս խօսք կը կազմեն :

Պ . Բառերը խօսքի մը մէջ օրէնով մը իրարու քով  
գալով խօսքը կը կազմեն :

Եթէ այն օրէնքին համաձայն չկազմուին կամ չբա-  
րադրուին , անոնց իրարու քով գալէն բան մը չի հաս-  
կըցուիր : Այս օրէնքը Վերջն օրէնքն է :

Հ. Քերականութիւնն ինչ է :

Պ. Քերականութիւնն այն գիտութիւնը կամ արուեստն է որ այս օրէնքին կանոնները կը սորվեցնէ : Այսինքն՝ քերականութեամբ կը սորվինք թէ բառերն ինչպէս շարուելու են որ է՝ մասոյ կամ նշանակութիւն մը ունեցող խօսք կազմուի :

Հ. Բառերը քանի տեսակի կը վերածուին :

Պ. Լեզուի մը մէջ հազարաւոր բառեր կը գտնուին , բայց ամէնն ալ ինչ տեսակի կը վերածուին :

Հ. Այս ինը տեսակ բառերն ինչ կը կոչուին :

Պ. Աս ինը տեսակ բառերը Մասունք բռնի կ'ըսուին , եւ են՝ Անուն կամ Գոյական , Ածական , Բայ , Յոյր , Դերանուն , Կանխորդութիւն , Մակբայ , Եղանակ , Միջորդութիւն :



ՅԱՄ Բ.

ԱՆՈՒՆ ԵՒ ԱԾԱԿԱՆ

ԱՆՈՒՆ

Հ. Անունն ինչ է :

Պ. Անուն կամ գոյական կ'ըսուին այն տեսակ բառերը որ իրերու անուններ են . ինչպէս՝ ծառ , ծաղիկ , շուն , մարդ , եւ այլն : Անուններէն ոմանք յարուկ կ'ըսուին , այսինքն՝ մարդոց եւ տեղերու անունները , ինչպէս՝ Հայկ , Անի : Ասոնք գիւնդերով կը գրուին :

Հ. Անունը քանի բան ունի :

Պ. Անունն ունի 1. հոլով եւ 2. ինք :

Հ. Հոլովն ինչ է եւ քանի է :

Պ. Հոլովն անուան մը վերջաւորութեան փոխուիլ է , եւ վէջ է . Ուղղական , Սեռական , Տրական , Հայցական , Բացառական եւ Գործիական :

Հ. Թիւն ինչ է եւ քանի է :

Պ. Թիւն անուան մէկ կամ մէկէ աւելի ցուցնելն է , եւ երկուք է , եղակի եւ յոսակի : Զորօրինակ՝ մարդ եւ զակի է , մարդեր՝ յոքնակի :

Այն անունները որոնց եզակին չի գործածուիր՝ անշակաւ կ'ըսուին , ինչպէս՝ երկնք , դժբերք , կոտորակ , փոքր եւն :

Հ. Հայերէն անուններն ինչպէս կը հոլովին :

Պ. Հայերէն անուններուն մէկ մասը կը հոլովի ուղղականէն եւ հայցականէն զատ միւս հոլովներուն մէջ անուն վերջէ վեր մը կամ վանի մը աւելցնելով , զոր օրինակ .

Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

Եզ.	Յո.	Եզ.	Յո.
Ու. Բան ,	Ո. Բանք ,	Ո. Քաղաք .	Ո. Քաղաքք .
Սե. Բանք ,	Ս. Բանէք ,	Ս. Քաղաքք .	Ս. Քաղաքքք .
Տր. Բանք ,	Տ. Բանէք ,	Տ. Քաղաքք .	Տ. Քաղաքքք .
Հայ. ւ Բան ,	Հ. ւ Բանք ,	Հ. ւ Քաղաք .	Հ. ւ Քաղաքք .
Բաց. ւ Բանք ,	Բ. ւ Բանէք ,	Բ. ւ Քաղաքք .	Բ. ւ Քաղաքքք .
Գործ. Բանք ,	Գ. Բանքք ,	Գ. Քաղաքքք .	Գ. Քաղաքքքք .

Հ. Այս հոլովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Այս հոլովման եզակի գործիականը կ'ըլլայ , ոմանց՝ ինք , ոմանց ալ՝ ու :

Իսկ յոքնակի սեռականը , արականը եւ բացառականը կ'ըլլայ ոմանց՝ ինք , ոմանց ալ՝ ոյ , գործիականը՝ ոմանց ինք , ոմանց ալ՝ օք :

Պէտք է գիտնալ 2. որ ամէն անուան հայցականին վրայ սովորաբար (չ) նախդիրը կը դրուի , բացառականին վրայ ալ (ի) նախդիրը :

Պէտք է գիտնալ 3. որ քաղաքի ուղղականին նշանն է , « գիրն ալ յոքնակի հայցականին :

Բ. ՀՈՂՈՎՈՒՄ

Գ. ՀՈՂՈՎՈՒՄ

Եջ	Յ+	Եջ	Յ+
Ո. Գեա,	Գեա+	Ո. Մով,	Մով+
Ս. Գեա-յ,	Գեա-յ.	Ս. Մով--,	Մով--յ.
Տ. Գեա-ոյ,	Գեա-ոյ.	Տ. Մով--,	Մով--ոյ.
Հ. Գեա,	Գեա--.	Հ. շՄով,	շՄով--.
Բ. Գեա-ոյ,	Գեա-ոյ.	Բ. Գեա-ոյ,	Գեա-ոյ.
Գ. Գեա-ոյ,	Գեա-ոյ.	Գ. Մով--,	Մով--ոյ.

Հ. Գ. Հողովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Գ. հողովման անուններէն ոմանց բացառականը կ'ըլլայ ուէ, զորօրինակ՝ զարդ, ՚ի զարդ--ուէ :

Գ. ՀՈՂՈՎՈՒՄ

Եջ	Յ+
Ո. Հայկ,	Հեփսիմէ.
Ս. Հայկ-ոյ,	Հեփսիմէ-ոյ.
Տ. Հայկ-ոյ,	Հեփսիմէ-ոյ.
Հ. շՀայկ,	շՀեփսիմէ.
Բ. Գեա-ոյ,	Գեա-ոյ.
Գ. Հայկ--,	Հեփսիմէ--.

Հ. Այս հողովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Այս հողովման տակ կ'երթան յարուստ անուններ, այսինքն՝ մարդոց կամ տեղերու անուններ, որոնց յոք-նակին սովորաբար չի գործածուիր :

ԱՅԱԿԱՆ

Հ. Ածականն ինչ է :

Պ. Ածական կ'ըսուին այն անունները որ իրի մը յարուստի-նները, այսինքն՝ անոր ինչու էլ ըլլալը կը ցուցնեն. զորօրինակ՝ Բարձր (ծառ), անուշահոտ (ծաղիկ), կարաչի (շուն), կենդանի (մարդ) :

1. Հրահանգ

Աշակերտք հետեւեալ անուններուն մէջ ֆոնետիկ ու աֆֆիքտիկ որոշեն :

Ընծայ, ժամանակ, նշան, դործ, մեծ, քաջ, հողմ, մեղմ (կամայ), մարդ, տղայ, չար, զգօն (խննի), կարգ, ձագ, հող, լի, ունայն (արար), հաց, նոր, հոտ, հօտ (տէրէ-), լայն, նեղ, ոչխար, արջառ, (եղ, կոշ), հրաման, դատարկ, հրապարակ, ամբոխ, աղքատ, թըշուուտ, աղտ, երկաթ, արծաթ, զգեստ, զարդ, Գնել, Տիրան, Միրան, զոն, հաճոյ, տգեղ, կանաչ, յօղ (կայ), աղք, զօրաւոր, տկար, ժամ, ծառ, արդար, հեղ, ցեղ, քահանայ, մահ, ծեր, լեզու, թաւ (մարտ), շքեղ, վատ, աւազան, խրատ, Արամ, Վահան, Գայիանի, Եսայի, ծայր, իր, ուս, ուխտ, գանձ, զօր, ճրագ, լուսաւոր, աղօտ, պայծառ, պատերազմ, գայլ (ֆորթ), գեղ, որթ (արտ), որթ (ամա), սան (կախայ), սան (աշակերտ), փող (պօր), փող (պօղա), աղօթք, խօսք, միտք, պարտք, կամք, դը-ժողք, մեղք :

2. Հրահանգ

Աշակերտք վերի անունները հողովն :

ԴԱՍ Գ.

ԲԱՅ

Հ. Բայն ինչ է :

Պ. Բայ կ'ըսուին այն բառերը որ բան մը ընել կամ բան մը ըլլալ կը ցուցնեն, ինչպէս՝ ֆրէլ, կարգալ, Կալի, Կնել, որ բան մը ընել կը ցուցնեն, եւ Կարգի, Կարգալ, յօրանալ, որ բան մը ըլլալ կը ցուցնեն :

Հ. Բայը քանի բան ունի :

Պ. Բայն ունի եղանակ , ժամանակ , դէժ+ եւ թի- :

Հ. Եղանակը քանի է :

Պ. Եղանակը շրտ է , սահմանական , հրամայական , սորոս-  
դասական եւ աներեւոյթ :

Հ. Ժամանակը քանի է :

Պ. Ժամանակը բուն էրէ+ է՝ ներկայ , անցեալ եւ ապա-  
նի : Ներկան կը ցուցնէ այն որ հիմա է , ինչպէս՝ կը գը-  
րեժ (կոր) . Անցեալը կը ցուցնէ այն որ արդէն եղաւ ,  
ինչպէս՝ գրեցի . Ապառնին կը ցուցնէ այն որ դեռ պիտի  
ըլայ , ինչպէս՝ պիտի գրեժ :

Անցեալը կը լինէ անկարար անցեալ եւ կարարեալ անց-  
եալ : Կը գրեի (կոր)՝ անկատար անցեալ է . Գրեցի՝ կա-  
տարեալ անցեալ :

Դարձեալ ժամանակները երկուսն ալ են , պարզ եւ  
Քաղաքրեալ : Պարզ ժամանակը թի է , բաղադրեալը ու-  
րիշ (եմ) բայով կը շինուի : Զոր օրինակ՝ սերեժ , սերե-  
ցի , պարզ են . սերեալ եմ , սերեալ եի , սերեալ իցեժ բա-  
ղադրեալ են :

Հ. Դէմքը քանի է :

Պ. Դէմքը երեք է՝ առաջին , երկրորդ եւ երրորդ : Ես՝  
առաջին դէմք է , Դու՝ երկրորդ , Նա՝ (ան) երրորդ :

Հ. Թիւը քանի է :

Պ. Թիւը երկուսն է՝ եղակի , որ մէկ անձ կը ցուցնէ գոր-  
ծող , ինչպէս՝ (կը) սերեժ . (կը) սերե , (կը) սերէ , եւ  
յոթնակի , որ մէկէ աւելի անձինք կը ցուցնէ գործող ,  
ինչպէս՝ (կը) սերեն , (կը) սերեք , (կը) սերեն :

Հ. Բայերը քանի տեսակ են :

Պ. Բայերը երկուսն ալ են՝ ճոյական կամ եական բայ ,  
եւ անձական բայ : Եական բայն է եմ բայը . ուրիշ բոլոր  
բայերն անձական բայ են :

Հ. Եական բայն ինչպէս կը խոնարհի :

Պ. Եական բայն այսպէս կը խոնարհի :

ՍԱՀՄԱՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԵՂ

Յ+

Ներկայ ժամանակ . եմ , ես , է . եմք , էք , են .  
եմ , ես , է , են .

Անկատար անցեալ . էի , էիր , էր . էաք , էիք , էին .  
էի , էիր , են .

Կատարեալ անցեալ . եղէ , եղեր , եղեւ , եղաք , եղէք ,  
եղեն . եղայ , եղար , են .

Ապառնի . եղեց , եղիցիս , եղիցի . եղիցուք ,  
եղիցիք , եղիցին . պիտի ըլլամ , են .

ՀՐԱՄԱՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԵՂ

Յ+

Լեր , մի լինիր . Լերուք , մի լինիք . եղբ , թ ըլլա .  
եղեք , թ ըլլա .

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ԵՂ

Յ+

Իցեմ , իցես , իցէ . իցեմք , իցէք , իցեն . եմ կամ  
ըլլամ , ըլլա , են .

ԱՆՈՐԻՇ ԳԵՐԲԱՅ

Աներեւոյթ . Անց . ընդհանրեցնելու . Ապ . ընդհանրեցնելու .  
Լինել . ըլլա . Լեալ , եղեալ , եղաժ . Լինելոց . ըլլալ .

ԲԱՂԱԴԻՐԵԱԼ ԺԱՄԱՏԱԿՆԵՐ

Յարակ . եղեալ եմ , եղեալ ես , են . եղաժ եմ , են .  
Գերակ . եղեալ էի , եղեալ էիր , են . եղաժ էի , են .

- Ստ. անց. Եղեալ իցեմ, եղեալ իցես, եւն. Եղա՞ծ եմ, կամ եղա՞ծ ըլլա՞ծ, եւն.
- Ներկ. ապ. Լինելոց եմ, լինելոց ես, եւն. Պէտէ ըլլա՞ծ, պէտէ ըլլա՞ծ, եւն.
- Անկ. ապ. Լինելոց էի, լինելոց էիր, եւն. Պէտէ ըլլայի, եւն.
- Ստոր. ապ. Լինելոց իցեմ, լինելոց իցես, եւն. Պէտէ ըլլա՞ծ, եւն.

ԴՍՍ Դ.

ԼՈՒԾՈՒԾ ԵՒ ԵՕԴ

ԼՈՒԾՈՒԾ

- Հ. Նախադասութիւնն ինչ է :
- Պ. Նախադասութիւն կ'ըսուի խօսք մը որուն մէջ դէմադր եւ Բանաբար տէր բայի է, Բանաբար տէր բայի է, Բանաբար տէր բայի է, Բանաբար տէր բայի է :
- Հ. Դիմադր եւ անդէմ բայն ինչ է :
- Պ. Բայի մը այն ժամանակները որ եղակի եւ յոքնակի երեւ դէմքը կը ցուցնեն՝ դիմադր կ'ըսուին . այսպէս են ներկայ, անկարար, կարարեալ, ապարհի ժամանակները, եւ հրահայտան ու սորորարասանք . իսկ անորից դերբայը, այսինքն, աներեւոյի, եւ անցեալ ու ապարհի ընդհանրութեան ներքինը որ դէմք չեն ցուցներ՝ անդէմ են :
- Հ. Նախադասութեան մը մէջ, Բայը, տէր Բայն եւ սորորարեան ինչպէս կը զիտցուին :
- Պ. Բայը միշտ յայտնի է, որ է եմ բայը : Տէր բային ո՞վ կամ է՞նչ հարցմամբ կը դանուի. Ստորագելին ալ ինչպէ՞նէ, որպէ՞նէ հարցմամբ : Աերի նախադասութեան մէջ այս

հարցումներն ընենք . Ե. — ո՞վ կամ ինչ է. — Բանաբար է . — Բանաբար ինչպիսի է. — Բնի է : Ապա Բանաբար տէր բայի է էին . Բնի՞ ստորագելի է Բանաբարն :

Այսպէս պէտք է լուծել ամէն նախադասութիւն : Տէր բային զրեթէ միշտ գոյական է, այսինքն, ան մը կամ էր մը, Ստորագելին ալ զրեթէ միշտ ածական :

Յ Օ Դ

- Հ. Յօդն ինչ է :
  - Պ. Յօդ կը կոչուի ն գիրը՝ գրաբարին մէջ, իսկ աշխարհաբարին մէջ ն կամ ը գիրը . ինչպէս՝ աշխարհաբար՝ տունը, կինը . Գրաբար՝ տունն կինն :
  - Հ. Յօդը ո՞ւր կը դրուի :
  - Պ. Յօդը թէ գրաբարին եւ թէ աշխարհաբարին մէջ անուան ծայրը կը դրուի :
  - Հ. Բառ մը գրաբարին մէջ երբ յօդ չառնուր :
  - Պ. 1. Երբ անուն մը ան կամ Բանաբար կը ցուցնէ, գրաբարին մէջ յօդ չառնուր, աշխարհաբարին մէջ կ'առնու : Անուն մը սեռ կը ցուցնէ, երբ Բանաբար զօրութեամբ կ'իմացուի, զոր օրինակ՝ Բանաբար միջին է, Շունը հաւատարիմ է, Ձին արագ է, Մարդը մահկանացու է, կը նշանակեն՝ Բանաբար, Բանաբար, Բանաբար, Բանաբար . ուստի այս խօսքերուն մէջ՝ Բանաբար, Շուն, Ձի, Մարդ, սեռ կը ցուցնեն, ուստի եւ գրաբարին մէջ յօդ չեն առնուր, զոր օրինակ .
- |                          |                        |
|--------------------------|------------------------|
| Բանաբար միջին է .        | Միջին է Բանաբար        |
| Շունը հաւատարիմ է        | Հաւատարիմ է Շուն       |
| Մարդը մահկանացու է .     | Մահկանացու է Մարդ      |
| Առաքինութիւնը սիրելի է . | Սիրելի է Առաքինութիւնը |
- 2. Երբ անուան մը նշանակած իրը բնութեան մէջ Բանաբար է, նոյնպէս գրաբարին մէջ յօդ չառնուր, բայց աշ-

խարհաբարին մէջ՝ կ'առնու : Աստուած բարի է , Արեգակը լուսատու է , Լուսինն աղօտ է , Երկիրը գնդաձեւ է , խօսքերուն մէջ՝ Աստուած , Արեգակ , Լուսին , Երկիր . որ միակ առարկաներ են , գրաբարին մէջ յօդ չեն առնուր , զոր օրինակ .

Աստուած բարի է .	Բարի է Աստուած
Արեգակը լուսատու է .	Լուսատու է արեգակն
Երկիրը գնդաձեւ է .	Գնդաձեւ է երկիր
Լուսինն աղօտ է .	Աղօտ է Լուսին

### 3. Հրահանգ

Բանտը մթին է . Լուսինն աղօտ է . Ձիւնը թանձր է . Անձրեւը լոյծ է . Շունը հաւատարիմ է . Ձին արագ է . Երկիրը գնդաձեւ է . Ծոփը ընդարձակ է . Մարդը մահկանացու է . Ջուրը պաղ է . Օդը թեթեւ է . Առաքինութիւնը սիրելի է . Արեգակը լուսատու է . Աստուած բարի է . Հոգին անմահ է . Մարմինը նիւթեղէն է . Քարը կարծր է . Ցամաքը պինդ է . Մեղանը սեւ է . Ձիւնը ճերմակ է . Խոտը կանաչ է . Ցակինթը կարմիր է . Երկինքը կապուտ է . Անիւը կլոր է . Խաղողը քաղցր է . Ազոխը թթու է . Թռչունը թեւաւոր է . Ջուրը թեփոտ է . Ոչխարը չորս ոտքով է . Հաւը երկու ոտքով է . Առիւծը հպարտ է . Վագրը անգութ է . Որդը գարշելի է . Նապաստակը շուտ վազող է . Եղէգը զիւրաւ կոտորող է . Աղիւսը փոսն մէջ եփած է . Աստուած վարձատրող է . Ծնորդը ձրի է :

Պաղ , զո՛ւ	Թեփոտ , թեփամորթ
Մեղան , թանառ	Չորս ոտքով , շարտարանի
Սեւ , սեւա-	Երկու ոտքով , երկոտանի
Ճերմակ , սպիտակ	Անգութ , անափսջայի
Կանանչ , կանաչ	Որդ , որդն

Կապուտ , կապոյտ	Գարշելի , շաղի
Ջուր , յոնի	Շուտ վազող , արագորն
Կլոր , բուլբուլ	Եղէգ , եղէգն
Կիւրաւ կոտորող , դեւաբեկ վարձատրող , պարթեւաորն	Փոսն մէջ եփած , թրծոն

Հրահանգին մէջ ճանցեալ բառերը զբաժանելու հետ նոյն են : Աշակերտը թող վերէ հրահանգը զբաժանել յարցնէ , սորորգելին բայնն առաջ , ու որեւ բայնն բայնն էրոք դնելով : Թող աշակերտո՛ւ այս կանոնը շնորհան , այսինքն՝ սորորգելին առաջ դնել . այս կերպը զբաժանելու մեջ սովորական է դնելն է :

Աշակերտո՛ւ կրնան այս հրահանգին առջն մէկ խօսքը (նախադասութեանը) վերէ Լուծման կանոնին հասեմար Լուծել :



ԴԱՍ Ե.

ՆԱԽԸՆԹԱՅ ԴԱՍԻՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ՅՕԴ

ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Գրաբարին մէջ անեզական տէր բայիներուն ինչ բայ կը արուի :

Պ. Անեզական տէր բայիներուն յոնալի բայ կը արուի : Երկինքը բարձր է . Բարձր են երկինք . Ազօթքը զօրաւոր է . Հըր են աղբիւր . Ապարանքը (պալատը) Շիւղ են ապարանք . փառաւոր է .

Հ. Բայը եզակի թէ յոքնակի կը դրուի , երբ երկու կամ աւելի եզակի տէր բայիներ կան :

Պ. Երբ երկու կամ աւելի եզակի տէր բայիներ կան , բայը նոյնպէս յոնալի կը դրուի :

Տողին եւ ծուխը թեթեւ են. Թէթեւ են շոգի եւ ծոգի, Գարն ու երկաթը ծանր են. Մանր են Կար եւ Երկաթ:

Յ 0 Դ

Հ. Վերը (Դաս Դ.) ըսիր թէ, երբ անուն մը սեռ կամ տեսակ կը ցուցնէ, յօդ (ն գիրը) չառնուր. ապա երբ անուն մը յօդ կ'առնու գրարարին մէջ:

Պ. երբ անուն մը ոչ թէ սեռ, այլ որոշեալ անհատ կամ անհատներ կը ցուցնէ, անատեն յօդ կ'առնու գրարարին մէջ: Անուն մը որոշեալ անհատ ցուցած կ'ըսուի, երբ ոչ թէ ասին, այլ այն էնչ, այն անուն կը նշանակէ, զորօրինակ. Ասորէրը լուսադրու էն, խօսքին մէջ, ասորէրը բառով ամէն աստղ կ'իմացուի. բայց դասը ներքեւ էն, ճամբաները ներքեւ են, դասարանն անուան է. խօսքերուն մէջ, դասաները, ճամբաները, դասարանը ըսելով ասին դուռ, ասին ճամբայ, ասին դատաւոր չի հասկցուիր, այլ կը նշանակէ այն էնչ դուռները, այն էնչ ճամբաները, այն անուն դատաւորը:

Սեռ ցոցնող

Որոշեալ անհատ ցոցնող

Օգը բարակ է. Նորք է  
օր.  
Ջուրը վաղուն է. Հաս-  
նոր է Գոր.  
Ձին չորքոտանի է. Զոր-  
դան է Յէ.

Օգն ազականած է. Ադա-  
կանեալ է օրն.  
Ջուրը պղտոր է. Պղտոր է  
Գորն.  
Ձին կաղ է. Կաղ է Յէ.

Այս եւ նախընթաց դասին կանոններուն համեմատ աշակերտը հետեւեալ հրահանգները գրարարի դարձունեն:

4. Հրահանգ

Երկինքը բարձր է. Աստղերը լուսատու են. Դուռները բաց էին. Ճամբաները նեղ են. Փողոցները չի-

տակ են. Ազակին ջինջ է. Ջուրը յստակ է. Աղբիւրն առատ է. Սովը սաստիկ է. Հիւանդութիւնը ծանր է. Կրակն այրող է. Դատաւորն անաչառ է. Իշխանը խիստ է. Պալատը չքեղ է. Շէնքերը փառաւոր են. Պարտէզը գեղեցիկ է. Ժողովուրդը շատ է. Ձինուորները քիչուոր են. Մարդը հարուստ է. Աստուած ըստեղծող է. Հրեշտակները հոգի են. Սատանաները չար են. Դրախտը երանաւէտ է. Տղաք անմեղ են. Իմաստութիւնը յարգի է. Գիտութիւններն օգտակար են. Եղը, ձին եւ էջը պիտանի են. Որդիները ժառանգ են. Մատաները հնազանդ ըլլան. Թագաւորը յաղթող է. Զօրավարը քաջ է. Ձինուորները հաւատարիմ են. Առիւծը զօրաւոր է. Գետինը խոնաւ է. Փայտը չոր էր. Հիւանդութիւնը մահացու է. Բեռը ծանր է. Զգոյշ եղիք. Վստահ եղիր. Ժողովուրդն աղքատ է. Իշխանները հարուստ են. Մարդը սիր է. Անոնք սով են. Տղան սով է. Ուսումը օգտակար է. Մոլութիւնը ատելի է. Աղքատները հարուստ եղան. Պատմութիւնը ճշմարիտ է. Վկայութիւնները սուտ են. Ճամբան երկայն է. Ժամանակը կարճ է:

Աստղ, աստղ, Յ+. աստղի+. Ետտ, Բաղամ  
Դուռ, դուռ, Յ+. դուռն+. Բիշուոր, սակա-  
ճամբայ, ճամբայարհ. Մարդ, այր  
Շիտակ, հարի (տիւղ) Հարուստ, ընչեղ, Ռեճարան  
Հիւանդութիւն, անհո Ստեղծող, արարել  
Կրակ, հոր Սատանայ, դէ-  
Այրող, կէշիւ Տղայ, ճանուկ, Յ+. ճանուկն  
Պալատ, աստղան Յարգի, պարտաւան  
Շէնք, շինած, Յ+. շինած+ Եղ, էղն, Յ+. էղն+  
Փառաւոր, հոյակաղ Զօրաւոր, հղբ  
Բեռ, Բեռն, Յ+. Բեռն+ Ուսում, ստանա-  
Անոնք, նոյս Մոլութիւն, յարտաւան

ՀՈՒԾՈՒՄ

Բայ են Կրօնական . են՝ Էակ . բայ . սահմաներկ . յոք .  
գ . զէմք . — Ո՞վ են . — Դուռները , Կրօնական . Կրուներն  
տէր բայի է Ենին . այս բառինն գիրը յօգ է , վասն  
զի Կրօնները հոս ոչ թէ աֆն դուռ կը նշանակէ , այլ  
այս ինչ որոշեալ դուռները : Դուռները ինչպիսի են . —  
Բայ են . Բայ ամ . ստորագելի է Կրօնին :

Յ. Հրահանգ

Գրագիրը շուտ գրող է . Եզը , ոչխարը եւ այծը եղ-  
ջերաւոր են . Պատմութեանը ծիրանի է . Բնակիչները  
սեւ են . Քաջ եղիք . Հնազանդ եղիր . Շոալ մ'ըլլար .  
Հաւատարիմ ըլլայ . Զգոյշ եղիք . Եղեւինը բարձր է .  
Եղէզը զիւրաբեկ է . Տօսախը ցած է . Զիւնն ու եղ-  
եամը ճերմակ են . Գետինը սահուն (խոյլան) է . Խեղճ  
եմ . Ողորմելի է . Երանելի ես . Նաղաստակը շուտ քա-  
լող է . Ապերախտ մ'ըլլար . Մարդը բարերար է . Ե-  
րամակը (սիւրիս) մեծ էր . Ես վկայ եմ . Դուռն երաշ-  
խաւոր (+եֆէլ) ես . Անիկա ամբաստանող (բազմէ) է .  
Անոնք դատաւոր են . Անիկա դահիճ է . Տէրը վրէժ-  
խնդիր է . Պարզեւը ձրի է . Ասիկա շնորհք է . Գիրքը  
պարզեւ է , Պատեղներն ընծայ են :

Գրագիր , Կրօն . Ապերախտ , Երօնորոտաց ,  
Շուտ գրող , արեւոյսի . արաշնորհ .  
Ցած , Խոնարհ . Բարերար , Երօնորոտ .  
Ճերմակ , արեւոյսի . Անիկա , նա .  
Սահուն , լայն . Ամբաստանող , Կատարաւոր .  
Խեղճ , Եղան . Շնորհք , յիշ .  
Շուտ քալող , արեւոյսի . Գիրք , Երօն :

ԳՄՄ Զ.

Հ. Վերը (Դաս Բ.) ըսիր թէ անուններուն մէկ մասը  
կը հոլովի անուան վերջը գէր կամ լանի յը աւելցնելով :  
Կան ուրիշ անուններ որ ուրիշ կերպ կը հոլովին :

Պ. Կան անուններ որ հոլովելու առեն իրենց վեր-  
ջին վանիլը կը գործեն . այսպէս են է , ը , էն եւ ըր կամ  
ըր վերջաւորած անուններ :

Ե. ՀՈՒՈՎՈՒՄ

	Եղան	Յորտակ
Ո.	Եկեղեցի ,	Եկեղեցիտ ,
Ս.	Եկեղեցիացի ,	Եկեղեցիացիտ ,
Տ.	Եկեղեցիացի , --լ ,	Եկեղեցիացիտ ,
Հ.	Եկեղեցի ,	Եկեղեցիտ ,
Բ.	Եկեղեցիացի , --ութ ,	Եկեղեցիացիտ .
Գ.	Եկեղեցիացիտ ,	Եկեղեցիացիտ ,

Հ. Այս հոլովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. 1. Այս հոլովման տակ կ'երթան Բազմական (մէկէ  
աւելի վանիէ բաղկացեալ) է վերջաւորած անուններ .  
ինչպէս քոյն , կողն , գինն , եւ այլն :

2. Հոգի եւ որդի բառերուն : եւ զի վերջաւորած տեղ-  
ւոյ կամ ազգի մը վերաբերեալ անձ ցուցնող անուն-  
ներուն , ինչպէս՝ Խոյլեացի , Հոնոյեացի , եւ այլն , գոր-  
ծիականը կ'ըլլայ --ով եւ ոչ եւ , յօքնակին ալ փոխա-  
նակ էաց , ետ ըլլալու , կ'ըլլայ --ոյ , --ով , Զորօրի-  
նակ՝ որդի , որդաց , Կրթին . որդ--ով . որդիք , որդ--ոյ ,  
որդ--ով :

Զ. ՀՈՒՈՎՈՒՄ

	Եղան	Յորտակ
Ո.	Հիմն .	Հիմնացիտ .
Ս.	Հիմնացի ,	Հիմնացիտ ,

(\*) Զայնաւորով սկսած անուններուն վրայ փոխանակ էի , նախ-  
գէր կը գործեն :

S.	Հիմ-ւ,	Հիմ-ւոյ,
Հ.	ւՀիմն,	ւՀիմն-ւոն,
Բ.	ի Հիմ-ւոյ,	ի Հիմ-ւոյ,
Գ.	Հիմ-ւոյ,	Հիմ-ւոյ,

Հ. Այս հոլովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. 1. Կան անուններ որ ըն չեն վերջաւորիր, բայց այս հոլովման պէս կ'ըլլան, ինչպէս, Տուն, տան. Շուն, շան. Մանուկ, մանկան. Աղջիկ, աղջկան. Անուն, անուան. Պաշտօն, պաշտաման. և այլք :

2. Կան քանի մը ըն (\*) վերջաւորած անուններ, որոնց սեռականն ու տրականը ին կ'ըլլայ, յօքնակի ուղղականն ալ ին կ'ըլլայ. գործրինակ :

	Եզ-իք	Յոճնակի
Ո.	Գառն,	Գառն-իք,
Ս.	Գառն-ի,	Գառն-ւոյ,
Տ.	Գառն-ի,	Գառն-ւոյ,
Հ.	ւԳառն,	ւԳառն-իք,
Բ.	ի Գառն-ւոյ,	ի Գառն-ւոյ,
Գ.	Գառն-ոյ,	Գառն-ոյ,

Այս զարտուղութիւնները վարժութեամբ կը սորվուին :

Ե. ՀՈՂՈՎՈՒՄ

	Եզ-իք	Յոճնակի
Ո.	Նեղութիւն,	Նեղութիւն-իք,
Ս.	Նեղութիւն-ի,	Նեղութիւն-ւոյ,
Տ.	Նեղութիւն-ի,	Նեղութիւն-ւոյ,
Հ.	ւՆեղութիւն,	ւՆեղութիւն-իք,
Բ.	ի Նեղութիւն-իք,	ի Նեղութիւն-ւոյ,
Գ.	Նեղութիւն-ոյ,	Նեղութիւն-ոյ,

(\*) Քանի մը ըն վերջաւորած անուննց յօքնակի ուղղականը՝ առ, հայցականն ալ առ կը վերջաւորին. ինչպէս՝ սերմն, սերմանք, սերմանս. Ակն, ականք, զականս (գոհար) և այլք :

Հ. Այս հոլովման վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Շատ էն վերջաւորած անուններ այսպէս կը հոլովին, ինչպէս, արիւն, կորիւն, անկէն, որ կ'ըլլան արեան, կորեան, անկեան, և այլն. նաեւ ուրիշ քանի մը բառեր. ինչպէս. Ծնունդ, ծննդեան. Խորհուրդ, խորհրդեան. Ժողովուրդ, ժողովուրդեան. Գալուստ, գալստեան :

Ը. ՀՈՂՈՎՈՒՄ

	Եզ.	Յոճ.	Եզ.	Յոճ.
Ո.	Տարր,	Տարր-իք,	Աստղ,	Աստղ-իք,
Ս.	Տարր-ի,	Տարր-իք կամ էրց	Աստղ-ի,	Աստղ-իք կամ էրց.
Տ.	Տարր-ի,	Տարր-իք » »	Աստղ-ի,	Աստղ-իք » »
Հ.	ւՏարր,	ւՏարր-իք » »	ւԱստղ,	ւԱստղ-իք,
Բ.	ի Տարր-իք,	ի Տարր-իք » »	ի Աստղ-իք,	ի Աստղ-իք » »
Գ.	Տարր-իք,	Տարր-իք կամ էրց	Աստղ-իք,	Աստղ-իք կամ էրց.

Հ. Ըր վերջաւորած անուններէն ոմանց վրայ ինչ գիտելիք կայ :

Պ. Ըր վերջաւորած անուններէն ոմանք հետեւեալ կերպով կը հոլովին :

	Եզ-իք
Ո.	Փոքր,
Ս.	Փոքր-ի,
Տ.	Փոքր-ի,
Հ.	ւՓոքր,
Բ.	ի Փոքր-իք,
Գ.	Փոքր-իք,

Այսպէս կը հոլովին ծանր, կարծր, իանջր, բարձր, ածականները, և ժող, սար, ծաղր, գոյական անունները : Վերջին երեք բառերուն գործիականը կ'ըլլայ մեղու, ասու, ծաղու, և յօքնակին չի գործածուիր :

Բարձր բառին յօքնականը, տրականը և բացառականը կ'ըլլան բարձանց, և գործիականը՝ բարձանք :



1004  
16397

6. Հրահանգ

Աշակերտ հետեւեալ անունները հարկէն :

Գօտի , ձիթենի , հոգի , ոսկի , աատմն , բեռն , կողմն , տուն , լաւութիւն , կոճղ , մեծատուն , վերնատուն , ճշմարտութիւն , տարի , անձն , տարր , արկղ , խաշն , դաշն , ուստր (մանչ զաւակ) , դուստր , կղզի , փարիսեցի , սաղուկեցի , անեցի , ասր (բուրդ) , մեղր , եզր (+էնար) , ալին (+էնար՝ ծովու , գետի) , ձմեռն , ամառն , ձեղուն , տառն (այլ ձկան եւ այլն) , ազի (այլ ձիու եւ այլն) , մասն , մրջիւն , սիւն , կորիւն (յաջ գահանի) , թոռն , համր :

ԴԱՍ Է.

ՀՈԼՈՎՄԱՆ ՄԷՋ ԱՍՅՆԱԻՈՐ ԳԻՐԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հ. Հոլովման մէջ անուններուն ձայնաւոր գիրերը միշտ անփոփոխ կը մնան :

Պ. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն վերջին վանկին է , էա , ոյ , է եւ ու գիրերը , երբեքնէ հոլովներուն մէջ , այսինքն՝ ուղղականէն եւ հայցականէն զատ ուրիշ հոլովներուն մէջ , կը փոխուին .

1. է կը փոխուի էի . ինչպէս՝  
Հանդէս , հանդէսի , հանդէսիւ . Հանդէսը , հանդէսից , հանդէսիւք .

Պարտեզ , պարտեզի , պարտեզիւ . Պարտեզը , պարտեզից , պարտեզիւք .

Եշ , էշոյ , էշով . Եշք , էշոց , էշովք .  
Ձէն , զէնու . Ձէնք , զէնուց , զէնուք :

2. Եա կը փոխուի եի , ինչպէս՝

Սենեակ , սենեկի , սենեկաւ . Սենեակք , սենեկաց , սենեկօք .

Մատեն , մատենի , մատենիւ . Մատենք , մատենից , մատենիւք :

Յ. ոյ կը փոխուի ուի , ինչպէս՝

Ողջոյն , ողջոյնի , ողջոյնիւ . Ողջոյնք , ողջոյնից , ողջոյնիւք .

Թոյն , թոնոյ , թոնով . Թոյնք , թոնոց , թոնովք :

Դ. է եւ ու կը փոխուին ըի (\*), ինչպէս՝

Գիծ , գըծի , գըծիւ . Գիծք , գըծից , գըծիւք .

Բոն , բընոյ , բընով . Բոնք , բընոց , բընովք .

Ինձ , ընձու . Ինձք , ընձուց , ընձուք :

ՈՒՐԻՑ ԳԻՑԵԼԻՔ

Հ. Ձայնաւորներու փոփոխութեան վրայ ուրիշ ինչ գրեցիք կայ :

Պ. 1. Իւ վերջաւորած անուններուն էւ մասնիկը խտտորնակ հոլովներուն մէջ ուի կը փոխուի , ինչպէս՝

Հովիւ , հովուի , (կարգա՝ հովվի) , հովուաւ . Հովիւք , հովուաց , հովուօք :

Թիւ , թուոյ , թուով . Թիւք , թուոց , թուովք :

2. Գեւ անունին մէջ է գիրը կը փոխուի էի , ինչպէս՝  
Գեւ , գիւի , գիւաց , գիւօք :

Յ. Աստուած բառին վերջին ու գիրը կը կորսուի . ինչպէս՝ Աստուած , աստուծոյ , աստուծով :

Դ. Եայ վերջաւորած անուններուն էայ մասնիկը էի կը փոխուի , ինչպէս՝ Փախստեայ , փախստեի , փախստեիւ . Փախստեայք , փախստեից , փախստեիւք , եւ այլն :

Բայց էայ վերջաւորած տեղացի ցուցնող անուններուն նոյն էայ մասնիկը ուի կը փոխուի , ինչպէս՝ Ա-

(\* ) Այս էը սովորաբար չի գրուիր :

սորեստանեայ, Ասորեստանայ, Ասորեստանով կամ  
էաւ : Ասոնց յօքնակիին կ'ըլլայ էայց, Ասորեստանեայ,   
Ասորեստանեայ, Ասորեստանեոք :

7. Հրահանգ

Աշակերտները հետեւեալ անունները հորովն :

Թուղթ, սէր, պատիւ, թիւ, անիւ, գրիչ, հուր,   
մատուռն, թռչուն, մատեան, ատեան, շունչ, մար-   
մին, մուկն, շուրթն, հովիւ, ջուր, պանիր, հունձ,   
պտուղ, երէց, պղինձ, դէն, կուշուճն, դալուստ,   
շէն, լոյս, յոյս, ամիս, վայրկեան, սուրբ, մեհեան,   
հանդէս, ողջոյն, էշ, մանուկ, աղջիկ, գուստր, ծիր,   
խունկ, ինձ, (հասկան), խոստումն, ուսումն, սկիզբն,   
քիրան, աշուն, գարուն, մարդիկ, ձեզուն, սենեակ,   
գլուխ, փոքրիկ, տնիկ, հանգիստ, փախուստ, թա-   
քուստ, իղձ, ունչ, ունդ, քրիստոնեայ, փախստեայ,   
աշտեայ, ծնունդ, ժողովուրդ, խորհուրդ :

8. Հրահանգ

Տունը նոր է . Եկեղեցին հին է . Շոգին ու ծուխը   
թեթեւ են . Անձրեւն ու կարկուտը ծանր են . Հոգին   
զգացող, իմացող եւ գործող է . Կինը տրտում էր . Մայ-   
րը վշտագին էր : Քոյրը զուարթ է . Մարդիկ եւ կեն-   
դանիները քալող են . Հողը խոնաւ է . Երկիրը բարե-   
բեր է . Դաշտը բերքով լեցուն է . Արտն ու պարտէզը   
պտղաբեր են . Հրեշտակները հոգի են . Ձին կրակոտ   
է . Շունը հաւատարիմ է . Վարժապետը հմուտ եւ   
փորձ է . Աշակերտները կրթեալ են . Կառավարը վարժ   
է . Էջը դանդաղ է . Նապաստակն՝ քրազ է . Քացախը   
սաստիկ եւ կծու է . Եղը լոյծ է . Կրակը թանձր է .   
Փայտը պինդ է . Քարն ու երկաթը կարծր են . Նարին-   
ջը գնդակերպ է . Սկաւառակն ու անիւը կլոր են .

Թաթը կակուղ է . Սմբակն ու կճղակը կարծր են . Լի-   
մոնը թթու է . Թեւերն ու ոտքերը շարժող են . Լե-   
զուն եւ աչքերն ասղին անդին դարձող են . Ակոսնե-   
րը հաստատ են . Պատանին հասուն է . Տղան տհաս է .   
Թռչունները թռչող են . Չորքոտանիները քալող են .   
Եղջերունն ու նապաստակն արագընթաց են . Ասիւծն   
ուժով է . Վաղրը փարատող եւ անգութ է . Ոչխարը   
հեղ է . Ուղտը հանդարտ է . Էջը համբերող է . Դա-   
ւիթ հովիւ էր եւ թագաւոր եղաւ . Հայկը դիւցազն   
էր . Արամ քաջ էր . Աստուած կարող է . Պաշտօնեայն   
հաւատարիմ է . Լեռը դժուարին է :

Զգացող, զգայուն	Լիմոն, կէրոն
Իմացող, իմաստուն	Շարժող, շարժուն
Գործող, գործուն	Ասղին անդին դարձող, յեղ-
Կենդանի, անասուն	յեղուն
Քալող, քնայուն	Ակոս, արտն, յը, արտնունք
Բարեբեր, բերբէ	Հաստատ, հաստ
Բերքով լեցուն, յոտնի	Ուժով, հզօր
Կրակոտ, ջերմանքաւ	Տհաս, խաչ
Վարժապետ, վարդապետ	Թռչուն, հա-
Կրթեալ, կերթ	Թռչող, խուլուն
Սաստիկ, բարի	Փարատող, քեշտաբէլ
Կարակ, կոքի	Անգութ, անգորոյն
Կլոր, բարբէ	



ԴԱՍ Ը.

ԱՆԿԱՆՈՆ ՀՈՒՈՎՄՈՒՆՔ

Հ. Ամէն անուն վերը յիշուած հորովմանց պէս կը   
հորովի :

Պ. Կան քանի մը շատ սովորական անուններ որոնց   
հորովմունքը բոլորովին տարբեր են :

Հ. Որո՞նք են այս անունները եւ ինչպէս կը հորովին :  
 Պ. Այս անուններն են՝ այր , գէր , հայր , յայր , էղբայր ,  
 քայր , կէն , օր , զինչ , գիւ , եւ կը հորովին հետեւեալ  
 կերպով :

	Եղ.	Յ+	Եղ.	Յ+
Ո.	Այր ,	Աբբ ,	Տէր ,	Տեաբբ ,
Ս.	Առն ,	Արանց ,	Տեառն ,	Տերանց , տեաբց
Տ.	Առն ,	Արանց ,	Տեառն ,	Տերանց , յ
Հ.	ՀԱյր ,	ՀԱբբ ,	ՀՏէր ,	ՀՏեաբբ ,
Բ.	ՅԱռնէ ,	ՅԱրանց ,	՚Տեառնէ ,	՚Տերանց ,
Գ.	Արամբ ,	Արամբբ ,	Տերամբ ,	Տերամբբ ,

	Եղ.	Յ+	Եղ.	Յ+
Ո.	Հայր ,	Հարբբ ,	Քոյր ,	Քորբբ ,
Ս.	Հօր ,	Հարց , հարանց	Քեռ ,	Քերց ,
Տ.	Հօր ,	Հարց , յ	Քեռ ,	Քերց ,
Հ.	ՀՀայր ,	ՀՀարբբ ,	ՀՔոյր ,	ՀՔորբբ ,
Բ.	՚Հօրէ ,	՚Հարց , յ	՚Քեռէ ,	՚Քերց ,
Գ.	Հարբբ ,	Հարբբբ ,	Քերբբ ,	Քերբբբ ,

	Եղ.	Յ+	Եղ.	Յ+
Ո.	Կին ,	Կանայք ,	Օր ,	Աւուրբբ ,
Ս.	Կնոջ ,	Կանանց ,	Աւուր ,	Աւուրց ,
Տ.	Կնոջ ,	Կանանց ,	Աւուր ,	Աւուրց ,
Հ.	ՀԿին ,	ՀԿանայք ,	ՀՕր ,	ՀԱւուրբբ ,
Բ.	՚Կնոջէ ,	՚Կանանց ,	ՅՕրէ ,	ՅԱւուրց ,
Գ.	Կանամբ , կը- նաւ ,	Կանամբբ ,	Աւուրբբ ,	Աւուրբբբ ,

	Եղ.	Յ+	Եղ.	Յ+
Ո.	Գիւղ ,	Գիւղբբ ,	Տիւ ,	Տիւբբ ,
Ս.	Գեղջ ,	Գիւղեց ,	Տուրնջեան ,	Տուրնջեանց ,
Տ.	Գեղջ ,	Գիւղեց ,	Տուրնջեան ,	Տուրնջեանց ,
Հ.	ՀԳիւղ ,	ՀԳիւղբբ ,	ՀՏիւ ,	ՀՏիւբբ ,
Բ.	՚Գեղջէ ,	՚Գիւղեց ,	՚Տուէ , ՚Տու- ընջեանէ ,	՚Տուրնջեանց ,
Գ.	Գիւղիւ ,	Գիւղիւբբ ,	Տուրնջեամբ ,	Տուրնջեամբբ ,

Հայրին պէս կը հորովին յայր եւ էղբայր . կնին պէս  
 կը հորովին գիւնի եւ աւուրնի :



ԴԱՍ Թ.

ՍԵՌԱԿԱՆ ՀՈՂՈՎ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հ. Սեռական հորովն ինչ կը ցուցնէ :  
 Պ. Սեռական հորովն անուան մը քով դրուելով անոր  
 որո՞ւ վերաբերելու կը ցուցնէ . զոր օրինակ՝ Պարտէզին  
 դուռը , խօսքին մէջ՝ պարտէզին սեռական հորով կը  
 ցուցնէ թէ դուռը պարտէզին կը վերաբերի կամ պար-  
 տէզին է :

Սեռական հորովը որո՞ւն (քիմին) հարցման պատաս-  
 խան է . որո՞ւն դուռը . - Պարտէզին :

Հ. Սեռական հորովն ինչ կը կոչուի :  
 Պ. Սեռական հորովն հայերէն յարկացեալ կը կոչուի ,  
 անոր վերաբերեալ բանն ալ յարկացեալ կ'ըսուի :

Հ. Յատկացուցիչը յատկացեալէն առանջ թէ ետքը  
 կը դրուի :

Պ. Գրաբարին մէջ յատկացուցիչը աստիճանաբար յատկաց-  
 եալէն ետքը կը դրուի , թէպէտ աշխարհաբարին մէջ ա-  
 սոր հակառակն է , զոր օրինակ :

Աշխարհ.

Գրաբ.

Պարտէզին դուռը . Դուռն պարտիզին .  
 Թագաւորին եղբայրը . Եղբայր թագաւորին .

Հ. Գրաբարին մէջ յօղը (ն գիրը) յատկացուցչին թէ  
 յատկացելոյն վրայ կը դրուի :

Պ. 1. Գրաբարին մէջ յօղը յատկացուցչին վրայ կը  
 դրուի . աշխարհաբարին մէջ՝ երկուքին վրայ ալ , զոր  
 օրինակ .

Աշխարհ.

Գրաբ.

Թագաւորին որդին .

Որդի թագաւորին .

Մարդարէին խօսքը .

Բան մարդարէին .

2. Բայց եթէ յատկացուցիչը յարուստ անուն է , գրաբարին մէջ յօդը յարուստեան իբրև անուն է , աշխարհաբարին մէջ՝ երկուքին վրայ ալ , ինչպէս .

Աշխարհ.

Գրաբ.

Հայերուն պատերազմը . Պատերազմն Հայոց .  
Դաւթին թագաւորութիւնը . Թագաւորութիւնն Դաւթի .

5. Գրաբարին մէջ ոչ յատկացուցչին եւ ոչ յատկացեւոյն վրայ յօդ կը դրուի , եթէ երկուքն ալ յօդ անող անուններ չեն , զոր օրինակ երբ «Եւ» կը ցուցնեն (տես Դաս Դ.) կամ բնութեան մէջ միակ գտնուող բանի մը անուն են , ինչպէս՝ Աստուած , Արեգակն , Լուսին , Երկիր , եւն . իսկ աշխարհաբարին մէջ երկուքին վրայ ալ կը դրուի յօդ , զոր օրինակ .

Աշխարհ.

Գրաբ.

Աստուծոյ դատաստանները . Դատաստանը Աստուծոյ .  
Արեւին ճառագայթները . ճառագայթք արեգական .  
Լուսնին լոյսը . Լոյս լուսնի .  
Երկրին շուքը . Մտուեր երկրի .  
Մարդուն հոգին . Հոգի մարդոյ (առն մարդու)  
Իպրոցներուն տղաքը . Մանկունք դպրոցաց (առն դպրոցի) .

9. Հրահանգ.

ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՅԶՈՎ

Պարտէզին դուռը բաց է . Տանը պատուհանները գոց են . Երկրին բնակիչները վայրենի էին . Ծառին պտուղը գեղեցիկ էր . Արեւին լոյսը պայծառ է . Լուսնին

լոյսն աղօտ է . Տղուն հայրը ծեր է . Թագաւորին զօրքերը հաւատարիմ են . Տէրոջը կածքն այս է . Գրոջը տունը մօտ է . Կնոջը որդիքը ստահակ են . Մարդուն խօսքերը խիստ էին . Հօրը բարկութիւնը սաստիկ էր . Օրուան հանդէսը մեծ էր . Յորեկուան ժամերը կարճ են . Գիշերուան ժամերը երկայն են . Կէս օրուան տաքըն աւելի է . Գարնան օրերը զով են . Ամառուան օրերը տաք են . Գեղին բնակիչները մարդասէր են . Թագաւորին հրամանը ստիպողական էր . Քաղքին դուռները պղնձէ էին . Գետին ջուրերը քաղցր են . Մերին խօսքերը խելքով են . Աստուծոյ քաղաքներուն իշխաններն են . Մովսէս ձուկերը տեսակ տեսակ են . Գինիին կարասը ծակ է . Եղին սրուակը լեցուն է . Կաթին ամանները պարօպ են . Տեղւոյն դիրքը բարձր է . Որդիներուն պարծանքը հայրերն են . Մայրերը աղջիկներուն պաշտպանն են . Արդարներուն հողիները երանելի են . Հոսմայեցեոց պետութիւնն անազին էր . Իսրայէլացեոց աղզն ընտրեալ էր . Խրատին խօսքերն աղղու էին . Հայկին որդիներն ու թոռները քաջ էին . Տրդատին պատմութիւնը զարմանալի է . Հովսիսիմէին ընկերները կուսանք էին . Ձեռուներուն եւ ոտուներուն մատուցները հինգ հինգ են . Այսօր ուրախութեան ասոն է . Ձիթ ենին հաշտութեան նշան է . Այս անկուած քաղաքը քաջութեան յիշատակ է . Շաբաթը Հրէից հանգստութեան օրն էր . Անոր արիւնին հեղուցը փրկութիւն եղաւ . Աստղերուն թիւը անհամար է . Կայսրին իշխանութիւնը ատելի էր . Աղբիւրին ջուրը դառն էր . Անիկա անկիւնի քար եղաւ . Այրերուն եւ կիներուն թիւը շատ էր .

Գոց , Գեղեւ  
Արեւ , արեգակն  
Թագաւոր , արքայ  
Մօտ , Գեղ  
Յորեկ , Գեղ  
Կէս օր , Գեղեւոյ , Գեղ

Տաք (գոյ), որոյ	Չեղք, յեւն, յեւնն յք. յեւն,
Աւելի, աւաւել	յեւսոյ
Ստիպողական, բռնան	Ոտք, որն, որին. յք. որտ
Պղնձէ, պղնձ	որից
Խելքով, հանճարեղ	Մատ, մարն, յք. մարանտ
Ասոնք, սոտ	Նշան, նշանակ
Տեսակ տեսակ, ազգի ազգի	Տնկուած քար, արշա
Եղ, էւղ կամ էւղ, էւղոյ	Հանդատութիւն, հանգիստ,
Կաթ, կաթն, կաթին	հանգստեան
Պարապ, ըստոր	Բար, վե՛:
Թոռ, ըստն, յք. ըստանտ	

ԼՈՒԾՈՒԾ

Բաց է դռնան պարտիզն. Ե, բայ էակ. սնմ. ներկ. եզ. գ. գէմք: Ո՞վ է — Դուռը. Դռնան՝ գոյ. ան. ուղղ. հոլ. տէր բայի էին: Որո՞նք կամ ինչ բանին դուռը — Պարտիզին. Պարտիզն գոյ. ան. սեռ. հոլ. յատկացուցիչ դռնանին: Դուռն է՝ ինչպիսի — Բաց, քաց ամ. ստորագելի դռնանին:

10. Հրահանգ

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ ՅԱՏԿԱՅՈՒՅԻՉ

Յովհաննէսին եղբայրն իմաստուն է. Արչակին որդին չար է. Պետրոսին զոքանչը հիւանդ էր. Յովսեփին աւները ծեր է. Սաուղին որդին կաղ էր. Դաւիթին զօրավարները քաջ եւ հաւատարիմ էին. Դեկոսի կեանքը կարճ եղաւ. Յակոբին որդիքը նախանձոտ էին. Երուսաղեմին պարիսպներն ամուր էին. Հայոց երկիրը պտղաբեր է. Հնդկաց լեռները բարձր են. Տրդատայ թագաւորութիւնը երկար եղաւ. Եփրատայ ջուրերը յորդ են. Սողոմի բնակիչներն անզգամ էին. Աբրա-

համին ծառաները հաւատարիմ էին. Արեգական ճառագայթներն այրող են. Լուսնին լոյսն աղօտ է. Աստուծոյ դատաստաններն արդար են. Հովին զօրութիւնը ուժով է. Ծովին ալիքներն ահագին են. Լոյսին բնութիւնը բարակ է. Արդարներուն ճամբաները շիտակ են. Առիւծին մռնչիւնը սոսկալի է. Աստուծոյ խօսքը ճշմարիտ է. Երկրիս կողմերը չորս են. արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ. Ծովին ջուրը աղի է. Լեռներուն գլուխները բարձր են. Երկրիս անդունդները խորունկ են. Աստղերուն հեռաւորութիւնն անբաւ է. Տիեզերքին ընդարձակութիւնն անհուն է. Անձրեւին, ձիւնին եւ հովերուն օգուտը մեծ է. Արեւին լոյսն ու տաքութիւնը շատ կարեւոր են:

Լեռ, լեռն. յք. լեռնտ	Շիտակ, ուղիւ
լեռանց	Սոսկալի, սկիւղ
Այրող, կեղեղ	Խորունկ, խոր
Հով, հողմ, հողմոյ	Տիեզերք, որէղեքտ, բաց
Ուժով, բռնան	Տաքութիւն, ջերմութիւն
Բարակ, նորք	Շատ (մկ), յոյժ:



ԴԱՍ Ժ.

ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ. Վերը (Դաս Բ.) ըսիր թէ ածական կ'ըսուի անուն մը որ իրի մը որդիսութիւնը կամ ինչպէս ըլլաւ կը ցուցնէ. ամէն ածական որպիսութիւն կը ցուցնէ:

Պ. 1. Իրի մը որպիսութիւնը ցուցնող ածականներուն որակաւ ածական կ'ըսուի. օր. քոյր, խնամարան, որդեգր, բարե, շար, սպիտակ, սեռ. որակական ածականներ են: 2. Բայց կան ըստակաւ ածականներ որ բանի մը ընդ կամ քանի հաս ըլլաւ կը ցուցնեն, ինչպէս են օր. երկու, երեք, որան, հարեւր, հաշար, եւ այլն:

Ծ. Կան տեսակ մը անականներ ալ որ քանի մը հարմար  
ըլլալը կը ցուցնեն, ինչպէս են իճ, Կ, Կէր, յէր, ի-ր,  
որ հարցական անական կը կոչուին :

4. Կան ցոյցական կոչուած անականներ որ են, այս  
այր, այն, սոյն, դոյն, նոյն :

Ծ. Կան տեսակ մը անականներ ալ որ անորոշ անա-  
կան կը կոչուին, եւ ասոնք են՝ ասինքն, այլ, ի-ր-  
տանիւր, զիս, ոմն, ո՛ր, իմն, ինչ :

Ծ. Կան վերջապէս՝ հարցական կոչուած անականներ,  
ասոնք են՝ ո՞վ, ո՞ր, ո՞րք եւ զի՞նչ :

Հ. Ուրեմն քանի տեսակ անական կայ :

Պ. Վեց տեսակ . 1. Որակական, 2. Թուական, 3.  
Ստացական, 4. Յուցական 5. Անորոշ եւ 6. Հարցական :

2. ԹՈՒԱԿԱՆ ԱՄԱԿԱՆՔ

Հ. Թուական անականները քանի տեսակ են :

Պ. Թուական անականները երեք տեսակ են՝ 1. Բացար-  
յայ, 2. Դասական եւ 3. Անշնորհական :

Հ. Բացարձակ թուական որոնք են, եւ ինչպէս կը  
հորովին :

Պ. 1. Բացարձակ թուականներն են՝ յի, երկու, երեք, եւն,  
մինչեւ հաշար, քէր. եւ կը հորովին անուններուն վե-  
րը դրուած հորովմանց պէս :

Հ. Մի ինչպէս կը հորովի :

Պ. Մի եղանակի միայն կրնայ հորովիլ, այսպէս՝

Ո. Մի,	Հ. շՄի,
Ս. Մի-ր,	Բ. ՚Մի-րք,
Տ. Մի-րք,	Գ. Մի-րք,

Հ. Երկու, երեք, չորս ինչպէս կը հորովին :

Պ. Երկու, երեք, չորս՝ յոքնակի միայն ունին եւ կը  
հորովին այսպէս .

Ո. Երկու,	Երեք,	Չորս,
Ս. Երկու-ր,	Երեք-ք,	Չորս-ք,

Տ. Երկու-րք,	Երեք-ք,	Չորս-ք,
Հ. շԵրկու-րք,	շԵրեք-ք,	շՉորս-ք,
Բ. յԵրկու-րք,	յԵրեք-ք,	յՉորս-ք,
Գ. Երկու-րք,	Երեք-ք,	Չորս-ք,

Հ. Հինգ եւ ուրիշ թուականք ինչպէս կը հորովին :

Պ. Հինգէն անդին բոլոր թուական անականք թէ ե-  
զակի եւ թէ յոքնակի ունին, եւ հետեւեալ կերպով  
կը հորովին .

	ԵՆ	Յ+	ԵՆ	Յ+
Ո.	Հինգ,	Հինգ+	Վեց,	Վեցք,
Ս.	Հինգէ,	Հինգէ+	Վեցէ,	Վեցէք,
Տ.	Հինգի,	Հինգի+	Վեցի,	Վեցիք,
Հ.	շՀինգ,	շՀինգ+	շՎեց,	շՎեցք,
Բ.	յՀինգ,	յՀինգ+	յՎեց,	յՎեցք,
Գ.	Հինգի-	Հինգի+	Վեցի-	Վեցիք+

Հ. Վեցէն անդին մնացեալ թուականք ինչպէս կը  
հորովին :

Պ. Վեցէն անդին մնացեալ թուականք հետեւեալ  
կերպով կը հորովին .

	ԵԳ	Յ+	ԵՆ	Յ+
Ո.	Եօթն,	Եօթն+	Ութ,	Ութ+
Ս.	Եօթն-ր,	Եօթն-րք,	Ութէ,	Ութէք,
Տ.	Եօթնի,	Եօթնիք,	Ութի,	Ութիք,
Հ.	շԵօթն,	շԵօթն+	շՈւթ,	շՈւթք,
Բ.	յԵօթն-ր,	յԵօթն-րք,	յՈւթէ,	յՈւթէք,
Գ.	Եօթնի-	Եօթնիք+	Ութի-	Ութիք+

	ԵՆ	Յ+	ԵԳ	Յ+
Ո.	Ինն,	Ինն+	Տասն,	Տասն+
Ս.	Իննէ,	Իննէք,	Տասնէ,	Տասնէք,
Տ.	Իննի,	Իննիք,	Տասնի,	Տասնիք,
Հ.	շԻնն,	շԻնն+	շՏասն,	շՏասնք,
Բ.	յԻննէ,	յԻննէք,	յՏասնէ,	յՏասնէք,
Գ.	Իննի-	Իննիք+	Տասնի-	Տասնիք+

Եղակի

- Ո. Մետասան ,
- Ս. Մետասանի ,
- Տ. Մետասանի ,
- Հ. շ Մետասան ,
- Բ. ՚ Մետասանի ,
- Պ. Մետասանի- ,

Յոճակի

- Մետասան+ ,
- Մետասանի+ ,
- Մետասանի+ ,
- շ Մետասան- ,
- ՚ Մետասանի+ ,
- Մետասանի-+ ,

Այսպէս կը հոլովին նաեւ երկրորդական , երէկորդական , շ-բերդորդական , հնգերդորդական , վերջորդական :

Եղակի

- Ո. Եօթնեւտասան ,
- Ս. Եօթնեւտասանի ,
- Տ. Եօթնեւտասանի ,
- Հ. շ Եօթնեւտասան ,
- Բ. ՚ Եօթնեւտասանի ,
- Պ. Եօթնեւտասանի- ,

Յոճակի

- Եօթնեւտասան+ ,
- Եօթնեւտասանի+ ,
- Եօթնեւտասանի+ ,
- շ Եօթնեւտասան- ,
- ՚ Եօթնեւտասանի+ ,
- Եօթնեւտասանի-+ ,

Այսպէս կը հոլովին Ութերորդական եւ Իններորդական :

Եղակի

- |    |           |            |
|----|-----------|------------|
| Ո. | Քսան ,    | Քսանի ,    |
| Ս. | Քսանի ,   | Քսանի+ ,   |
| Տ. | Քսանի ,   | Քսանի+ ,   |
| Հ. | շ Քսան ,  | շ Քսան- ,  |
| Բ. | ՚ Քսանի , | ՚ Քսանի+ , |
| Պ. | Քսանի- ,  | Քսանի-+ ,  |

Եղակի

- |             |              |
|-------------|--------------|
| Յոճ.        | Յոճ.         |
| Հարիւր ,    | Հարիւր+ ,    |
| Հարիւր- ,   | Հարիւր-+ ,   |
| Հարիւր- ,   | Հարիւր-+ ,   |
| շ Հարիւր ,  | շ Հարիւր- ,  |
| ՚ Հարիւր- , | ՚ Հարիւր-+ , |
| Հարիւր- ,   | Հարիւր-+ ,   |

Երէկորդական , Կարասորդական , Եւզն , մինչեւ Իննասան կը հոլովին Կարասիւն պէս :

Երկերկեր , երեկերկեր , Եւզն , մինչեւ Իննհարիւր կը հոլովին հարիւրիւն պէս :

Եղակի

- |    |            |            |
|----|------------|------------|
| Ո. | Հազար ,    | Հազար+ ,   |
| Ս. | Հազարի ,   | Հազար- ,   |
| Տ. | Հազարի ,   | Հազար- ,   |
| Հ. | շ Հազար ,  | շ Հազար- , |
| Բ. | ՚ Հազարի , | ՚ Հազար- , |
| Պ. | Հազար- ,   | Հազար+ ,   |

Եղակի

- |           |            |
|-----------|------------|
| Յոճ.      | Յոճ.       |
| Բիւր ,    | Բիւր+ ,    |
| Բիւր- ,   | Բիւր-+ ,   |
| Բիւր- ,   | Բիւր-+ ,   |
| ՜ Բիւր ,  | ՜ Բիւր- ,  |
| ՚ Բիւրի , | ՚ Բիւր-+ , |
| Բիւր- ,   | Բիւր-+ ,   |

Հ. Կասական թուականք որոճնք են , եւ ինչպէս կը հոլովին :

Պ. 2. Կասակն թուականք դոյականին կարէլ կամ ուրիշներուն մէջ Կասակնք ըլլալը կը ցուցնեն .

- |                         |                    |
|-------------------------|--------------------|
| Առաջին կամ առաջներորդ , | Եօթնեւտասաներորդ , |
| Երկրորդ ,               | Ութեւտասաներորդ ,  |
| Երրորդ ,                | Իննեւտասաներորդ ,  |
| Չորրորդ ,               | Քսաներորդ ,        |
| Հինգերորդ ,             | Երեսներորդ .       |
| Վեցերորդ ,              | Քառասներորդ ,      |
| Եօթներորդ ,             | Յիսներորդ ,        |
| Ութերորդ ,              | Վաթմաներորդ ,      |
| Իններորդ ,              | Եօթանասներորդ ,    |
| Տասներորդ ,             | Ութաներորդ ,       |
| Մետասաներորդ ,          | Իննաներորդ ,       |
| Երկոտասաներորդ ,        | Հարիւրերորդ ,      |
| Երեքտասաներորդ ,        | Երկերիւրերորդ ,    |
| Չորեքտասաներորդ ,       | Հազարերորդ ,       |
| Հնգետասաներորդ ,        | Բիւրերորդ ,        |
| Վեչտասաներորդ ,         | Վերջին :           |

Ասոնք , բաց Կասակն եւ վերջին բառերէն , կը հոլովին , Կասակն բառին պէս . զոր օրինակ ,

Եղակի

- |    |                            |               |
|----|----------------------------|---------------|
| Ո. | Երկրորդ .                  | Երկրորդ+ .    |
| Ս. | Երկրորդի .                 | Երկրորդ- ,    |
| Տ. | Երկրորդի . կամ երկրորդ-+ , | Երկրորդ-+ .   |
| Հ. | ՜ Երկրորդ ,                | ՜ Երկրորդ- ,  |
| Բ. | ՚ Երկրորդի ,               | ՚ Երկրորդ-+ . |
| Պ. | Երկրորդ- ,                 | Երկրորդ+ .    |

Հ. Ասոնք եւ վերջին ինչպէս կը հոլովին :  
Պ. Ասոնք կը հոլովին Գեթ բառին պէս ,

Եզակի

Յոթնակի

Ո.	Առաջին ,	Առաջին ,
Ս.	Առաջին ,	Առաջին ,
Տ.	Առաջին , կամ առաջին ,	Առաջին ,
Հ.	չԱռաջին ,	չԱռաջին ,
Բ.	յԱռաջին , կամ յԱռաջին ,	յԱռաջին ,
Գ.	Առաջին ,	Առաջին ,

Հ. Անձներական թուականները որոնք են , եւ ինչպէս կը հոլովին :

Պ. Անձներական կը կոչուին եւին կամ եւեան վերջաւորած թուականները որ այս ինչ թուոյն աֆին ալ կը նշանակեն , ինչպէս՝ Ամենքին , աֆին ալ , երկօքին , երկուսն ալ , եւն :

Ասոնք յօքնակի միայն կը հոլովին հետեւեալ կերպով .

Ո.	Երկուսն	կամ	երկուսն ,
Ս.	երկուսն ,	»	երկուսն ,
Տ.	երկուսն ,	»	»
Հ.	չերկուսն	»	չերկուսն ,
Բ.	յերկուսն ,	»	յերկուսն ,
Գ.	երկուսն ,		

Յ. ՍՏԱՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ստացական ածականներն ինչպէս կը հոլովին :

Պ. Ստացական ածականներն , է՛, + , ղեր , յեր , էր , կը հոլովին թեք բառին պէս , քիչ տարբերութեամբ այսպէս :

Եզակի	Յոթնակի	
Ո.	իմ ,	իմ ,
Ս.	իմ ,	իմ ,
Տ.	իմ ,	իմ ,
Հ.	չիմ ,	չիմ ,
Բ.	յիմ ,	յիմ ,
Գ.	իմ ,	իմ ,

Այսպէս կը հոլովին + , ղեր , յեր , էր :

4. ՅՈՒՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Յուցական ածականք ինչպէս կը հոլովին :

Պ. Յուցական ածականք այ , այր , այն , սոյն , որոյն , նոյն , կը հոլովին այսպէս :

Եզակի

Յոթնակի

Ո.	Այ ,	Այս , այսու ,
Ս.	Այր ,	Այս , այսու ,
Տ.	Այր ,	Այս , այսու ,
Հ.	չԱյ ,	չԱյս , չայսու ,
Բ.	յԱյր ,	յԱյս , յայսու ,
Գ.	Այս ,	Այս , այսու ,

Այսպէս կը հոլովին նաեւ այր , այն :

Եզակի

Յոթնակի

Ո.	Սոյն ,	Սոյն ,
Ս.	Սորն ,	Սոյն , սոյնու ,
Տ.	Սոյն ,	Սոյն , սոյնու ,
Հ.	չՍոյն ,	չՍոյն ,
Բ.	յՍոյն ,	յՍոյն ,
Գ.	Սոյն , սոյն ,	Սոյն , սոյնու ,

Այսպէս կը հոլովին նաեւ որոյն , նոյն :

Յ. ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Անորոշ ածականներն աֆինայն , այլ , միս , էրսուսնիւր , ինչպէս կը հոլովին :

Պ. Անորոշ ածականներն աֆինայն , այլ , հետեւեալ կերպով կը հոլովին .

Եզակի	Յոթնակի		
Ո.	Ամենայն ,	Այլ ,	Այլ ,
Ս.	Ամենայն ,	Այլ ,	Այլ ,
Տ.	Ամենայն ,	Այլ , այլու ,	Այլ ,
Հ.	չԱմենայն ,	չԱյլ ,	չԱյլ ,
Բ.	յԱմենայն ,	յԱյլ ,	յԱյլ ,
Գ.	Ամենայն ,	Այլ ,	Այլ ,

Ա. Բնայն ածականին յոքնակին սովորական չէ :  
 Մ. Եւ, Եւրոպայն կը հոլովին այլին պէս :  
 Հ. Ո՞ք, ու, Եւ եւ Եւ ինչպէս կը հոլովին :  
 Պ. Ո՞ք, ու, Եւ եւ Եւ կը հոլովին հետեւեալ կերպով :

	Եւ	Եւ	Յո+	Եւ Յո
Ո.	Ո՞ք,	Ո.ք,	Ոմանք,	Իմն, ինչ,
Ս.	Ուրումն,	Ուրումք,	Ոմանց,	Իրէք,
Տ.	Ումեմն,	Ումեք,	Ոմանց,	Իմէք,
Հ.	ՇՈ՞ք,	ՇՈ.ք,	ՇՈմանս,	ՇԻմն, ՇԻնչ,
Բ.	ՉՈւմեմնէ,	ՉՈւմեքէ,	ՉՈմանց,	ՉԻմէքէ,
Գ.	Ոմամք,	Ոմամք,	Ոմամքք,	Իւէք,

6. ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Հ. Ո՞ք, ո՞, շէնչ հարցականներն ինչպէս կը հոլովին :  
 Պ. Ո՞ք, ո՞, շէնչ հարցականները կը հոլովին հետեւեալ կերպով :

	Եւ	Յո+	Եւ	Յո+
Ո.	Ո՞ք, ո՞,	Ո՞ք,	Ո՞ք,	Ո՞ք,
Ս.	Ո՞ք,	Ո՞ք,	Ո՞ք,	Ո՞ք,
Տ.	Ո՞ք,	Ո՞ք,	Ո՞ք,	Ո՞ք,
Հ.	ՇՈ՞ք, ո՞,	ՇՈ՞ք,	ՇՈ՞ք,	ՇՈ՞ք,
Բ.	ՉՈւմեմնէ,	ՉՈ՞ք,	ՉՈւմեքէ,	ՉՈւմեքէ,
Գ.	Ումեք,	Ումեք,	Ումեք,	Ումեք,

ԳԱՍ ՓԱ.

ԱԾԱԿԱՆԱՅ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Հ. Ածականը գոյականէն առանձ թէ ետքը կը դրուի, եւ անոր հետ ինչպէս կը համաձայնի :  
 Պ. Ածականն աշխարհաբարի մէջ գոյականէն առանձ կը դրուի. գրաբարի մէջ սովորաբար ետքը կը դրուի, եւ գոյականին հետ ինչպէս կը համաձայնի. զոր

օրինակ. Իմաստուն որդի, Որդի Եւստիան կը հոլովի այսպէս.

	Եւ	Յո+
Ո.	Որդի իմաստուն,	Որդիք իմաստունք,
Ս.	Որդւոյ իմաստնոյ,	Որդւոց իմաստնոց,
Տ.	Որդւոց իմաստնոց,	Որդիս իմաստունս,
Հ.	ՇՈրդի իմաստուն,	ՇՈրդիս իմաստունս,
Բ.	ՉՈրդւոյ իմաստնոյ,	ՉՈրդւոց իմաստնոց,
Գ.	Որդւով իմաստնով,	Որդւովք իմաստնովք,

11. Հրահանգ

ԳՈՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Խարերայ մարդը խորշելի է. Հնազանդ որդին սիրելի է. Վատ զինուորը անարդ է. Չափաւոր աշխատութիւնը օգտակար է. Շատ հարստութիւնը վտանգաւոր է. Սաստիկ բարկութիւնը վնասակար է. Մազերը ճիւղկած մարդը պատկառելի է. Արդար օրէնքը մեծարոյ է. Խօսք մտիկ չընող աշակերտը պատժելի է. Խօսք խառնող մարդը անարդ է. Համատարած ծովը հնազանդ է. Մատակ առիւծը կատաղի է. Գիշակեր թռչունները յափշտակող են. Իմ մէկ հատիկ աղջիկս հոս է. Քու աստուածավախ մայրդ հիւանդ է. Վախկոտ զինուորը վնասակար է. Մեծ որդին խելացի է. Խելօք տղան սիրելի է. Պատիկ եղբայրս խելացի է. Չուխայէ վերարկուն պատուած է. Վերի սենեակը մութ է. Ներսի սրահը ընդարձակ է. Անմարդի տեղերը վտանգաւոր են. Մեր նոր տունը շատ հանգիստ է. Խօսք մտիկ ընող տղան յառաջադէմ է. Պարագ խօսքերն ինչ են. Անտիկ լեռները մեր ապաւէնն են. Մովզդերեայ երկիրը բարեօք է. Հասուն պտուղներն ախորժելի են, անասներն՝ անախորժ. Երկայն ճամբան խորտուբորա է :

Անարգ , խոտան Խոհեմ , դգն  
 Չափաւոր , համեայր Չուխայէ , ասոտի  
 Հարստութիւն , մեծութիւն Պատուտած , սոսոր սոսոր սոսոր  
 Բարկութիւն , ցասոմն Վերի , վերն  
 Մաղերը ճերմկած , ակնոր Ներսի , ներքն  
 Խօսք մտիկ չընող , անասայր Անմարդի , ամայէ  
 Խօսք խառնող , փոս Տեղ , փեղէ  
 Աղջիկ (զաւակ) , դոսայր Շատ , յոյժ  
 Յափշտակող , յափշտակիչ Հանգիստ , անդորր  
 Մէկ հատիկ , մոմօր Խօսք մտիկ ընող , հլու  
 Հոս , ասայ Պարսպ , անփէ  
 Աստուածազար , երկնազած Խօսք , քան  
 Վախկոտ , երկնայր Ի՞նչ , զե՞նչ  
 Մեծ (որդի) , երեց Անառիկ , ամուր  
 Խելացի , հանճարեղ Բարէօդ , հոգաստան  
 Խելօք , հոսովարժ Տհաս , խոյ  
 Տղայ , մոմնի Խորտուբորա , դժոսարէն  
 Պզտիկ (եղբայր) , կրփեբ

ԼՈՒԾՈՒՄ

Խաբեբայ մարդը խորշելի է . Խորշելի է այր խաբեբայ :  
 Է . էակ . բայ . սահմ . ներկ . եզ . Գ . դէմ . — Ո՞վ է :  
 — Խաբեբայ մարդը , այր խաբեբայ . մարդը , այր՝ տէր  
 բայի է . Խաբեբայ ածական է եւ մարդուն որպիսուն  
 թիւնը կը ցուցնէ : — Խաբեբայ մարդը է ինչ . — Խոր-  
 շելի է . Խորշելի՛ ստորոգելի է խաբեբայ մարդուն :

Հ. Ածականը գրաբարին մէջ գոյականէն առաջ չի  
 կրնար դրուիլ :

Պ. Կրնայ դրուիլ , եւ անատեն անփոփոխ կը մնայ , եւ  
 թէ քաղաքանի է , իսկ եթէ մեղանի է , առաջ դրոսելով  
 աւ կրնայ համայնիլ . զոր օրինակ .

Բաշմալանի ած . առաջ Մեղանի ած . առաջ  
 դրոսած դրոսած  
 Իմաստուն որդի , Քաջ որդի ,  
 Իմաստուն որդւոյ , Քաջի որդւոյ ,  
 Ղիմաստուն որդի , Ղիքաջ որդի ,  
 յիմաստուն որդւոյ , Ի՛քաջէ որդւոյ ,  
 Իմաստուն որդւով , Քաջիւ որդւով :

Հ. Թուական ածականը ինչպէս կը համաձայնին գո-  
 յականին հետ :

Պ. Թուական ածականը գոյականէն թէ առաջ եւ թէ  
 ետք կրնան դրուիլ , եւ անոր հետ մէկփեղ կը համայն-  
 յին , բայց յափնիի փոյական կ'ուղեն , բայց Ի՛նչն , որ  
 միշտ եղակի գոյական կ'ուղէ , զոր օրինակ .

- Ո. Այր մի , Ի՛նչ Մե այր ,
- Ս. Առն միջ , միջ , յ Միջ առն ,
- Տ. Առն միում , յ Միում առն ,
- Հ. ՂԱյր մի , յ ՂԱյր այր ,
- Բ. յ Առնէ միջէ , յ Միջէ առնէ ,
- Գ. Արամբ միով , յ Միով արամբ ,
- Ո. Արք երկու , երեք , չորք , հինգ (ու հինգք) , վեց , եօթն .
- Ս. Արանց երկուց , երեց , չորեց , հնգեց , վեցեց , եօթանց .
- Տ. Արանց երկուց , երեց , չորեց , հնգեց , վեցեց , եօթանց .
- Հ. ՂԱրս երկուս , երես , չորս , հինգ (ու հինգս) , վեց , եօթն .
- Բ. յ Արանց երկուց , երեց , չորեց , հնգեց , վեցեց , եօթանց .
- Գ. Արամբք երկուք , երեքք , չորքք , հնգքք , վեցքք , եօթամբքք .
- Ո. Երկու , երեք , չորք , հինգ , վեց , եօթն , արք ,
- Ս. Երկուց , երեց , չորեց , հնգեց , վեցեց , եօթանց արանց ,
- Տ. Երկուց , երեց , չորեց , հնգեց , վեցեց , եօթանց արանց ,
- Հ. ՂԵրկուս , ՂԵրես , ՂՉորս , ՂՀինգ , ՂՎեց , ՂԷօթն արս ,
- Բ. յԵրկուց , յԵրեց , յՉորեց , յՀնգեց , յՎեցեց , յԷօթանց արանց ,
- Գ. Երկուք , երեքք , չորքք , հնգքք , վեցքք , եօթամբքք արամբքք .

12. Հրահանգ

ԳՈՅԱԿԱՆ՝ ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ  
 Երեք որդիներու հայր եմ . Մէկ մարդու որդիներ ենք .

Այսօր քառասուն մանկանց տօն է . Հինգ մարդու բա-  
 փին էր . Երկու եղբայրներու ժառանգութիւն է . Տաս-  
 ուերկու որդւոց հայր էր . Հոն բիւր զօրաց բանակ  
 կար . Տասը ծառայի տէր էինք . Եօթը քաղքի իշխան  
 էր . Երեք մարդով եկաւ . Չորս սպասաւորօք գացին .  
 Տասը ընկերներով ինկաւ . Չորս կողմանէ վազեցին .  
 Յիսուն մղոն գացին . Չուրը քառասուն կանգուն բարձ-  
 րացաւ . Երեսուն օր ետքը տեսանք . Հինգ հազար մարդ  
 կերակրեց . Երկու հարիւր մարդով եկաւ մեր վրայ .  
 Վեց մարդ սպաննեցին . Հոն տասն արմաւենիներ կա-  
 յին . Բանով մը պակաս եմ . Անիկայ ութսուն տարուան  
 էր . Առատութեան եօթը տարիներէն ետքը՝ եօթը տա-  
 րի սով եղաւ . Տարւոյն մէջ տասուերկու ամիս կայ .  
 Երեք որդիքն ալ մէկ օրուան մէջ մեռան . Տասնումէկ  
 աշակերտներուն երեւցաւ . Այս են տասուերկու մար-  
 քարէից անունները . Ահա չորս մարդարէներուն գիր-  
 քերը . Երկրի չորս ծայրերէն պիտի գան . Երկու աւա-  
 զակներու մէջտեղ խաչուեցաւ . Եօթանասուն ծերե-  
 րու ժողով էր . Երկրորդ ամսոյն վերջանալու ատենը .  
 Վեցերորդ տարւոյն լրացած ատենը . Առաջին տղուն  
 անունն ինչ էր . Առաջին տղուն անունը Արշակ էր :

Մարդ , այր	Սպաննեցին , սպանին
Կար , էր	Կային , էին
Հոն , ուր	Մէկ բանով , մէկ է-է+
Եկաւ , եկն	Տարի , տ
Գացին , գնացին	Անիկա , նա ,
Ինկաւ , անկաւ	Տարւոյն մէջ , 'ի որսորդ
Կողմ , կողմն , կողման	Մէկ օրուան մէջ , 'ի մեռա-
Վազեցին , ընթացան	ստոր
Ետքը , յետ (սեռականով)	Երեքն . . . ալ , երեքին
Կերակրեց , կերակրեաց	Երեւցաւ , երեւցաւ
Մեր վրայ , 'ի վերայ մեր	Գիրք , հարեան

Մայր , շահ	Վերջանալու ատենը , 'ի ի-
Պիտի գան , էկեացին	որսել
Մէջտեղ , 'ի մէջ	Լրացած ատենը , 'ի լրանալ
Խաչուեցաւ , խաչեցաւ	Տղայ , հանուկ

ԼՈՒԾՈՒՄ

Երեք որդիներու հայր եմ . Հայր եմ որսորդ երեց . Եմ  
 բոյ էակ . սհմ . ներկ . եզ . Ա . դէմ : Ո՞վ է . — Ես եմ ,  
 ես էակ . դեր . Ա . դէմ , եզ . ուղղ . տէր բայի եմ ին : Ես  
 եմ , ինչ . — Հայր . հայր գոյ . ան . եզ . ուղ . ստորոգելի  
 ես ին : Ես եմ հայր , որո՞ւ . — Որսորդ երեց . որսորդ գոյ .  
 ան . յք . սեռ . յատկացուցիչ հայրին , երեց թուակ . ածա-  
 կան որդին :

Հ . Ստացական ածականք ինչպէս կը համաձայնին ի-  
 րենց գոյականներուն հետ :

Պ . Սրբապետն ածականք գոյականէն թէ առաջ եւ  
 թէ ետքը դրուելով անոր հետ կը համաձայնին ինչ-  
 եւ հարկով , զոր օրինակ .

	Եզակէ	Յոյնակէ
Ո .	Տուն իմ ,	Տունք իմ (ու իմք)
Ս .	Տան իմոյ ,	Տանց իմոց ,
Տ .	Տան իմում ,	Տանց իմոց ,
Հ .	Շուն իմ ,	Շունս իմ (ու իմս)
Բ .	'ի Տանէ իմմէ ,	'ի Տանց իմոց ,
Գ .	Տամբ իմով ,	Տամբք իմովք ,

	Եզակէ	Յոյնակէ
Ո .	Իմ տուն ,	Իմ տունք ,
Ս .	Իմոյ տան ,	Իմոց տանց ,
Տ .	Իմում տան ,	Իմոց տանց ,
Հ .	Շամ տուն ,	Շամ տունս ,
Բ .	'իմմէ տանէ ,	'իմոց տանց ,
Գ .	Իմով տամբ ,	Իմովք տամբք :



ուղղ. տէր բայի էին . է՛ ստացական ածական արհին :  
Տուն իմ է է՞նչ . — Մէ՛ծ . Տէ՛ծ որակ . ած . ստորագելի  
արհին :

Հ. Յուցական ածականներն ինչպէս կը համաձայնին  
իրենց գոյականին հետ :

Պ. Իուցական ածականք այ՞ , այդ , այն գոյականէն  
թէ առաջ եւ թէ ետքը կրնան դրուիլ : Եթէ առաջ դըր-  
ուին , կարճ հոլովները կը գործածուին (տես Դաս Ժ . Յու-  
ցական ածականաց հոլովման օրինակը) . իսկ եթէ (ինչ-  
պէս սովորաբար կ'ըլլայ) գոյականէն ետքը կը դրուին ,  
երկայն հոլովները կը քրճածուին , եւ գոյականին վերջը  
« , դ , ն » գիրերը կ'աւելցուին , այսինքն՝ եթէ յուցականն  
այ՞ է , « գիրը կ'աւելցուի գոյականին վերջը . եթէ յու-  
ցականն այդ է , դ գիրը . եթէ այն է , ն գիրը . եւ նախ-  
քէ՛նները թէ գոյականին եւ թէ ածականին վրայ կը  
կրկնուին :

Յոյգական՝ առաջ դրուած

Յոյգական՝ ետքը դրուած

Ելակէ

Ելակէ

- Ո. Այս տուն ,
- Ս. Այս տան ,
- Տ. Այսմ տան ,
- Հ. ՆԱյս տուն ,
- Բ. ՆԱյսմ տանէ ,
- Գ. Այսու տամբ ,

- Տունս այս ,
- Տանս այսորիկ ,
- Տանս այսմիկ ,
- ՆՏունս Նայս ,
- ՆՏանէս Նայսմանէ ,
- Տամբս այսուիկ ,

Յոյգական

Յոյգական

- Ո. Այս տունք ,
- Ս. Այսց տանց ,
- Տ. Այսց տանց ,
- Հ. ՆԱյս տունս ,
- Բ. ՆԱյսց տանց ,
- Գ. Այսու տամբք ,

- Տունքս այսորիկ ,
- Տանցս այսցիկ ,
- Տանցս այսցիկ ,
- ՆՏունս Նայսուիկ ,
- ՆՏանցս Նայսցանէ ,
- Տամբքս այսուիկք ,

Հ. Այս , այդ , այն , յուցականներու տեղ գրաբա-  
րին մէջ շատ անգամ ինչ կը գործածուի :

Պ. Այս , այդ , այն յուցականաց տեղ գրաբարին մէջ  
շատ անգամ « , դ , ն » գիրերը միայն կը դրուին գո-  
յականին վերջը . զոր օրինակ , փոխանակ ըսելու , Տունս  
այս , Տունդ այդ , Տունն այն , կրնայ ըսուիլ Տունս ,  
Տունդ , Տունն :

14. Հրահանգ

ԳՈՅԱԿԱՆ՝ ՅՈՒՅՈՒԿԱՆ ԱՅԱԿԱՆՈՎ

Այս տունը բարձր է . Այս մարդիկը թշնամի են .  
Այն երկիրն անմարդաբնակ է . Այս տեղս հանդիստ է .  
Այդ պարտէզը գեղեցիկ է . Այն տղաքը խօսք մտիկ  
ընող են . Այս զինուորները հնազանդ են . Այդ խօս-  
քերը պարսպ են . Այն պարիսպները անառիկ են .  
ցառ , յորձանք , շամբ , ոսկր , ջիղ , վէժ , տիղձ ,  
քար , օձ :

Աշակերտ հետեւեալ անուններուն ածանցները շինեն  
ոտ ճանկով :

Արիւն , բոր , դանդաղել , դեղ (թոյն) , եռանդն ,  
երկնչել , ժանդ , լուսին , խնամք , ծակ , կասկած ,  
հիւանդ , մոռանալ , մուր , յաչաղել , նախանձել ,  
նենդ , որքիւն , վաղվաղել , ցթանուժ , ցաւ , ցեխ , քոս :

(\*) Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բայերէ կը  
շինուին :

Աշակերտ հետեւեալ անուններուն ածանցները շինեն  
որդ (\*) ճանկով :

Այդի , անցանել , աջ , բաժանել , ժառանգել , լծել ,  
լողալ , կցել , ճանապարհ , միջին , յետին , նախ , նա-  
խանձել , նաւել , որս , պահել , պարապ , սայլ , սե-  
ղան , ցանց , փոխանակել :

Աշակերտ հետեւեալ անուններուն ածանցները շինեն  
ոց , անոց , արան ճանկներով :

Աղքատ , ամառն , ամուր , այրի , արգելուլ , ար-  
ուեստ , գլուխ , գործ , դպիր , ծաղիկ , կանայք ,  
կրակ , հալել , հանգիստ , հիւանդ , հիւր , հովանի ,  
ձմեռն , մարտիկ , մեղու , մթերք , մրջիւն , որբ , ուս ,  
վաճառք , վարել , վարդապետ , վարժել , օտար :

54. Հրահանգ

Աշակերտ հետեւեալ անուններուն ածանցները շինեն  
ան , ապ , տ , դժ , չ , ճանկներով :

Ամօթ , առակ , բտն , բարբառ , գեղ , գէտ , գործ ,  
գին , գոճ , գոյ , գոյն , երախտիք , երասան , լուր ,  
կար , համազգի , հարկ , մարդ , յայտ , յոյս , շնորհ ,  
սւշ , սուրբ , տոնձ , քուն , օրէնք :



ԻԱՍ Խ.

ԲԱՐԴ ԱՆՈՒՆՆԵՐ

- Հ. Ո՞ր անունները բարդ կ'ըսուին :
- Պ. Բարդ կ'ըսուին երկու բառէ բաղադրեալ անուն-

(\*) Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բայերէ կը  
շինուին :

ներ, ինչպէս ասորւածաւեր, զԱստուած սիրող, լուսադրոյս տուող: Առաջինը՝ Ասորւած եւ սեր, երկրորդը՝ լոյս եւ դոս (տալ) բառերէն կը բաղկանան:

Հ. Բարդ անուն մը կազմող բառերն իրարու հետ ինչպէս կը կապուին:

Պ. Բարդ անուն մը կազմող բառերն իրարու հետ սովորաբար = գրով կը կապուին:

Ն. Երբ բարդ անունը երկու գոյականէ կը բաղկանայ, ինչ կը նշանակէ:

Պ. Երբ բարդ անուն մը երկու գոյականէ կը բաղկանայ, ընդհանրապէս այն գոյականներուն մին յատկացուցչի եւ միւսը յատկացելոյ զօրութիւն ունի, եւ բարդութեան մէջ յատկացուցչի զօրութիւն ունեցող գոյականն առաջ կը դրուի: Այս տեսակ բարդ անուններ ընդհանրապէս գոյական են:

55. Հրահանգ

Աշակերտ հետեւեալ աշխարհաբար խօսերը բարդ բառերու դասին, յարկացուցչից յարկացեալն առաջ դնելով:

Զօրքի գլուխ . Կրան փակ (տեղէն) . Գաղանի (հետ) կոխ . Գանձի դուռ . Գետի եզր . Ծովի եզր . Գիրքերու պահարան . Գայեկի (տեղան) որդի . Կիւանի գլուխ . Կիւանի գրագիր . Բանակի տեղ . Եղեւինի փայտ . Աղբիւրի ակ . Լուսոյ մանելու տեղ . Խաչի փայտ . Խունկի աման . Ծերոց խումբ . Հարսի եղբայր . Հողի բլուր, կոյս . Ոտքի կապ . Զիւնի ծաղիկ . Զորի գաւառ . Ճաշու ժամ . Մաղձի դեղ . Մարդոց մահ . Մարդու արձան . Մաքսի տուն . Մեհենի տեղ . Մօխրի կոյս . Նաւի խումբ . Քաղքի մէջտեղ . Սանդղի ոտք . Վանքի երէց . Վարաղի ջիւղ . Որթի տունկ . Քաղաքի պատ:

Հ. Բարդ բառ մը միշտ գոյականներէ կը բաղկանայ:

Պ. Բարդ բառ մը կրնայ նաեւ գոյականէ մը եւ աստիճանէ մը բաղկանալ. ինչպէս Ռեշաֆան, որ Ռեշաստիանէն եւ հանց գոյականէն բաղկացած է, եւ կը նշանակէ Ռեշաֆանի նմանող կամ հանց Ռեշ:

56. Հրահանգ

Աշակերտ հետեւեալ աշխարհաբար խօսերը բարդ են, աշխարհաբար խօսելու համար առաջ դնելով:

Տունը մեծ . Զօրութիւնը մեծ . Զայնը մեծ . Թեւը երկայն . Պրկունքը լայն . Ոտքը կարճ . Զգեստը կարճ . Զուրը խորունկ . Վիզը բարձր . Զայնը բարձր . Մարդը (բնակիչը) շատ . Բարձր աղէկ . Հոտը դէշ . Համն անոյշ . Կէմքը դեղեցիկ . Գեղեցկութիւնը հագուած գիւտ . Ոտքը շուտ (շուտ քալող) . Միտքը երկու (անհաստատ) Լեզուն թանձր . Բեռը ծանր . Քալուածքը թեթեւ . Հաւատքը թերի (պակաս) . Մորթը թոյլ (հեշտասէր, փափկասէր) . Սիրտը վատ (վախոտ) . Բերանը լեցուն . Պարանոցը խիտ (անհնազանդ, խեղ) . Սիրտը հիւանդ . Խորհուրդը լաւ . Այսբը կարմիր . Գլուխը ծռած (ամօթով) . Թեւերը ոսկի . Պարիսպը կրկին . Պատիւը հաւասար . Բազուկները հաստատ . Կաշին հաստ . Զօրութիւնը հսկայական . Զուրը շատ . Հանդերձը մաշկ . Միրտը նեղ . Փետուրը նոր . Զայնը բարակ . Պարիսպը ամուր . Անդամները ողջ (ամբողջ) . Միտքը պակաս . Նիստը (տարածութիւնը) քիչ . Աչքը սուր . Ականջը սուր . Անունը վատ . Զայնը քաղցր . Սիրտը քաջ . Սանձը ոսկի . Զեռքը պարապ . Միտքը թեթեւ . Հաւատքը չիտակ . Աչքը չար (նախանձոտ) . Բեռը թեթեւ . Մեղքը մեծ (շատ) . Մեղքը քիչ . Անունը մեծ . Միտքը մեծ (հպարտ) . Հասակը բարձր . Ականջը երկայն . Թեւը (խանտար) մաշկէ . Միտքը թանձր (պակուշ) . Սիր-

առ խիստ . Դէմքը երկու . Բերանը երկու . Մորթը լերկ . Միտքը երկայն (համբերող) . Զուրը յորդ . Մարմինը թանձր . Միտքը ցած (խոնարհ) . Լեզուն ծանր . Զուրը խորունկ :



ԴԱՄ ԽԱ.

ԲԱՅԱՆՈՒՆ , ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերուն քայանոսն կ'ըսուի :

Պ. Բայանոսն կ'ըսուին այն անունները որ բարդ բառերու մէջ բայի զօրութիւն ունին . այսինքն՝ գործողութիւն մը կը ցուցնեն , զորօրինակ՝ որդեւէր , հայրապետ , արեւակէշ , բառերուն մէջ սէր , սպան , կէշ , բայանուն են , այսինքն՝ սէրէ՛մ , սպանա՛մէ՛մ , կէշո՛ւմ բայերուն արմատներն են , եւ կը նշանակեն՝ սէրող , սպանող , այրած : Որդեւէր , կը նշանակէ իր որդիքը սիրող , հայրասպան կը նշանակէ հայրը սպաննող , արեւակէշ կը նշանակէ արեւէն այրած :

Հ. Բայանունէ եւ ուրիշ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ բայանունն ու գոյականը ի՞նչ բանի զօրութիւն ունին :

Պ. Բայանունէ եւ ուրիշ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ բայանունը բայի զօրութիւն ունի , միւս գոյականն ալ սեռի կամ բնութեան խնդրոյ զօրութիւն ունի : զորօրինակ՝ որդեւէր , հայրասպան բառերուն մէջ , սէր , սպան , բայ են , սէրող , սպանող կը նշանակեն , որդի , հայր գոյականները սեռի խնդիր են սէր եւ սպան բայանունանց . արեւակէշ բառին մէջ ալ կէշ բայ է , այրած կը նշանակէ , իսկ արեւ գոյականը բացառական հոլովի զօրութիւն ունի , եւ բնութեան խնդիր է կէշ բայանունն եւ կը նշանակէ արեւէն այրած :

Հ. Բայանունէ եւ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ , այս երկուքէն ո՞րն առաջ կը դրուի :

Պ. Բայանունէ եւ գոյականէ մը բարդուած բառերուն մէջ ընդհանրապէս խնդիրն առաջ կը դրուի , բայանունը՝ ետքը :

Հ. Այս տեսակ բարդեր գոյականն են թէ՛ ածական :

Պ. Այս տեսակ բարդեր թէ՛ իբր գոյական եւ թէ՛ իբր ածական կը գործածուին :

37. Հրահանգ

Աշակերտ այս և հետեւեալ հրահանգներուն քայանունները քոնեն , և երբ որո՞ւստ աշխարհաբար խօսեցը բարդ բառերու դարձնեն :

Ածեմ , աղամ , ամամ , ամօքեմ , այրիմ , ապաստանիմ , ապրիմ , առաքեմ , առնում , ասեմ , ատեմ , արածեմ , արդելում , արկանեմ :

Քուն , պատիժ բերող (տուող) . Խունկ աղացող . Մլոյ (ջաղացքի) մէջ աղացող . Մովը թափուած . Կերակուր ամօքող (բարեխառնող) . Անձկով (կարօտով) այրող . Կէս այրած . Իր անձին ապաւինող . Կնքղինք աղատող . Երկինքէն առաքուած . Փոխ , աւանդ , կաշառ , պարգեւ , համար , վրէժ առնող . Երախտիք առնող (ընդունող) . Բարի , չար (բան) ըսող . Իր տէրն ատող . Ինչք ատող . Խաչինք (հօտ) արածող . Բանտի , պատի , քարերու մէջ արդելուած . Ահ արկանող (ձգող) . Խունկ արկանող (ձխող) :

Բառնամ , բարձրանամ , բեկանեմ , բերեմ , բղխեմ . Բնակիմ , բտիմ . Գիտեմ , գնամ , գնեմ , գովեմ , գործեմ , դտանեմ , դրեմ :

Բեռ վերցնող . Կական (լաց) վերցնող (բրցնող) . Մինչեւ երկինք բարձրացած . Ահիւ բեկած (վախէն լե-

ղին բրդած) . Ծանրութենէ բեկած (կտորած) . Գաղաններէ բեկած (պատառուած) . Պտուղ , փուշ , անձրեւ , բուբ (թիփի) բերող . Երկրէ բխած . Հուր , ջուր բխող . Գաղաններէ բնակուած . Անտառները բնակող . Խոտով ընդով բտուող (կերակրուող) . Ծածուկ (բաներ) գխացող . Իրը (եղելութիւնը) գխացող . Միրաբեր գխացող . Ձեռքի (գործ) գխացող . ձամբայ գացող . Ծովով , նաւու գացող . Արծաթով գնուած . Մարդ գնող . Ինքզինք գովող . Այգի , երկիր , հող գործող (մշակող) . Նաւ , հաց , իւղ գործող (շինող) . Պղինձ գործող (պղղնձէ բաներ շինող) . Չար , բարի ժանտ (գէշ) , գազիր (զղուելի բաներ) , եղեռն , ոճիր գործող . Մաղէ գործուած . Ձեռքով գործուած . Հնարք գտնող . Մատեան (գիրք) գրող . Պատմութիւն գրող . Ձեռքով գրուած :

58. Հրահանգ

Դարմանեմ , դաւեմ , դիեմ , դրժեմ . Երդնում , եփեմ . Չանցանեմ , զարդարեմ , զգածնում , զգենում . Ընկենում , ընտրեմ . Թափեմ . Իմանամ :

Խաշինք դարմանող . Մարդ դաւող . Մտինք գիեցող . Ուխտին դրժող (աւրող) . Տիրոջը դրժող (մատնիչ) . Իւղ (օծանելիք) , հաց եփող . Երդումը , ուխտը , պատուիրանքը , օրէնքը զանց ընող (չբռնող) . Աստղերով , ծաղիկներով զարդարուած . Սեւերով , մթով , քուրձով զգածեալ (պատած) . Իրը (եղելութիւնը) զգացող (խմացող) . Խարաղն , ծիրանի զգեցող (հագնող , հագած) . Տերեւները նետած (ձգած) . Նետ , շանթ , քար , կրակ նետող . Ձէնքը , լուծը նետող . Գետը նետուած . Իրաւունքն ընտրող (կարող , որոշող) . Տերեւները թափած . Մարդէ (բնակիչներէ) , յիշողութենէ թափուր . Ոխը , նետ թափող . Հնարք (ձամբայ , կերպ) իմացող (գտնող) . Չար (բաներ) իմացող (հնարող) :

Լիկեմ , ընում . Խանձիմ , խառնեմ , խարեմ , խլեմ , խնդրեմ , խողխողեմ , խորհիմ , խօսիմ . Ծախեմ , ծեծեմ , ծնանիմ , ծփամ :

Սովէ լլկուած . Ծաղկով , հացով , պտղով , որդերով , խնդութեամբ լեցուած . դանիւ (ծեծով) լեցուած (չատծեծուած) . Արեան , գէշի (էշ) խանձած (բորբքած) . Ծծմբով , ծխով խառնուած . Եղեմէն խարուած (այրած) . Արմատէն խլուած . Վրէժ , քէն խնդրող . նախանձով (եռանդով) խնդրող . Սրով խողխողուած . Մտքին մէջ (խնքնիրեն) խորհող . իրաւունքը խորհող (իրաւունքը կատարելով հաշտուող) . Բարի խօսող (միջնորդ) . չար խօսող (ամբաստանող) . առակ խօսող . որովայնէն խօսող . առեանին մէջ խօսող . հնութեանց վրայ խօսող . Մարդ ծախող (սպառող) . Երով (սփռ) , ողորով (բարակ գաւազանով) ծեծուած . (յառաջ եկած) . Անձրեւ ծնանող . երկրէ , ծովէ , ջուրէ , հողէ ծնած . Ծովին մէջ ծփացող :

59. Հրահանգ

Կամիմ . կապեմ . կապտեմ . կատարեմ . կարեմ . կեամ , կերտեմ . կիզում . կլանեմ . կժանեմ . կոխեմ . կոծեմ . կորանամ . կորուսանեմ . կօփեմ . կոեմ . կրաուելիմ . կարեմ . կրեմ . կրծեմ :

Բարի , չար կամեցող . Կամար (գօտի) կապող . կամարներով կապուած (շինուած) . ակունքով կապուած (գամուած) . Գի , տաճար , սեղան կապտող (կողտպտող) . Կամք , հրաման կատարող . Կօշիկ , խորան կարող . Կամքը (ընել) կրցող (անձնիշխան) . Կեռք , շինի մէջ (մարդ եղած տեղ) ապրող . վիշտերու մէջ ապրող . Կաւէ , փայտէ , քարէ , կրկտէ (շուր շքէ) կերտուած (շինուած) . հրաշքով (զարմանալի կերպով) կերտուած . ձեռքով , նկարով կերտուած (գործուած) . Տաքէն ,

ցուրտէն կիզեալ . Ծովէն կլլուած . Ջերմութեամբ  
 կծանող (խայթող) . Ոտքով կոխուած . Ալիքներէ , հո-  
 վէ կոծուած (ծեծուած) . Աչուրները կորացած (ամօ-  
 թով) . Պտուղը , յոյսը կորսնցնող . Քար կոփող . Կաւ-  
 նով (չէփէ) կռուած (տաշուած) . քարէ կռուած . Բա-  
 նիւ (խօսքով) կռուող . Ծայրերէն , կէսէն , մէջտեղէն ,  
 մօտէն , տակէն (արմատէն) կտրուած . քարէ կտրուած  
 (մէկ կտոր քարէ) . Բեռ , ջուր կրող (տանող) . վիշտ  
 կրող . Կաշառք կրծող (ուտող) :

Համբերեմ . հայիմ . հանեմ . հասանեմ . հատանեմ .  
 հատուցանեմ . հարկանեմ . հեղձնուամ . հեղում . հոսեմ .  
 հոսիմ . Ձգեմ . ձուլեմ . ճարակիմ :

Խստութեան , վիշտերու համբերող . Ծովու վրայ  
 նայող . երկինք նայող . Ձուկ , ջուր հանող . միս հա-  
 նող (փէփէ) . պատկեր հանող (նկարող) . խաչը հանող .  
 հարկ հանող (առնող , ժողովող) . քէն հանող (ոխ առ-  
 նող) . երազ հանող (մեկնող) . Ձեռքով հանող (կարող) .  
 Քար , երկաթ կտրող (մետաղներէն հանող) . փայտ կըտ-  
 րող . Յոյսը , քունը հատած . թաթերը կտրած . երակը  
 կտրող (արիւն առնող) . մաէ կտրուած (միս չուտելու  
 ուխտ ընող) . Վարձքը , Էրախտիքը , քէնը հատուցա-  
 նող . Սրինք , քնար , փող զարնող . դիւէ , նետէ ,  
 շանթէ , սուրէ , ցուրտէ , խորշակէ զարնուած . Ծովը  
 խղզուած . Արիւն թափող . Հուր , ջուր վաղցնող .  
 Ժանտ , չար (դէշ) հոտող . Նետ , քար ձգող (նետող) ,  
 ակոս ձող (քաշող) Արծաթէ , ոսկիէ , պղնձէ ձուլ-  
 ուած . Խոտ ճարակող :

60. Հրահանգ

Մածնում . մահանամ . մանեմ . մեծարեմ . մխեմ .

մոռանամ . մտանեմ . Յարգարեմ . յիշեմ . յուզեմ . յօ-  
 դեմ . Նենգեմ . ներկեմ . նիւթեմ :

Տախտակով մածուած (վրան ծածկուած) . Սրով , սո-  
 վով , թոպուելով (ծեծուելով) մահացած (սպանուած) .  
 խղզուելով , հեղձնով մահացած . Ոսկով մանուած .  
 Հիւրերը մեծարող . Խորը . մէջը մխուող . ձեռքը մխող  
 (ձեռք զարնող) . Երախտիք մոռցող . Որջ , ծակ , խորը  
 (ձեռք մտնող) . Տաճար , սեղան յարգարող (չտկող) . Չա-  
 րիքը յիշող (ոխ պահող) . Խորերը , ջուրերը յուզող  
 (փնտաող) . խոսվութիւն , անձրեւ յուզող (հանող) . նա-  
 խանձէ յուզեալ (չարժեալ) . Սուտ (բաներ) յօդող (չի-  
 նող) . Ուխտը , աէրը նենգող . Ծիրանի ներկող . Չա-  
 րիք նիւթող :

Շարժեմ . շինեմ . շնչեմ . Ուտեմ . ուրանամ . Չափեմ .  
 չուեմ . Պահեմ . պաշտեմ . պատեմ . պատճառեմ . պատ-  
 մեմ , պարարեմ . պարտաւորեմ . պշնուամ :

Հովէն շարժած . Պատ , խորան շինող . տուն , աշ-  
 խարհք շինող (շէնցնող) . մարդով (բնակչօք) շէնցած ,  
 Ծուխ , բոց , հուր , մահ շնչող . Աստուծմէ , հոգիէն  
 շնչուած (ներշնչեալ) . Խոտ ուտող . ցեցերէ կերուած .  
 Աստուած ուրացող . Երկիր չափող . Երկինք չուող .  
 Ոգին (կեանքը) պահող . Ուխտ , պատուիրանք , ոխ  
 պահող . Աստուած , կուռք , դիք պաշտող . Արծա-  
 թով , սառոյցով , մութով պատած . Հիւանդութիւն  
 պատճառող (հիւանդ ձեւացող) . Սուտ (բաներ) պատ-  
 մող . դիւրին , դժուարին (ոճով) պատմուած . Որովայ-  
 նը պարարող . Մահու , պատժոյ պարտաւորուած (դա-  
 տապարտուած) . դատաստանով պարտաւորուած . Եր-  
 կինք պշնող . մարմնոյ , երկրի պշնող (մարմնաւոր ,  
 երկրաւոր բաներու նայող) :

Սիրեմ . սնանիւմ . սուզեմ . սպանանեմ . վաճառեմ . վարեմ . վարժեմ . վիժեմ . վիրամ . Տարածեմ . տեսանեմ . Յնորիւմ . ցուցանեմ . Փորեմ . Քաղեմ . քաղցնում . քարչեմ . քննեմ . Օծանեմ :

Հայրենիքը սիրող . Ջրոյ մէջ , կաթով սնած , առնը , (մէկուն) ձեռքը սնած . զով տեղեր սնած . Ջրոյ մէջ , խորը սուղած (ընկղմած) . Տէրը , եղբայրը սպաննող . Գինի , ցորեն , մարդ վաճառող . ժամանակը վաճառող (պարապ անցնող) . Կառք , նաւ վարող , գերի , մարդ վարող (յափշտակող , տանող) . Ձի , մանուկ վարժող . մտօք վարժուած (հնազանդ , հլու) . Գահէ (ուշաքուշ) , քարէ (ժայռի վրայէ) նետուած . գետի մէջ նետուած . Վարս (գլխու մաղ) վիրայող (ածխող) . ճամբայ վիրայող (շտկող) . Բազուկները տարածած . գետնի վրայ տարածուած . Երազ տեսնող . Խելքը ցնորեցնող կամ ցնորած . Ճամբայ , երազ , ժամեր , տօներ ցուցնող . Գետնի , քարի մէջ փորուած . Ծաղիկ , պտուղ , հասկ , կրկուտ քաղող (ժողովող) . ծայրերէն քաղուած (կարուած) . Ինչքի (հարստութեան) քաղցած (անօթի) . Գետինը քսող . Խորունկ (բաներ) քննող . Ոսկով , արծաթով օծուած :

Ի Ա Մ Խ Ե

ԲԱՐԻ ԲԱՌԵՐ . ԲԱՅԱՆՈՒՆ ԵՒ ՄԱԿԻԱՅ

- Հ. Բայանունները գոյականով միայն կը բարդուին :
- Պ. Բայանունները շատ անգամ մակբայով կամ մակբայերէն առնուած ածականով ալ կը բարդուին . զոր օրինակ . մարտնչութիւն , շարախօս , Կապուտեան , բարդուած են բողբոջի , խօս , որեւ բայանուններէն , եւ մշտ , շտար , Կապ մակբայներէն :

61. Հրահանգ

Աշակերտ հետեւեալ բայերուն բայանուն արձարները գործն .

Ամբառնամ . ասեմ . աւերեմ . Բարձրանամ . բեկանիմ . բղխեմ . բուռանիմ . գանեմ . գիտեմ . գուշակեմ . գտանեմ . Դատիմ . դիմեմ . Եփիմ . Զարթնում . զինեմ . Ընծայեմ . ընթանամ . Թռչիմ . Լլկեմ . Խամրիմ . խօսիմ . Ծագեմ . ծաւալեմ . Կազմեմ . կամ . կարգեմ . կեամ . կիզում . կշռեմ . կորովեմ . Հայիմ . հասանեմ . հաւանիմ . հաւատամ . հեղուտեմ . հիմնեմ . Կահանամ . մաղեմ . մարտնչիմ . մեռանիմ . մտանեմ . Յածիմ . յաննեմ . Նուագեմ . Շարժիմ . շնչեմ . Պահեմ . պարծիմ . Ջանամ . ջնջեմ . Սնանիմ . ստեղծանեմ . Վիրաւորեմ . Տարածեմ . Յանում . Յնորիմ . Փլանիմ . փաիմ :

Աշակերտ հետեւեալ աշխարհաբար խօսերը բարդ բառերուն որոշումներն մակբայներն առաջ դնելով :

Վեր ամբարձեալ (վերցուած) . Կանխաւ ըսող կամ ըսուած . Վաղ , կանուխ (չուտ) աւերած , փլած , փտած . Ուղիղ բարձրացած . Գիւրաւ բեկանող . Յանկարծ , առատ , յորդ բխող . Գիւրաւ , ինքնին բուսնող . Չարաչար գանուած . Կանխաւ գիտցող . Կանխաւ (առաջուց) գուշակուած . Չքնաղ (քիչ) , զիւրաւ , դժուարաւ գանուող . յանկարծ , առաջ գանուած , Արդար , ուղիղ դատող . Յառաջ , տար (հեռու) դիժող . Կէս եփած . Ծանր արթնցող . Իսպառ (բողբոջի) զինեալ . Նոր ընծայուած . Արագ , թեթեւ , խուռն (բաղմուտեմ) , զոյգ (հաւասար) ընթացող (վաղող) . Բարձր թռչող . Չարաչար լլկուած . Արագ խամրող (թուռնող) . Ունայն , արդար , ուղիղ խօսող . Յանկարծ ծագող . Լայնաբար (ընդարձակ) ծաւալեալ . Պինդ (ուժով) կազ-

մուած, Առնթեր (քովը), շուրջ (բոլորովոր) առաջի (առջեւը) կեցող. ինքնիրեն կեցող. վրան կեցող. Յառաջ կարգուած (դասուած). Երկայն, միայն ապրող. Ողջ (ամբողջ) կիզելի (այրելի). Արդար կշռուող. Արդար կորովող (պատող). Քաղցր, առաջուց նայեցող, Երագ (շուտ), վաղ (կանուխ) հասնող. Գիւրաւ հաւանող. Թերի, ուզիղ, նոր հաւատացող. Հաստատ հեղուածուած (դամուած). հաստատ հիմնուած. Խայտառակարար մահացած (սպաննուած). Մանր մաղուած. Հակառակ, ընդդէմ մարտնչող. Կէօ, վաղ (կանուխ) մեռած. Կանխաւ (առաջուց) մտած. Ընդվայր (ասզին անդին), դատարկ յածող (պտտող). Վաղ յառնող (կանուխ ելլող). Քաղցր նուագող (երգող). Մանր, արագ, միշտ շարժող. Դառն, քաղցր, սաստիկ շնչող. Գիշերը (գիշեր ատեն) պահող. Ունայն, սին (պարագ տեղ) պարծող. Ջուր, ժրութեամբ (արիւթեամբ) ջանացող. Համօրէն (ընդհանուր) ջնջուած. Դատարկ, ընտանեաց մէջ, ընդվայր, ընդարձակ, փափուկ սնած (մեծցած). Նախ, նոր ստեղծուած. Կարի (չատ) վիւրաւորուած. Լայն, համօրէն տարածուած. Մանր ցաննող (բարկացող). Յայգ (գիշերը) ցնորող (այլընտրան). Վաղ սլիած, փտած :

ՆԱԽԸՆԹԱՅ ԴԱՍԵՐՈՒՆ ՎԵՐԱՔԵՐԵԱԼ ԽԱՌՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ուսուցիչք կրնան հետեւեալ հրահանգներն այլեւայլ դասերու բաժնել :

1. Հրահանգ

Տունը նոր է. Եկեղեցին հին էր. Փայտը երկաթէն թեթեւ է. Քացախը սաստիկ է. Աղը կծու է, բայց հոտելէ կը պահէ. Ոսկին բոլոր մետաղներէն ազնուա-

գոյն է. Ադամանդը շատ մեծագին է, բայց երկաթէն աւելի օդտակար եւ գործածական չէ. Կտուը կերպասէն աւելի ցանցառ (սէյրէք) է. Այս գինին անջուր է. Այդ հովիտը ջրոտ է, անոր համար բարեբեր է. Անձրեւն ու կարկուտը ծանր են. Շոգին թեթեւ է. Մարդիկ եւ անասունները քալող եւ շարժող են. Մարդ զգացող, իմացող եւ խօսող է. Ձին կրակոտ է. Եղբայրը վախկոտ է. Դուն խիստ ես. Անօք վկայ են. Մենք ազանատես ենք. Անօք ազանջալուր են. Ձեր եղբայրը տունը կը գործէ. Այս տղաքն իրենց հանդերձները պատուեցին. Նաւը ծովը ընկղմեցին. Մարդիկը ծովը խղզուեցան. Կառավարը գետը իյնալով կորսուեցաւ :

Սաստիկ, քարի	Ջրօտ, ջրբէէ
Հոտել, նեխ-նեխ	Բարեբեր, յոր-թէ
Մեծագին, պարտաւան	Քալող, քնայուն
Գործածական, պէրսի	Շարժող, շարժուն
Ցանցառ, անօք	Ձգացող, զէայուն
Անջուր, (գինի), անապակ	Իմացող, իմաստուն
Խօսող, խօսուն	Գետն իյնալով կորսուիլ,
Կրակոտ, ջերմ	Քեպտոյն լինել
Ծովը խղզուել, ծովալուր	
Լե՛ել	

2. Հրահանգ

Քարեկամօ ձեր հայրը տեսաւ. Ձինուորներն իրենց զօրապետը կանչեցին. Այն քաղքին մէջ կին մը կար. Այս կինն իր աղջիկը չի սիրեր. Այս հայրն իր որդիքը կ'անիծէ. Երկինքն աստղեր կան. Ջրհորներուն մէջ օձեր կան. Լեռներուն մէջ մեծ օձեր կան. Մեծամեծ կէտեր կան ծովին մէջ. Երկրիս վրայ բարձր լեռներ կան. Լեռներուն մէջ մեծամեծ անտառներ կան. Ա-

նոր դերեզմանն այս քաղքին մէջ է . Մեր բարեկամներն այս տունին մէջ են . Անոնց ոսկրներն այս գերեզմանին մէջ են . Սպասաւորներն այն պալատին մէջ են . Այն սրահին մէջ հիւրեր կան . Այս սենեկին մէջ գէշ հոտ կայ . Այս կրակարանին մէջ կրակ կայ . Ձեր շտեմարանին մէջ շատ ցորեն կայ . Կառավարը վարժ է . Վարժապետն հմուտ եւ փորձառու է . Աշակերտները կրթեալ են . Եղջերուն եւ նապաստակն արագընթաց են . Տղան տհաս է . Պատանին հասուն է . Ծովին մէջ ձուկեր կան . Արեգական մէջ բիծեր կան . Աշխարհիս մէջ շատ մարդիկ կան . Հոն շատ բազմութիւն կար . Այն բանտին մէջ շատ կապեալներ կային . Ձեր եղբայրը տեսնել կ'ուզեմ . Գու տանդ մէջ նստէ . Այս տունը մերն է . Դուք մեր սիրելիներն էք . Ձեր եղբայրները մեր բարեկամներն են :

Մեծ օձ ,	Վիշապ	Փորձառու ,	Վարժ
Պալատ ,	ապարան	կրթեալ ,	կերէ
Գէշ հոտ ,	Ժանտարան	Տհաս ,	խաչ
Վարժապետ ,	վարժապետ	Բազմութիւն ,	ամբի

3. Հրահանգ

Անոնց ծառաները մեր ծանօթն են . Այն մարդն իմ վարպետս է . Չանի շատ խրատեցի . Այս խօսքերը ձեր գիրքերուն մէջ գրեցէք . Դուռը գոցեցին . Անոնցմէ ոմանք պատեցինք . Ասկէ մէկը չի կրնար անցնիլ . Ամէնքն ալ հոս կը բնակին . Դուք հարուստ կնոջ եղբայր էք . Այն լեռնէն կ'իջնէին . Մեր երեսը չտեսաւ . Այդ տղան դուրս հանեցէք . Ձեր գեղը շատ գեղեցիկ է . Այս պարտէզը մեծ աշխատութեամբ շինեցինք . Ձեզ շատ յոգնեցուցի . Ինծի ներէ . Պատգամաւորներն իմ խօսքերս անոնց պատմեցին . Խօսքն անոնց յայտնեց . Ես ձեզ կը հանգչեցնեմ . Անոնց հայրը հոն չէր .

Անոնց ընկերները մեր բարեկամն են . Քարերը փողոցն են . Զինուորները հրապարակն են . Նաւերը նաւահանգըստին մէջ են . Նաւաստիները նաւին մէջ են . Անոնց ամանները քորձին (չուվալ) մէջ էին . Անոր արծաթն իր ծոցն է . Մեր սուրն անոր ձեռքն է . Անոնցմէ ոմանք նաւն են . Ձեր բարեկամներէն ուրիշները քաղաքն են . Ամէնքն ալ այս սրահին մէջն են . Մեր ցորենն շտեմարանն է . Ամէն մէկն իր տունն է . Տունը մէկը չկայ . Ձենէ շտեմարան աղքատ են . Անոնցմէ քիչերը հոս են . Անոնցմէ հինգն իմաստուն են . Ձենէ մէկը սատանայ է . Ձեր բարեկամներէն մէկն հոն էր . Մենէ մէկն հոն չէր . Մենէ ոչ մէկը հոն էր . Եղբայր մը ունիմ . Անիկա որդի մը ունի . Եղբայրս պարտէզ մը ունի . Դուք շատ բարեկամներ ունիք . Եօթն եղբայր ունինք . Անիկա գեղեցիկ պարտէզ մը ունէր . Դուք շատ գիրքեր ունիք . Հայրս շատ ստակ ունի . Անիկա շատ արջառներ եւ ոչխարներ ունեցաւ . Իսահակ ջրհոր մը ունէր . Որդի մը ունիմ . Մեծ տուն մը ունի . Պղտիկ քաղաք մը ունիմ . Մեծ տուներ ունինք . Անոնք շատ ստացուածք ունին . Իմ խօսքերս լսեցէք . Այն լեռնէն կ'իջնէր . Այս քաղքին մէջ բնակեցաւ . Այն տունն երթանք . Այն պարտէզին մէջ նոր գերեզման կար . Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր . Տասը տարի ապրեցաւ . Ուր ժամ ձեզի սպասեցինք . Անոնք այս աշխարհէս են . Դուք այս աշխարհէս չէք . Երբ ասիկա թաղաւորէն լսեցին . Անոր քալելուն ձայնը լսեց . Այդ մարդն այս տունը խոթեցէք . Չանիկա օտար երկիր տարին . Այն հացէն կերաք :

Ասկէ ,	ընդ այս	Յայտնել ,	ի վեր հանել
Շինել ,	յօրէնել	Հանգչեցնել ,	հանգուցանել
Յոգնեցնել ,	աշխատ արանել	Ամէն մէկը ,	խորտակել
Ներէ ,	հրատ. ներեցէ	Մէկը ,	ոմն

Ոչ մէկը , ոչ ոք  
Քալել , քնալ

Խոթել , հոռոտել

### 4. Հրահանգ

Ձեր եղբայրը տեսայ ու անոր ըսի . Անոր ձայնը լսեցի ու կանչեցի . Անոր մահուան լուրն առաւ ու սկսաւ լալ . Ձանի երկու մղոն տարին . Անոնց հինգ քոս ցորեն տուին . Պատը երկու կանգուն բարձրացուցին . Ձինուորներուն զէնքերն առաւ . Տունին յարկը քակեցին . Անոր եղբայրները հոն էին . Իր ծառային աղջիկն սպաննեց . Սենեկին դուռները բացին . Տաճարին վարագոյրը ձեղքուեցաւ . Եղբորս ձայնը լսեցի . Մեր բոլոր ստացուածքը քուկդ է . Այդ աշտանակն իմս է . Այն պարտէզը գեղեցիկ է . Անոնց ամանները լեցուն են . Մեր տունները բարձր են . Ձանի լերան գլուխը հանեցի . Իր մառանին մէջ շատ զինի ունէր . Ութ տարի աշխատեցայ ասիկա սորվելու համար . Դաշտին երկայնութիւնը տասուերկու մղոն էր . Այն դուբին մէջ առիւծներ կային . Թաղաւորը հզօր է . Այն մարդը բանսարկու է . Իօսելու ատենը կ'ըսէր . Արտաշիտի փեսայութեան ատենը ոսկի կը տեղար , Սաթինկան հարսնութեան ատենն ալ մարգարիտ . Դուն Շարայի որկորն ունիս , Մենք Շիրակայ համբարները չունինք . Իմ գիրքերս մեր են . Ձանոնք մեր դրիք :

Լուր , համբաւ  
ձեղքեմ , ցելւած

### 5. Հրահանգ

Ձանոնք ձեր եղբորը տուի . Այդ գիրքերն մի շարադրած է . Գիտուն մարդ մը զանոնք շարադրած է . Հոս հինգ սափոր ջուր բերէք . Ես ձեզի ըսելու շատ բան ունիմ . Երկու որդի ունիմ . Անիկա չորս աղջիկ ունէր . Շատ հարստութիւն ունէին . Համբերելու զօ-

րութիւն չունիմ . Ներս մտաւ ու նստաւ . Ձանի իւր գիրկն առաւ ու օրհնեց . Երկու օրուան ճամբայ քակեցինք . Գիշեր եւ ցորեկ կ'երթայինք . Առէք այս մարդիկն ու իրենց տունները տարէք . Անոր բարեկամներն այս դուռնէն անցան ու մեզի եկան . Այս պատմութիւնը լսած ատենը կը զարմանար . Երկու օր առաջ ձեր ծառաները մեզի լուր տուին . Անոնց ընկերները մեր բարեկամներն են . Դուն իմ որդիս ես . Մենք ձեր բարեկամներն ենք . Եղբայրներս ձեր վրայով պատմեցին . Մենք անոնց հետ ձեզի եկանք . Անոնք ձեր եղբորը հետ մեր տունը գացին . Երեք օր ճամբորդութիւն ընելով հոն հասանք . Ձեր սիրոյն համար այս աշխատութիւնը յանձն կ'առնեմ . Առտու իրիկուն ձեզի համար կ'աշխատէինք :

Շարադրեմ , յօրհնեմ  
Նստիմ , քալեմ  
Գիշեր ցորեկ , շփեմ եւ  
դիւնէր  
Առաջ , յարաւ Կան շ  
ճամբորդութիւն ընեմ ,  
ճանապարհորդեմ  
Սիրոյն համար , առ ուր  
Առտու իրիկուն , յայտեմ եւ  
դիւնէր :

### 6. Հրահանգ

Ինծի հրաման բուր որ երթամ հայրս տեսնելու . Անոր պատուէր տուր որ զիս չնեղէ . Անոր վախէն լռեցինք . Այն մարդուն որդին կը ճանչնամ , բայց ձեզ չեմ ճանչնար . Ձանոնք վրանը խոթեցէք . Ինչո՞ւ համար բոլոր օրը դատարկ կեցած էք . Հոս ինչպէս մտաք . պատմեցէք մեզի . Այս ճամբէն մէկը չի կրնար անցնիլ . Անիկա աղէկ մարդու որդի է . Ասիկա հարուստ կնկան աղջիկ է . Արքայից արքային ծառաներն ենք . Այդ գերիներն այն բերդը տարէք , քաղաքը մի բերէք . Իր եղբորը քով բնակեցաւ չորս տարի , եւ մեր երեսը չտեսաւ . Իր հայրենիքէն աքսորուեցաւ . Ձեր

գեղն եկայ, շատ գեղեցիկ է . Խօսքին երկայնութենէն ձանձրացաւ եւ քունը տարաւ . Անոնց այն խօսքերէն գիտցայ որ անոր եղբայրն էք . Բազմութիւնն այն եկեղեցին կը դիմէր . Չանի տաճարին մէջ տեսան իր բարեկամներուն հետ . Երկիրը մեծ է . Ծովը խորունկ է . Երկինքը բարձր է . Լուսինը յատուկ լոյս չունի . Անիկա վաթսուս տարի ապրեցաւ, եւ քառասուն օր թագաւորեց . Իմ տունս մոէք . Կնճուոյն շուքին տակ կը նստէր . Իմ ձեռքիս տակն է . Չեր իշխանութեանը տակ շատեր ունիք . Եղբայրս երկու որդի ունի . Տասը սպասուոր ունէր . Անոնք շատ ստակ ունին . Ստակ չունիմ, բայց ունեցածս տամ :

Վախէն, առահի	Աքսորութիմ, արարէի լեւիմ
Բուր (օր), ողջն	Քունը տանել, ներհեմ
Աղէկ, աշխի	Յատուկ, առահիյն
Բերդ, արեւի	Շուք, հովանի

7. Հրահանգ

Մարիամ գերեզմանը եկաւ . Գացէք, ըսէք ձեր բարեկամներուն որ հրատարակն երթան . Անոնք հոն ժողովուեցան, եւ անոր դալուն կը սպասէին . Ստակը սեղանաւորին դարձուց . Անիկա ստակն առնելով կ'ըսէ . Չուր առաւ ու ձեռուրները լուաց . Ան աեղը եկան որ աւերակ կը կոչուէր . Գուն իմ սիրելի որդիս ես . Ես քու հայրդ եմ . Թագաւորը տօնին առնը հոն էր . Աշակերտները հարսնիքն էին . Ժամը իննին ատենները խաւար եղաւ . Ութ մղոն քալեցինք . Ան ատենները սով կար . Կէս գիշերուան ատենները յարձակեցան անոնց վրայ . Գիշերանց ելլելով կ'երթային . Հարիւր լիար իւղ բերին . Կրնամ այս տաճարը քակել, եւ երեք օրուան մէջ չինել զայն . Այն երկրէն կուգանք .

Այս քաղաքն եկան . Այն քաղքին մէջ աղքատ մը կար . Չանի տեսնելով կանչեց ու իր քովը նստեցուց . Մեզ բռնեց ու կը շարչարէր . Պատուհանը բացաւ ու կը նայէր . Չանի բանաէն արձակեց . Չանոնք բանտարկեց . Չեր եղբայրներն եկեղեցին խոթեցին . Այն եկեղեցւոյն մէջ կը քարոզէր :

Ժամը իննին ատենները, Բանտարկեմ, Դեմ է դեմ  
 ղինն ժամս արահի  
 Չարչարեմ, Ակեմ

8. Հրահանգ

Այն բանտին մէջ շատ կապեալներ կային . Չանի ջուրը նեակեց . Անոր ձայնը լսելով կ'ուրախանար . Յակոբ ինը տարի ծառայեց Լաբանու Ռաքելին համար . Չորս ժամ ոտքով դացինք . Եօթը տարի սով եղաւ . Երուսաղէմի տաճարը քառասուն տարին շինուեցաւ . Ինծի հինգ քանքար արծաթ տուաւ . Եօթը սահոր ջուր բերին . Տասը վունջ ծաղիկ քաղեցինք . Այս տունը մերն է . Գուք մեր սիրելիներն էք . Եօթը օր աշխատեցան ու զանի դուրս հանեցին . Ութ մղոն քալելէն ետքը մեծ քաղաք մը հասանք . Քաղքին դուռնէն ներս մտնելու ատեն հինգ հօգի տեսանք . Այն գիւղը կարդացած չենք . Փոքրիկ քաղաք մը ունիմ . Եկու եւ հոն բնակէ . Այս լեռներէն շատ հեղեղներ կ'իջնեն . Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ . Ինք եւ իր որդիքը մեզ տեսնելու եկան . Եթէ ես եկած չըլլայի . Չեղ շատ օրեր վորձեցի . Մեր գործքերը ձեզի պատմեցինք, բայց դուք մեզի չհաւտացիք . Անիկա հարուստ մարդու որդի էր :

Նետեմ, ընկենամ [նիմ] Ոտքով, հեռէ  
 Ուրախանամ, արահի չորի, արի (անծ)

9. Հրահանգ

Չանի թագաւորին տարին . Եղբօրը քով կեցաւ շատ օրեր . Չանոնք դահիճներու մատնեց . Անոր վրանին տակը ճաշեցին . Երկու օրուան ճամբայ դացինք . Իմ խօսքերս լսեցէք . Անոր մանչերն ու աղջիկները մեզի եկան . Քիչ մը ետքը զանոնք տեսայ . Մեր աղաչանքն անոնց ընդունելի չեղաւ . Թագաւորի խորհուրդները ծածկել պէտք է . Աստուծոյ ըրածները ձեզի պատմեմ . Աստուծոյ եւ անոր զօրութեանը կը հաւատամ . Հաղիւ անիկա ոտքը ցամաքը դրած էր . Աստուած այս աշխարհը ստեղծած է . Վաղուան համար մի հոգաք . Մեզի անոնց վրայով պատմեցին . Բան կը փնտռէին որ անոր վրայով չարախօսեն . Չանի քաղքէն դուրս հանեցին . Չանոնք ատեանը բերին . Շատերն այս քաղքէն ելան . Այդ տղաքն այն տունը տարէք . Այն քաղաքը կը բնակէր . Իմաստուն մարդոց խօսքերուն մտիկ ըրէք . Այս մարդիկը քաջ թագաւորի զինուորներ են . Այս տեղը չարագործ մարդերով լեցուցիք . Դուրս ելէք եւ զանոնք փնտռեցէք . Յորենն իրենց ամաններուն մէջ ժողովեցին . Երբ բազմութիւնը տեսաւ , նրստեցաւ . Անոր դուրս ելլելու ատենը բազմութիւնը ներս կը մտնէր . Չանոնք այդ եկեղեցին խոթեցէք :

Քիչ մը ետքը , յետ «սկ» Հաղիւ , այն էն  
 Ինչ Ստեղծեմ , ունե՞՞

10. Հրահանգ

Երկրիս բոլորտիքն օդ է . Ժողովուրդն անոր բոլորտիքը ժողուեցաւ . Այն քաղքին բոլորտիքը պատնէշներ շինեցին . Անոր վրայով ձեզի բան մը պիտի ըսեմ . Ձեր եղբօրը վրայով ամբաստանութիւն կ'ընեն . Ձեր բարեկամներն իմ վրայովս կը տրանջեն . Ձինուորները

պարտէղին դուռնէն մտան . Բազմութիւնը դաշտին երեսը տարածուեցաւ . Տասը ժամ բան չկերան . Տասուերկու մղոն քալելէն ետքը քաղաքը հասանք . Մեզ տեսան ու սխտան փախչիլ . Փախան ու բերդն ապաւինեցան . Չանի մէկդի առաւ ու հետը կը խօսէր . Չէի գիտեր թէ ինչ է . Չկրցան մեր խօսքերն իմանալ . Մեզ թողուցին ու իրենց տուները դացին . Տասուերկու եղբայր ենք . Այդ մարդիկն Աստուծոյ ծառաներն են . Շատ եղբայրներ ունիմ . Երկու տուն ունիք . Քսան ծառայ ունիք . Գիրքեր ունինք . Այն տունը մի մտնէք . Այս քաղաքը ծնանք . Այս տեղէն հեռու է . Այս տաճարէն խոթեցէք զանոնք . Իմ բարեկամիս երթանք :  
 Ամբաստանութիւն ընել , Բան չկերած , անասող  
 «Տբասրանել Մէկդի , Դէն»է

11. Հրահանգ

Եղբօրը տունը մտաւ . Բարեկամներն անոր եկան . Թուղթը գրելու ատենը ծառաները զանի կանչեցին . Աթոռին վրայ նստելով ժողովուրդը կը դատէր . Երբ հիւանդը բժշկեց , զանի իր տունը զրկեց . Բարեկամներն անոր կ'ըսեն . Մեզի հետ գալ կ'ուզէր . Շատ օրեր հոն կեցանք , ու անոր դալուն կը սպասէինք . Բանտին մէջն էր , ու եղբայրներուն կ'աղաչէր որ զինք ազատեն . Չանի լերանը վրայ հանելէն ետքը՝ եղածներն անոր պատմեցին . Այն մարդը ձեզի զրկեցի որ իմ վրայով ձեզի լուր տար . Եթէ այդ մարդիկը կը սիրէք , մի չարչարէք զանոնք . Երբ զանի երկու մղոն տարին , շատ յոգնեցան . Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ զանի տեսնելու . Անոր համբաւը բոլոր այն երկիրը տարածուեցաւ . Երկու օր անոնց հետ քալելէն ետքը գեղ մը հասանք . Տաճարին առջեւը կենալով

ձեր եղբորը հետ կը խօսէի . Իմ որդիքս ձեր բարեկամներն են . Ես օտար չեմ :

Յողմիմ , վաստակեմ Պղտիկ (որդի) , Կրտսեր

12. Հրահանգ

Ես զանոնք տեսած եմ . Դուք այն գիրքը կարդացած էք . Աստուած այս աշխարհս ստեղծած է . Եթէ անոնք հոս եկած ըլլային . Դուն իմ վրայովս լսած ես . Մենք անոնցմէ երկու թուղթ ընդունած ենք . Ես այն մարդը տեսած չեմ . Անիկա ասանկ խօսք մը ըսած չէ . Մենք մէկը սպաննած չենք . Եթէ այն եկած չըլլար . Այն քաղքէն ելաւ ու մեզի եկաւ . Քու եղբայրդ եւ քոյրդ մեզի եկան . Իմ հարմիքս եկէք . Իր այդին մշակներ զրկեց . Զանոնք տասուերկու օր կը սորվեցընէր . Նոյ եւ անոր որդիքը տապանը մտան . Հոգին ու մարմինը դժոխքին մէջ կորսնցնելու կարող է . Ծերերը եւ երիտասարդները սպաննեցին . Մանչեր ու աղջիկներ ունեցաւ . Անոնք մեր որդիներն են . Այս աղաքն իմն են . Երբ զանի տեսան , անոր քովը ժողովեցան . Հաւն իւր ձաղերը թեւերուն տակ կը ժողվէ . Անոնք քահանայապետին սրահը մտան . Շատերը երբ լսեցին , անոր հաւատացին . Քու որդիդ հոս բեր . Հոն մարդ չկար . Բան մը չլսեցինք . Այն տեղէն հեռացան . Մեզի մօտեցաւ . Յովսէփին եղբայրներն Եգիպտոս իջան ցորեն գնելու . Յովսէփ իր եղբայրները տեսաւ ու զանոնք ճանչցաւ . Եգիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն եղաւ . Մեծ որդին սպաննուեցաւ . Պղտիկը հօրը կ'ըսէ . Քու որդիդ ըլլալու արժանի չեմ :

13. Հրահանգ

Իմ եղբայրներս քենէ կը վախնան . Աստուծմէ չեմ վախնար . Անոր կ'աղաչէին որ իրենց հետ երթար . Ե-

րեք տաղաւար չինենք . Անոր գլուխը կտրեցին ու թագաւորին բերին . Երբ թագաւորը տեսաւ , շատ զարմացաւ . Անոր խօսքերուն մօտիկ չէր ընել . Յակօր իր հայրերուն գերեզմանը քաղուեցաւ . Պատերազմի լուրեր պիտի լսէք . Անկիւն մը քաղուեցաւ ու կը նըստէր . Տէրն իմ օգնականս է . Իմ ձեռքիս տակ զինուորներ ունիմ . Շատ օրեր նեղութիւն կրեցի . Մենք անոնցմէ վախ չունինք . Յունաց բոլոր ուսմունքներուն մէջ կրթուեցաւ . Մեզի շատ ստակ հարկաւոր է . Մեզի հետ անոր պալատն եկան . Անոր կ'աղաչէին որ իրենց սահմաններէն երթար . Մենք գերքերը սորված չենք . Այն մարդը տեսած չեմ . Եթէ այս խօսքերն ըսած չըլլայի . Քար մը նետելու չափ տեղ անոնցմէ հեռացաւ . Քառասուն օր չկերաւ ու չխմեց . Տասը տարի անկողին ինկած էր . Բերդն ապաւինեցան . Երկինք ելաւ ու Աստուծոյ աջ կողմը նստաւ . Անոր տասը դահեկան տուաւ . Հնազանդ որդին իր հայրը կ'ուրախացնէ . Զանի կը խրատէր որ իր խօսքերուն մօտիկ ընէր . Բազմութիւնը դաշտին վրայ ցրուեցաւ . Ղեռներէն ու ձորերէն անցանք :

Մտիկ ընեմ , անստմ Նեղութիւն կրեմ , քառասու  
Քաշուբիմ , արտնչնանամ պէ՛մ  
Վախս երկիւղ Եյնամ (անկողին) , աղէտ  
Կրթութիմ , վարժեմ Դնիմ  
Հարկաւոր , պիտոյ Ուրախացնեմ , արախ տու  
Քար մը նետելու չափ տեղ , նե՛մ  
Կարեմից ք

14. Հրահանգ

Եթէն օր բանտին մէջ մնաց . Ութ հոգւոյ չափ ջրհեղեղէն աղատեցան . Զիս մահուընէ փրկէ , Տէր . Այն տեղին մարդիկը զանի ճանչցան . Վայրենի աղգերու ընակարանները մտաւ . Գետին քովէն կ'եր-

Թար . Ասիկա քու սիրոյդ համար ըրի . Ատելութենէն զանի սպաննել տուաւ . Տրտութենէն հիւանդացաւ . Իրենց բարեկամները թշնամիներուն ձեռքը մատնել կ'ուզեն . Անոնցմէ ոմանք մեղի եկան . Անոր ծննդեան ատենը շատերը պիտի խնդան . Անոր ներս մտնելու ատենն ամէնքն ալ ոտք ելան . Անոր ոտքն ինկաւ եւ կ'աղաչէր . Քաղաքը հասած ատենը բարեկամները զանի դիմաւորեցին . Երբ ասիկա ըսաւ , ամէնքը լռեցին . Մեզի օգնէ , քանզի ահա կը կորսուինք . Ամէն բան քուկդ է . Այս ամէնն իմս է . Երկինք իմ աթոռս է . Գուք իմ որդիքս էք . Շատ բարեկամներ ունիք . Ուրախութենէն գնաց ու իր ստացուածքը ծախեց . Իմ զօրութիւնս դուն ես . Գուք մեր պարծանքն էք . Եղբայրներս եւ քոյրերս հոս են . Քու ծառաներդ եւ աղախիներդ եւ անասունդ չդործեն . Ձեր բարի գործերը տեսնեն . Անուշ խօսքեր խօսեցաւ . Բարեբարոյ կնոջ որդի էր . Անգգամ եւ լեզուանի մարդու հանդիպեցանք . Նենգաւոր մարդոց հետ հաց մի ուտեր . Քու բարեկամներուդ հետ ուրախ եղիր . Ձկնորսներն ուռկանը կը քաշէին . Մեր վրայով շատ բան կը պատմեն . Ես երբէք անոր տունը դացած չէի , բայց ան ստէպ իմ տունս կու գար . Զօրքը դեռն անցնելով քաղաքն առաւ . Քաղաքներ շինեցին եւ անոնց մէջ բնակեցան . Աբրահամ իր ձերութեան ատենը շատ հարուստ եղաւ . Իսահակ անունով որդի մը ունեցաւ , որուն աչուրները կուրցան ձերութեան ատենը . Հայկ իր որդիները եւ թոռներն առնելով , Հայաստան եկաւ . Բեկին հետ կուուեցաւ եւ անոր յաղթեց :

(Ութ հոգւոյ) չափ , էջերէս  
 Ազատիմ , ապրիլս  
 Փրկեմ , ապրիլս-ցանկս

Գիմաւորեմ , Էնդ սուս Էն-  
 Էնս  
 Լուեմ , Լուս Էնիս

Բնակարան , բնակութիւնս  
 Ոտք ելլեմ , յոյս կ'ս  
 Քաշեմ , յէրէս  
 Կուրնամ (աչքը) , Լապիս

15. Հրահանգ

Այս մարդը հիւանդ է . Քու բարեկամդ աղքատ է . Այս տղան իմ որդիս է . Այս մարդը ձեր թագաւորն է . Ատնք մեր բարեկամներն են . Այս մարդիկը ձեր ազդականները չեն . Այս ձերունին այս քաղքին դատաւորն է . Ատնք մեր թագաւորին զինուորներն են . Այս աղջիկը քու դուստրդ է . Ձեր թշնամին չենք . Հայրս այն քաղքին իշխանն էր . Այս երկու մարդիկը Յունաց զօրավարներ են . Հոն եղողները բռնեցինք . Մտնողները կ'արգելուին . Տեսնողներն ու լսողները կանչեցինք . Ասիկա ընողը տեսայ . Ձեզ մատնողն սպանեցին . Մեզի հետ խօսողը կը ճանչնամ . Այս քաղաքը պզտիկ է , բայց շատ գեղեցիկ է . Այդ պարտեզը մեծ չէ , բայց անոր մէջ շատ ծառեր կան . Մեր հանդերձը հին է , բայց մեր ոտքի ամաններն հին չեն . Այս լեռները բարձր են , բայց երկրին օքն առողջ չէ . Այն գետին ջուրերը յսամիկ են . Գետն ալ խորձենկ է . Քաղքին մէջ կ'աիւ եղաւ եւ շատ վիրաւորներ եղան . Շատ օրեր անոր տունն եղայ , բայց եղբայրդ ինձի հետ չէր . Մենք ձեռնէ գոհ ենք , գուք ալ մենէ գոհ էք . Տեսած մարդդ գովութեան արժանի չէ . Այն կիներն այրի , աղքատ եւ օրուան հացին կարօտ էր . Այդ տղան իմ եղբայրս է . Այդ աղջիկն աղքատ մօր մէկհատիկ աղջիկն է . Այդ տղաքն իմ որդիներս են . Քաջ եղիք , ով մարդիկ . Որդեակ , ինձի հետ ուրախ եղիր . Եղբայր , սղջ ես . Ինձի ուլ մը չտուիր որ բարեկամներուս հետ ուրախանայի . Քու անունդ սուրբ ըլլայ . Ձեզի ծառայ ըլլանք . Ձեր տունները աւերակ ըլլան . Միշտ կ'ուրախանար . Քու ստակդ քեզի ըլլայ .

Ինծի որդի մը պիտի ըլլայ . Ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ . Ձեռնէ մեծը պղտիկին պէս ըլլայ . Ոչ իմ կամբս , այլ քուկդ ըլլայ . Ամբարտաւան մի ըլլար . Լսեցէք :

Ոտքի աման , օր ոտից Օրուան հաց , առտնդդդդ

16. Հրահանգ .

Հայրս պարտեղ մը գնեց . Գիրքեր գնեցինք . Քոյրդ պղտիկ գիրքը գնեց . Գնած գիրքդ ընտիր է . Եղբորդ գնելու տունը գեղեցիկ բայց շատ պղտիկ է . Ես ալ տուն մը գնեցի որ շատ մեծ է . Թուղթը գրեցիր . Հօրդ ինծի պարգեւած ձին ծախեցի . Դու ալ քուկինդ ծախեցիր . Իշխանը իւր կառքն ու ձիերը կը ծախէ . Հօրեղբայրս իւր պղտիկ որդւոյն համար գեղեցիկ գըլխարկ մը գնեց . Այս տղան երկայն նամակ մը գրեց իւր մօրը . Մեր հայրը այս պարտեղն ու այս այգին քու հօրաքոյրէդ գնեց . Մարդ մը հարմնիք ունէր . Բուրոր իւր բարեկամները հանչեց . Կինը իւր դրացիները կը կանչէ . Հովիւները ոչխարները կ'արածեն . Դուն խիստ մարդ մըն ես . Չցանածդ կը հնձես . Արձակեցէք ատոնք որ իրենց կերակուր գնեն . Մեր լապտերները կը մարին . Ձեր այդ իւղէն մեղի ծախեցէք . Վաճառականներուն դացէք . ու գնեցէք ձեզի . Ինծի թնչ կ'ուզէք տալ . Ես զանի ձեզի կը բերեմ . Ձեռքդ սնալը մի խոթեր . Ամենէն աղէկներն ամաններու մէջ ժողվեցին . Օտար էի եւ գիս ընդունեցիք . Քահանայակեան իր հանգերծները պատուեց . Այս կինն իր տղաքը կը սիրէ . Եղբայրներս եւ քոյրերս կը սիրեմ . Բարեկամներս եւ վարժապետներս ալ կը սիրեմ . Մազիկներդ ջրեցիր . Իմիններս եւ քուկիններդ ջրեցի . Քոյրս ալ իրենները ջրեց . Եղբայրներդ երկու շուն գնեցին որ շատ գեղեցիկ են . Կան կերակուրներ եւ

խմելիքներ որոնք , եթէ շատ ուտուին եւ խմուին , հիւանդութիւններ կը պատճառեն . Արաստոն քարի տեսակ մըն է որուն վրայ երկաթ չի բանիր . Մշակ անոնք են որ երկիրը կը գործեն . Վարժապետները ծոյլ տղաքը կը պարսաւեն , վութաջանները կը գովեն :

Ձի , երկաթ Պատճառեմ , քոյրծեմ  
Գլխարկ , խոյր Արաստոյ , արաստոյ  
Պնակ , սկաւառակ Քար , վէճ  
Խոթեմ , խեմ [ըլլէճճ Տեսակ , աչք [ծեճ  
Ընդունիմ (տունը) , Ժո Բանիլ (ներգործել) , քոյր-  
Ձրեմ , ուրգէճ Փութաջան , Ժէր  
Խմելիք , ըմպելի

17. Հրահանգ .

Տեսար մարդը որուն քեզ զրկեցի . Այն մարդը չաւսայ , բայց վաղը կը տեսնեմ . Փնտռածդ դտմր . Փնտրուածս չգտայ , չվնտռածս դտայ . Չանի դտաւ ու աւնոր հարցուց . Ներս չմտես . Պարտեղը մտաւ . Ամէնքն ալ մրախեցին ու քնացան . Փեսան եկաւ , ու պատրաստներն անոր հետ մտան հարմնիքը . Ստակն առնողը գնաց , գետինը (երկիր) վորեց , եւ ստակը ծածկեց . Այդ տունը մտիր ու տես . Այդ անպիտան ծառան դուրս հանեցէք . Չանի բռնեցին որ սպաննեն . Երբ խօսքը լինցուց , լեռը ելաւ . Դարձեալ գալով զանոնք քնոյ մէջ դտաւ . Անոր հետ եզողներէն մէկը ձեռքը երկնցուց , սուրը հանեց եւ ծառան զարկաւ . Ան աւան անոր երեսը թքին . Քեզի զարնողն ո՞վ է . Երբ դուրս ելաւ , ուրիշ կին մը զանի տեսաւ . Եղբայրներս եւ քոյրերս տեսմր . Տեսնք ձեր սպասաւորներն ու աղախինները որ պարտեղին մէջ ծառերուն շուքին տակը կը պտտէին . Մեր ճամբորդներն հասան . Այս խօս-

քը թագաւորին ահանջը հասաւ . Նթէ օղին տաքու-  
թիւնն անդատանները չտաքցնէ , պտուղները չեն  
հասնիր . Սպասաւորը խօսքը յայտնեց . Այդ գործը  
կրնաք գլուխ հանել . Ձանի թագաւորին առջեւ բե-  
րին . Երբ չկրցաւ համողել , դանի անիծեց . Եղբայրդ  
քնչ միտք ունի . Յունաստան երթալու միտք ունի .  
Այդ գիրքերը սեղանին վրայ դտանք . Ծովն ուռկան  
նետած էին . Թակոյկներու մէջ ջուր դրին . Անոր կար-  
միր քղամիդ հագուցին . Լաթերը հագաւ . Սուրդ մէջըդ  
կապէ . Նաւին կարասիներէն շատ բան ծովը նետե-  
ցին : Ունեցածը գործածեց :

Մրափեմ , ներհեմ	Համողեմ , աձեմ է հաւան
Քնանամ , է տուն ծորանեմ	Միտք ունենամ , զնորս ա-
Ծածկեմ , լստուցանեմ	ձեմ
Գարձեալ , մեռանէմ	Նետեմ } որչանէմ
Մէկը , մի ոմն	Գնեմ }
Օղին տաքութիւնը , որն	Հաղցունեմ , որչանէմ
Տաքցնեմ , զնորսուցանեմ	Մէջը , միջ
Գլուխ հանեմ , է չլուխ հա-	կապեմ , աձեմ
նէմ	Գործածեմ , որչանէմ է կէր

18. Հրահանգ

Ահա երկու քանքար վաստկեցայ . Շատ բան վաս-  
տրկեցաւ . Ըսելիքս լսել կ'ուղէս . Անոր ազարակը եր-  
թալ չուզեց . Ատոր ըրածը խօսուի . Շատ տրտմեցան  
եւ լռեցին . Հրապարակներու մէջ խօսեցեք . Ինծի  
հետ ծածուկ մի խօսիր . Ամէնքը դայթակղելու ալ ըլ-  
լան , ես պիտի չգայթակղիմ . Ձեր քոյրերն ո՞ր են .  
Մեր քոյրերն Հոռոմ են . Ձեր եղբայրներն ո՞ր են . Ա-  
նոնք Աթէնք երթալու համար ճամբայ ելան . Շատ  
անգամ խորհեցաւ , բայց բան մը չկրցաւ ընել . Պարս-

կաստանէն եկաւ ու Հայաստան ընակեցաւ . Ասանկ  
բան մը Հնդկաստանի մէջ չերեցաւ . Ինչո՞ւ համար  
կը նեղուիս . Քեզ նեղողն ո՞վ է . Վարժապետը զՏիգ-  
րան կը պարտաւէ . կ'ըսէ թէ չաշխատիր , ընկերնե-  
րուն հետ միշտ կուի կ'ընէ . Այդ գիրքին քեզի լինչ-  
պէս կ'երեւայ . Ինծի կ'երեւայ որ շատ ընտիր է . Այս  
տղաքը պիտի լան , երբ իրենց մայրը բաժնուի . Նթէ  
Աստուծոյ չհնազանդիք , խեղճ պիտի ըլլաք . Մեր ծնող-  
ներուն հնազանդ էինք , եւ մեր վարժապետներուն  
մտիկ կ'ընէինք . Խոհական տղաք իրենց մեծերուն  
միշտ կը հնազանդին . Նստող մարդոց նայեցաւ . Գերա-  
նը նախ քու աչքէդ հանէ , ու ետքը չիւղը եղբօրդ  
աչքէն հանելու նայէ . Խոտերուն արմատները տաքէն  
կը չորնան . Թեւը չորցաւ . Լեղուս չորցաւ . Ծարաւէն  
կը պապակիմ . Ջուր չըլլալէն ծարուած էինք . Աղ-  
քասներուն պէտք է ողորմիլ . Աստուած անոր ողոր-  
մեցաւ . Ողորմողը ողորմութիւն պիտի գտնէ . Իմ հան-  
դերձներուս ո՞վ դպաւ . Բարկացաւ ու ներս մտնել չէր  
ուզեր . Ձանոնք իրենց բարեկամ կը համարին . Կար-  
ծեց որ մեռած է . Նստելով վաստկած ստակը կը համ-  
բէր . Մեռնելու ալ ըլլամ , քենէ պիտի չզատուիմ :

Վաստկիմ , շահեմ	Ամբաստանեմ , աճբաստան
Լռեմ , լուս լինեմ	լինեմ
Ծածուկ , է ծածուկ	Խեղճ , լնորսուս
Ճամբայ ելնեմ , մեկնեմ	Մտիկ ընեմ , անասմ
Ընեմ (բան մը) , շէտրեմ	Խոհական , ճորտարժ
Պարսկաստան , Պարս	Մեծ , ասագ
Հայաստան , Հայ	Տաք , որսոյ
Հնդկաստան , Հնդկէ	Չորնամ , ցամաքէմ , ճասանամ ,
Նեղուիմ , որսուցեմ	չորանամ
Կուի կ'ընեմ , կոգեմ	Չըլլալէն , որս է չփոյէ

Ի՞նչպէս, որպէ՛ս  
Երևամ, ըստ  
Յամուռիմ, Բե՛նիմ

Մարուած ըլլամ, պատ՛իմ  
Իպչիմ, Բեր՛նիմ  
Կարծիմ, համար՛իմ  
Զատուիմ, Բե՛նիմ

19. Հրահանգ

Եթէ չյողնիս, եթէ շարունակ խաղաս, միշտ աղ-  
քատ պիտի ըլլաս. Քոյրերս միշտ իրենց վարժապետ-  
ներուն մտիկ կ'ընէին, շատ կ'աշխատէին, եւ քիչ կը  
խաղային. Եթէ Աստուծոյ, ծնողացդ եւ վարժապետ-  
ներուդ մտիկ չընես, երբէք երջանիկ պիտի չըլլաս.  
Այս աղան կուլայ, հաց չունի. Նոյ տապանին պա-  
տուհանը բացաւ. Երկու օր անոր քով կեցանք. Աա-  
թերս լուացի. Երուսաղէմ երթալու կը փութար. Ին-  
չու կը հեղգաս, ել. Փութա, ելիր երուսաղէմ. Զա-  
նի ձեռնու եկողները՝ մէկքի կեցան անկէ. Երբ ասի-  
կա լսեցին, շատ ուրախացան. Իր արցունքովն անոր  
ոտուքները կը թրջէր. Երբ գինովութենէն արթնացաւ,  
ան ատեն զգաց. Դեռ չէք զգար. Դառն կերպով լա-  
ցաւ. Երեսդ լուա. Իրենց լաթերը լուացին:

Յողնիմ, Վասպա՛րիմ  
Շարունակ, ցան՛ք  
Միշտ, հանապաղ  
Շատ (մկ) Բազման  
Քիչ, սակաւ  
Մեծեմ, հարկանեմ  
Մէկքի կենամ, ի Բաց կամ Դառն կերպով,  
Ուրախանամ, ինքամ  
Արցունք, արտասու-  
թրջեմ, ըսնամ  
Գինովութենէ արթննամ,  
սխա՛րի ի Բե՛նիմ  
Դեռ, որպէս  
Զգամ, զգամ, իմանամ  
Դառն կերպով, որպէս  
պէս

20. Հրահանգ

Հաց առնելու մտցան. կը խոստանաք ու չէք կա-  
տարեր. Այս ամէնը հասկցանք. Անոնք չհասկցան.

Գերեզմանը վազեց. Երամէն անդին ցատկեց. Ոտք  
ելաւ եւ կը ցատկոտէր. Երբ ձեռնին վրայով լսեց,  
դուրս ցատկեց. Հագած պատմուճանը հանեց. Մարդը  
հիւընոցաւ եւ մեռնելու մօտ էր. Ձեր հանդերձները  
հանեցէք, եւ քուրձեր հագէք. Իր անկողնին մէջ զօ-  
րացաւ. Ողբացէք եւ սղացէք. Հրամայէ որ մինչեւ  
երեք օր գերեզմանին պահպանութիւն ընեն. Չըլլայ  
որ աշակերտները գիշերանց գալով դանի գողնան.  
Ամպն անոնք մէ վերացաւ. Ասողնը կը դարձանային  
անոր խօսքերուն. Գթալով ձեռքը երկնուց, եւ անոր  
դպաւ. Ինծի մի դպչիր. Ձենէ ոչ մէկուն ստակին կամ  
հանդերձին ցանկացայ. Անոնք ալ իրենց տեղերը դար-  
ձան. Ագարակ մը ստացաւ. Ես շատ ստակով ստա-  
ցայ այս դիմուորութիւնը. Երուանդ, Երբ պիտի լը-  
ուացուիս. Քիչ ատենէն պիտի լուացուիմ. Եթէ մէկ  
անգամը ցաւ կը կրէ, բոլոր անդամներն անոր հետ  
կը կրեն. Հոգմայեցիք գան եւ մեր ազգը վերցունեն.  
Անոր աչուընները բացուեցան ու կը նստէր. Եթէ կա-  
նուխ իմանայինք, դարման մը կ'ընէինք. Ձեռուընները  
լուաց. Չջանացողը երբէք հարուստ չըլլար. Աստուած  
այս աշխարհը դեռ չստեղծած. Դեռ արեւը չեկած.  
Դեռ անոնք իրար չտեսած:

Հասկնամ, իմանամ, ի միս Մօտ, Բեր՛նի  
անոնամ  
Վազեմ, ըն՛նանամ  
(Երամէն) անդին, ըստ Չըլլայ որ, քոսցե  
Ցատկեմ, վաղեմ Գիշերանց, քիշերի  
Ոտք ելլեմ, յոյն կամ Երկնայեմ, յիմ  
Ցատկոտեմ, վազվաղեմ Շատ ստակով, Բազման ցնաց  
Մեծ, քան Քիչ ատենէն, ըստ հոսող  
Դուրս վազեմ, որիմ Գաւ կրեմ, վաղանամ

Հոռուայեցի , Հոռոճ  
Վերցունեմ , Բարնոճ  
Կանուխ , Վաղաբոյն

Ըլլամ , առնիճ  
Իեռ չ . . , մնչէ- , չե-

21. Հրահանգ

Եղբայրդ ո՛ր է . Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ . Քեզ տեսնելու կարօտէն կը մեռնիմ . Վախէն պոռացին . Գիտէր որ զանի նախանձէն մատնեցին . Ցաւին սաստկութենէն հանդերձները կը պատռէր . Իրենք զիրենք ազատելու աճապարանքէն աւարը թողուցին . Մեր սիրտերուն նեղութենէն կը մեռնինք . Այդ տղաքը սովէն պիտի մեռնին . Ծարաւէն մարած էինք . Խնտալէն կը մարէ : . Հայրս երեկ թեւերուս մէջ մեռաւ . Հայրդ մեռած է . Մայրս քիչ ատենէն պիտի մեռնի . Կը բաղձամ որ որդիս տեսնեմ , դեռ չմեռած . Գուն չմեռած պիտի մեռնիմ . Այդպէս շուտ ո՛ր կը վազես . Բժիշկ բերելու կ'երթամ , Հայրս մեռնելու մօտ է . Ե՛րբ ծնած ես . Հազար ութ հարիւր տասնին ծնայ . Եթէ ես տարի մը առաջ ծնած ըլլայի , քու ունեցած տարիքդ կ'ըլլայի . Հօրեղբայրս իր հօրը մեռնելէն ետքը ծնաւ . Պղտիկ քոյրս Մարտի ամսուն ծընաւ . Այս օրերս անոր տղայ մը պիտի ծնանի . Երբ ան խօսելու սկսաւ , ամէնքը լռեցին . Ատոր ինձի ըրածը քեզի պատմելու սկսիմ . Նստէ , եթէ կը հաճիս . Ուր որ տեղ գտնեմ՝ կը նստիմ . Հոն ժամ մը նստայ . Ատոր ըսէ որ նստի . Հոս նստեցէք մինչեւ որ ես դամ . Քու քովդ նստինք . Եթէ նստի , ալ չելլեր . Ինչո՞ւ չեո նստիր . Նստելու տեղ չկայ . Տեղ տուր որ այդ պարոնը նստի . Եկեղեցին ո՛ր նստած էիր . Քու մօրաքեռդ քով նստած էի . Ինչո՞ւ համար օտքի վրայ կը կենանք , պարոններ , հիւսա նստեցէք :

Քանի որ , յորձ հեղէ Ծուտ , աբաբ  
Պոռամ , աղաղակեճ Տարիք , րէր  
Ինքզինք , շնչն , յք . շնչն . Հաճիմ , հաճոյ լինեճ (տրա-  
Աճապարանք (աճէլէ) , փոյն կանով)  
Նեղութիւն , աստուպանդ Քովը , առնիճ  
Մարիմ (ծարաւէ , եւն . ) , Պարոն , րէր  
նոսաղեճ Ինչո՞ւ համար , զէ՞ է զէ  
Մարիմ (խնդալէն) , Լալա- Ոտքի վրայ կենամ , կամ  
նամ յորս  
Խնտալ , Ժողբ Հիւսա , աբաբ

22. Հրահանգ

Անոր ոտքը կ'իյնար ու կ'աղաչէր . Անոր վրդն ինկաւ ու կը համբուրէր զանի . Ծոյն ինկան ու խեղդուեցան . Անոնց վրայ ինկան ու զանոնք ջարդեցին . Զգուշացիր որ չիյնաս . Եթէ իյնամ , նորէն կ'ելլեմ . Մովսէս Փարաւոնին տանը մէջ մեծցաւ . Հայաստանին բարեօք տեղերը մեծցած էր . Մարմինը բերուեցաւ ու հօրը գերեզմանին մէջ թաղուեցաւ . Երբ թագաւորին առջեւը բերուեցանք , մեզի հարցուց . Կ'ուզէր երթալ , բայց արդելեցինք զանի . Զանի թողուցին ու փախան . Ինչո՞ւ չէք թողուր որ այդ մարդն իւր տեղն երթայ . Քեզ բռնեցի , եւ չեմ թողուր . Անմեղ արիւն մի թափեր . Նաւն իր բեռերը պարպեց . Զանի թողուց եւ գնաց . Ոչխարներ եւ արջառներ կը մորթեմ . Փչելով ողջ ողջ անոնց մորթը հանեցին . Նաւին բոլոր գործիքները եւ կարասիները ծովը նետեցին . Իր հանդերձները կը նետէր ու կը փախչէր . Այդ գաւաթները զինուով լեցուցէք . Տեղ մը մ'երթաք , մինչեւ որ ձեր ամանները լեցուին . Քեզի ըսելիք մը ունիմ . Ինձի ինչ ըսել կ'ուզես . Բան մը չեմ ըսեր . Միայն ըսէ . Ետքը քեզի կ'ըսեմ . Քեզի պատմածներէս հօրս բան մը չը-

սես . Անոր մի ըսեր որ անկողինն եմ . Քեզի ինչ ըսաւ . Ձեզի չըսի . Դեռ ինծի չըսիր . Կ'ուզես որ քեզի ըսեմ . Պէտք չէ որ մարդ ամէն լսածն ըսէ . Ասիկա ինծի ականջէս ըսաւ . Քեզի ըսածն ինչ է . Անոր ճշմարիտը միայն ըսի . Թող ուզածն ըսէ . Կը զըջամ որ ատիկա ըսի . Յօժարութեամբ կ'ըսէի , եթէ գիտնայի . Եթէ տարբեր բան մը ըսէի , սուտ կը խօսէի . Երէկ եղբորդ ըսի որ գայ զիս տեսէ . Ետ անգամ կ'ըսէր որ բարեկամին մահուանը վրայ կը ցաւի :

Աւիզն իյնամ , անկանի՛մ զպահանջս  
Ձարդեմ , կոորբէ՛մ  
Զգուշանամ , զքոյշ լինի՛մ  
Նորէն , միսանգամ  
Ելլեմ (ոտք , եւն) , կանգնի՛մ  
Մեծնամ , անանի՛մ  
Հայաստան , Հայոց աշխարհ  
Բարէօդ , հոգաստան  
Տեղ , լայր  
Թափեմ , հեղու՛մ  
Պարպեմ , ըսէ՛մ

Մորթեմ , զէնս՛մ  
Մորթը հանեմ , մորթե՛մ  
Ողջ ողջ , կենդանու՛յն  
Գործիք , կաշն՛ք  
Տեղ մը , ուրէ՛ք  
Եաքը , ապա  
Ականջէ , յանկանէ  
Միայն (մկր) եւեթ  
Յօժարութեամբ , մարտիւր  
Տարբեր , այլա՛նք  
Յաւիմ , ցաւ է (տրականով)

23. Հրահանգ

Կարգացածք ինչ է . Նոր գիրք մը կը կարգամ . Նոյնը մենք ալ կը կարգանք . Հայրս ատենօք Յունաց հեղինակները կը կարդար , հիմա ալ չի կարդար զանոնք . Այսօր Հերեդոտոսին պատմութիւնը կարդացի . Հայրս երեկ Թուկիտիդէսինը կը կարդար . Հիմա պիտի կարգամ գեղեցիկ գիրք մը գոր մէկը ինծի փոխ տուած է . Աւելի ստէպ կը կարգայինք , եթէ աւելի պարապ ժամանակ ունենայինք . Ուրեմն կարգալը կը սիրէք .

Կ'ուզես որ քեզի այս նամակը կարդամ . Աղէկ չես կարդար . Ի՞նչպէս պէտք է կարդալ այս բառը . Կը բաղձայի քեզի պէս կարդալ գիտնալ . Կարդացածներդ միտքդ թող գան . Տղաքս գրեթէ բնաւ չեն կարդար . կարդալ չեն ատորժիր . Ետ անգամ կը կրկնեմ անոնց թէ պէտք չէ կարդալէն ծուլնալ , որ սիրան ու միտքը միանգամայն կը շտկէ :

Այդ աթոռն իր տեղը դիր . Գլխարկս ո՛ւր դիր . Չանի սեղանին վրայ դիր . Հանդերձս առտուանց արնտուկը դրի . Եթէ ուրիշ տեղ գնէի , չէի կրնար իրիկուան զայն գտնել . Ո՛ւր կ'ուզես որ լաթերդ դնեմ . Դիր ուր որ կը հաճիս . Կը կարծես թէ անկողինն վրայ դրի . Միտքը դրաւ երթալ . Գլխարկդ գլուխդ դիր . Դնենք թէ հոն է . Չանի գլխուն վերեւը բարձի վրայ գնէ . Չանի բանտ դրին . Նոր գերեզմանի մէջ դրուեցաւ . որ քարի մէջ փորուած էր :

Ատենօք , երբե՛մ  
Հեղինակ (գրոց) , մարե՛նա  
էի  
Աւելի ստէպ , յանկանջն  
էս  
Պարապ ժամանակ , ժամ  
դարձայ  
Ուրեմն , ապա  
Աղէկ (մկր) , բարո՛ւ  
Միտքը գալ , յուշ լինել

Կրկնեմ (չատ անգամ ըսել) , յեղյեղու՛մ  
Կարգալը , ընթերցու՛ք  
Շտկեմ , յարդարե՛մ  
Առտուանց , այգու՛ն  
Ուրիշ տեղ , այլ ուրէ՛ք  
Կրնալ , մարդ լինել (տրականով)  
Կարծեմ , համարե՛մ  
Միտքը գնել , դնել է մտ  
Գլխու վերեւ , անար՛ք

24. Հրահանգ

Ատիկա ինծի համար առնեմ . Ո՛րչափ բան կուզես առնել . Կէսը կ'առնեմ . Եղբայրներս մնացածները թող

առնեն . Կ'ուղթս կանկ առնել . Ուզածդ առ . Ի՞նչ կ'ուղես որ առնեմ . Աղախինը թող տղան գիրկն առնէ . Այդ գիրպակէն (ճանֆէս) կ'առնէինք , եթէ եղբայրս ամէնն առած չըլլար . Այս ամէնն հասկցար . Ինծի կ'երեւայ որ բոլոր աշակերտներս այս պատուէրը չհասկցան . Ձանի անոնց ձեռքէն առի . Նաւերն առին ու գացին . Ինծի ձի մը բերէք . Երկու մոմ կը վառէր . մէկը գլխուն վերեւը , միւսը ոտքին դին . Ի՞նչ կ'ընես . Ինծի պատուիրածդ կ'ընեմ . Կ'ընենք՝ ինչ որ պարտաւ կան ենք ընել . Այդ տղաք բան մը չեն ըներ . Ինչո՞ւ համար բան մը չեն ըներ . Քանզի դուք ալ բան մը չէք ըներ . Ի՞նչ կ'ընէիր իմ ներս մտած ատենս . Կըրակ կը վառէի . Իրիկունն ինչ կ'ընէք . Քու առտուն ըրածդ ես իրիկունը պիտի ընեմ . Ուզածդ ըրէ . Միշտ պիտի ընենք ինչ որ պարտական ենք . Մէկու մը գէշութիւն չընես . Եթէ քեզի պէս հարուստ ըլլայի , շատ բան կ'ընէի . Այս մարդիկն ուրիշ բան չեն ըներ , բայց ուտել եւ խմել . Ձանի ինծի բարեկամ ըրի . Դատաւորներն անոր իրաւունք չըրին . Այս տղան իր հօրը կամքը կ'ընէ :

Մնացած , մնացորդ  
 Կանկ առնել , գրեղն առնում  
 Հասկնամ , 'ի մի որ առնում  
 Բերեմ , առնում  
 Ոտքին դին , անոգի  
 Պարտական եմ , պարտիմ  
 Վառեմ , լուցանեմ  
 Իրիկունը , յերեկոյնի  
 Գէշութիւն , շալ

Աղէկ , Կաջ  
 ճանչուոր , ծանօթ  
 Ինքզինք ճանչցնել , որալ  
 ծանօթս  
 Ո՞ւր (չարժում) , յո՞՞  
 Առաւօտուն , ընդ առաւօտին  
 Առտունը , ընդ առաւօտին  
 Կամաց , մեղմով  
 Թողում , լույլ որս

25. Հրահանգ

Հիմա քեզ կը ճանչնամ . Դու ալ դիս կը ճանչնաս . Հոս մէկը չեմ ճանչնար . Եղբայրդ դիս աղէկ կը ճանչնայ . Հոս շատերը կը ճանչնամ . Հոս շատ ճանչուորներ ունինք . Քոյրդ չէի ճանչնար . Հօրեղբայրդ ինծի շատ ծանօթ է . Ալ ձեզ պիտի չճանչնայ . Հարցուցէք անոր թէ դիս դեռ կը ճանչնայ . Կ'ուղեն որ այն մարդը ճանչնամ . Ես զանի դեռ չճանչցած՝ ինծի եկաւ . Ինքզինք անոր չճանչցուց . Քեզ քու ճանչուորներէդ մէկուն հետ տեսայ , որուն հետ ես ծանօթ չէի . Ձանի ձայնէն ճանչցայ . Յանցանքդ ճանչցիր .

Ո՞ւր կ'երթամ . Տուն կ'երթամ . Եղբայրս դպրոց կ'երթայ . Առաւօտուն մեր կ'երթայիր , երբ ես ներս մտայ . Մեր պարտէզը կ'երթայի . Առտուններն հոն կ'երթաք . Յօժարութեամբ կ'երթայի պտտելու , եթէ եղբայրս հոս ըլլար . Եթէ կը հաճիս , ես ալ քեզի հետ գամ . Մէկտեղ երթանք . Այնպէս շուտ մի քալեր , կամաց դնա . Այդ տղաքն մեր կ'երթան . Մեր գացած ճամբէն կ'երթան . Ո՞ւր է քոյրդ . Հայրը տեսնելու գնաց , վաղը պիտի դառնայ . Ձանի դիմաւորենք . Վաղը խնջոյքը երթալ կ'ուղես . Հայրս չի թողուր որ հոն երթամ . Քիչ ատենէն հոն կ'երթամ . Քիչ մ'ալ կեցիր որ մէկտեղ երթանք . Պէտք է որ երթամ . Երթալ չեն ուզեր . Այդ մարդիկն ինչ բանի կ'երթան . Չուրի կ'երթան :

26. Հրահանգ

Այդ տղան մեր կը տանիք . Ձանի դպրոց կը տանինք . Կ'ուղէք զանի տուն տանել . Մեր քոյրերը թատրոն կը տանինք . Ո՞ւր կ'ուղես որ քեզ տանիմ . Զիս ձեր պարտէզը տար . Յօժարութեամբ ձեզ հոն կը տանիմ . Քեզ կը տանէի , եթէ պարսպ ժամանակ ունենայի :

Չափէն աւելի կ'ուշանանք , եթէ ձեզ հոն տանինք .  
 Ե՛րբ պիտի դաս եղբայրդ հոն տանելու . Գիրքս ո՛ր  
 տարիք . Չգիտեմ ուր տարի . Տանելը չտեսանք . Այդ  
 պատանին հաղարապետին տար . Սպասաւորներուն  
 պատուիրեց որ զանի ներս սրահը տանին . Այս պտուղ-  
 ներէն քիչ մը ուտենք . Հիմա չեմ ուտեր , քանզի ա-  
 նօթի չեմ . Երբեմն շատ բան կ'ուտէինք , հիմա քիչ  
 կ'ուտենք . Երբ այն հացէն կերաւ , եւ գինիէն խմեց ,  
 հողի առաւ եւ սկսաւ խօսիլ . Ինչո՞ւ չէք ուտեր , պա-  
 րոններ , եւ չէք խմեր . Կերէք եւ խմեցէք . Բան մը  
 չկերան եւ չխմեցին . Ո՞վ է որ ոչխար ունի եւ անոր  
 կաթէն չի խմեր , կամ միտը չուտեր . Կան անասուն-  
 ներ որոնց միտը չուտուիր . բայց եթէ մէկուն սիրան  
 առնէր եւ անոնց միտէն ուտէր , անոր վնաս մը չէր  
 ըլլար . Այդ դրախտին մէջ եղած բոլոր ծառերէն կե-  
 րէք , բայց աս ծառէն մի ուտէք . Հոս խմելու բան  
 չկայ . Ահա գինի . խմեցէք , եթէ կը հաճիք . Ես բնաւ  
 գինի չեմ խմեր . Միայն ջուր կը խմենք , Թագաւորին  
 կենացը խմենք . Երէկ գաւաթ մը գինի խմեցի , այլ  
 այսօր չեմ խմեր . Մէկտեղ խմենք . Դուն բաւական  
 կերար , եւ ան չափէն աւելի խմեց . Մեր խմածը բա-  
 ւական է . Երէկ մեր խմած գինին այնպէս աղէկ էր ,  
 որ մենէ ամէն մէկը մէյմէկ շիշ խմեց :

Այդպէս ուշ ուտաի կու գաս . Պտտելէ կու գամ .  
 Առտուն ուտաի կու գայիր , երբ քեզի հանդիպեցայ .  
 Ամարանոցէն կու գայի . Երէկ չափազանց ուշ եկայ ,  
 բայց այս առտու շատ կանուխ եկայ . Շուտ կու գանք ,  
 եթէ ժամանակ ըլլայ . Կ'ուզէ որ ժամն ութին գանք .  
 Յարմար ժամանակ եկաք , ձեզի ըսելիք մը ունիմ . Քիչ  
 ատենէն կուգայ . Եկէք , պարոններ . Որդիդ եկաւ  
 եւ քեզ ուզեց . Բարեկամ , հոս եկուր :


Պտուղ , փրփ	Շուտ (ժամ մը առաջ) ,
(Մէկուն) կենացը , յարե-	վաչ
Բաւական , շա	Ժամը ութին , յոթերորդ
Աղէկ , ոչնչ-	ժամ
Մէյմէկ , մի մի	Յարմար ժամանակ , դէ-
Ուշ , անպահ	պող ժամ
Չափազանց , կորէ	Ուզել (պահանջել) , ելնոր-
	բել

27. Հրահանգ.

Ձեռքդ ինչ ունիս . Ձեռքս գիրք մը ունիմ . Կը կար-  
 ծէի թէ եղբորս կորսնցուցած մատնին ունի . Աս , ահա  
 դահեկան մը դուռը կեցող աղքատին համար . Սորվա-  
 ծըդ աղէկ միտքդ պահէ . Այդ տունն ո՞վ վարձու կը  
 բռնէ . Հօրեղբայրս զայն վարձու բռնեց . Երեք մշակ  
 վարձու բռնէ որ այգիիս մէջ գործեն . Այդ մարդիկը  
 բռնեցէք , եւ մի թողուք զանոնք . Ընդունածդ ինչ  
 է . Թագաւորէն պարզեւ ընդունեցի . Կը կարծես թէ  
 մենք ալ պիտի առնենք . Պիտի առնէք , եթէ արժանի  
 ըլլաք . Մէկը ձեզ իր տունը պիտի չընդունի . Մարդի-  
 կը մեզ շատ պատուով ընդունեցան . Այս գիրքը քեզի  
 կու տամ . Այդ արծաթն այդ աղքատ կնոջը տուր .  
 Այս հիւանդին քիչ մը գինի տուէք . Մայրն անոր  
 պտուղ , խնձոր , տանձ եւ նուա տուաւ . Պանդուկա-  
 պետին ըսէ որ ասոր պատառ մը միս , գաւաթ մը գի-  
 նի եւ մանանիխ եւ հաց տայ . Քու դրացւոյդ վեց  
 զրիչ , թուղթ եւ մելան տուինք . Այս ամէնը քեզի  
 կուտամ , եթէ քեզի ըսելիքս ընես . Որո՞ւ տանք այդ  
 գիրքը . Ձեր հօրը տուէք . Եթէ աղքատի ողորմութիւն  
 տաս , գաղտնի տուր . Հանդերձներդ ո՛ր են . Զանոնք  
 ինձի տուողին տուի . Գիտես հայրս երբ պիտի գայ .  
 Ձեմ գիտեր . Ըսէ որ գիտնամ . Գիտցիր որ մենք քու

սպառնալիքէդ չենք վախնար . Կրնամ ատիկա մեզի ընել . Այո , կրնամ . Ո՛ւր կ'երթաս . Հրապարակը . Կրնանք մենք ալ գալ . Դուք հոն չէք կրնար գալ . ըսաւ թէ կրնամ ընել եւ չկրցաւ ընել . Երէկ եւ առջի օրը չկրցայ անկողինէն ելլել , վաղը կարելի է կարենամ ելլել :

Աս (ըննէ) , Կալ Մելան , Բանա+ , Բլան  
Միտք պահել , անել է մոէ կրնամ , Կարող է  
Թուղթ , Կարեւս , Կարող կարելի է , Բերեւս



### ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԿԻՆ

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ

Մ

ՅՈՎՍԷՓ ԻՐ ԵՂՔԱՅԻՆՆԵՐԷՆ ԿԸ ԾԱՌՈՒԻ

Յակոբ Յովսէփը կը սիրէր իւր միւս որդիներէն աւելի , վասն զի զանի ծերութեան ատենն ունեցած էր : Յակոբ այլեւայլ գոյներէ ծաղկէ կապայ մը շինելով անոր հազցուց . Բայց Յովսէփին եղբայրները կ'ատէին զանի՝ աւելի սիրուելուն համար իրենց հօրմէն ու երկու երազներուն համար , զոր Յովսէփ անոնց պատմած էր : «Ինծի կ'երեւէր թէ» , ըսաւ Յովսէփի օր մը իր եղբայրներուն , «Ինծի կ'երեւէր թէ արտը ձեզի հետ որայ կը կապէի , եւ ահա իմ որաս կայնեցաւ , ու ձեր որաներն ելլելով իմ որայիս երկրպագութիւն կ'ընէին : Դարձեալ՝ ինծի կ'երեւէր թէ արեգակը , լուսինը եւ տասուերկու աստղ կը տեսնէի որ ինծի երկրպագութիւն կ'ընէին» :

Յակոբին որդիքը Սիւքէմ կոչուած տեղ մը դացած էին իրենց ոչխարներն արածելու : Յովսէփ անոնց հետ չէր , հայրն ալ զանի զրկեց որ անոնց վրայով լուր բերէ : Երբ եղբայրները զանի հեռուէն տեսան , իրարու ըսին . «Ահա մեր երազ տեսնողը , եկէք զանի մեռցունենք եւ ըսենք թէ գազաններէն փարատուելով կորսուեցաւ» : Բայց Ռուբէն , այն եղբայրներուն մէկը , որ զանի ազատել կ'ուզէր , խրատ տուաւ անոնց որ պատանին չմեռցունեն . անոնք ալ անոր մտիկ ընելով զՅովսէփ անշուր գուր մը նետեցին : Ետքը իրենց եղբօրը Յուդային խրատին հետեւելով գուրէն հանեցին զանի եւ ծախեցին քսան դահեկանի Խոմայելացի վաճառականաց որոնք ուղտերով խունկ կը տանէին Եգիպտոս : Ետքը Յովսէփին ծաղկէ կապան առնելով ու այծի ձագի մը արեանը մէջ թաթխելով զրկեցին իրենց հօրը որ ըսաւ . «Այս կապան իմ որդւոյս Յովսէփինն է . գէշ կենդանի մը կերաւ Յովսէփը» . Խեղճ հայրը լաթերը հանելով քուրձ հագաւ եւ իր որդւոյն վրայ սուգ ըրաւ երկայն ատեն :

2

ՅՈՎՍԷՓ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԾԱՌ ԿԸ

Խոմայելացի վաճառականներն Յովսէփը Եգիպտոս տանելով փարաւոն Թագաւորին սպարապետին Պետափրէսի ծախեցին : Յովսէփի սիրելի եղաւ իր տիրոջը որ զանի գործակալ դրաւ իր բոլոր տանը եւ բոլոր ստացուածներուն վրայ : Բայց որովհետեւ զիւրահաւան էր , մտիկ ընելով իր կնոջը խօսքին որ զրպարտութիւն կ'ընէր Յովսէփին վրայ՝ իր հաւատարիմ ծառան բանտ դրաւ :

ՔԱՂԱՌՈՐԻՆ ՄԱՏՌՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՆ ԵՐԱՋՆԵՐԸ

Փարաւոնին երկու պաշտօնեաները, մատուռակն (հարկահար) ու մատակարարը (վեփեփարճ), Յովսէփին եղած բանտն էին : Երկուքն ալ մէկ գիշերուան մէջ երազ տեսնելով աղաչեցին Յովսէփին որ երազն իրենց մեկնէ : «Կը տեսնէի», ըսաւ առաջինը, «որթ (աս) մը որ երեք ճիւղ ունէր խաղողի ողկոյզներով ծանրացած, զորոնք առնելով կը ճմլէի Փարաւոնին դաւաթին մէջ եւ անոր կու տայի» : «Երեք օրէն, » ըսաւ Յովսէփ, «քու պաշտօնիդ մէջ պիտի հաստատուիս, եւ այն ատեն յիշէ զիս, եւ աղաչէ թագաւորին որ զիս ասկէ հանէ, վասն զի անիրաւ տեղը կը կենամ այս բանտին մէջ» : Մատակարարն ալ իր երազը պատմելով ըսաւ . «Գլխուս վրայ երեք կողով կը կրէի, եւ ամենէն վրայի կողովին մէջ կային որաներ որոնք երկինքին թռչունները կ'ուտէին» : Յովսէփ անոր ըսաւ . «Երեք օրէն Փարաւոն քու գլուխդ կտրել պիտի տայ ու փայտէ կախել տայ, եւ հոն թռչուններուն կերակուր պիտի ըլլաս» : Ինչպէս որ Յովսէփ գուշակեց՝ այնպէս եղաւ . բայց մատուռակն իր պաշտօնին մէջ հաստատուելով խոստացածը մոռցաւ :



ՓԱՐԱՌՈՐԻՆ ԵՐԱՋՆ ՈՒ ՅՈՎՍԵՓՈՅ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Երկու տարի ետքը նոյն իսկ Փարաւոն երկու երազ տեսաւ : Անոր կ'երեւէր թէ կը կենար Նեղոսին եզերքը, որմէ կ'ելլէին եօթը գէր կովեր, որոնք կը սկսէին ջուրին քովն արածուիլ . ետքը նոյն գետէն կ'ելլէին ուրիշ եօթը նիհար կովեր որոնք առջինները կը կլէին :

Երկրորդ երազին մէջ թագաւորը կը տեսնէր եօթը հատ մէկ կոթէ ելած լեցուն հասկեր, եւ նոյնպէս մէկ կոթէ ելած ուրիշ եօթը պարապ հասկեր որոնք լեցուն հասկերը կը կլէին : Թագաւորն արթննալուն պէս վախնալով՝ Եգիպտացւոց բոլոր իզձերուն (ֆալէ) հարցուց . բայց ի զուր : Անատեն մատուռակն Յովսէփը յիշելով՝ անոր համար խօսեցաւ թագաւորին, որ անմիջապէս զանի իր առջեւ բերել տուաւ որ երազը մեկնէ : Յովսէփ Փարաւոնին երազները լսելով՝ անոր ըսաւ . «Առատութեան եօթը տարիներ պիտի ըլլան, եւ ետքը պակասութիւն պիտի ըլլայ եօթը տարի, որոնք իբրեւ թէ առջի առատութեան տարիները պիտի կլեն : Թող, ըսաւ, թագաւորը բոլոր Եգիպտոսի երկրին վրայ խնլացի մարդ մը դնէ, որ առատութեան տարիներուն հունձքին հինգերորդ մասը պահէ սովի ատենին համար» : Այս խրատը Փարաւոնին եւ անոր բոլոր մեծամեծներուն հաճելի երեւցաւ : «Ո՞ւր գտնեմ», ըսաւ Փարաւոն, «ասկէ աւելի խնլացի եւ հնարագէտ մէկը» . եւ յետոյ Յովսէփին դառնալով ըսաւ . «Ահա քեզ այսօր բոլոր Եգիպտացւոց երկրին վրայ դրի» : Ետքը մատնին հանելով Յովսէփին մատը դրաւ, անոր ջրօրէն կապայ հագցուց, վիզը մանեակ մը կախեց, եւ զանի իւր կողքերուն մէկը հանելով՝ քարոզ (լեւել) կանչել տուաւ թէ բոլոր ժողովուրդը Յովսէփին առջին ծնկան վրայ գայ, եւ զխոնայ թէ անիկա Եգիպտացւոց բոլոր երկրին վրայ իշխան դրուեցաւ : Այնուհետեւ Փարաւոն Յովսէփին որ երեսուն տարուան էր՝ Պետափրէսին, Արեգ քաղքին քուրմին, աղջիկն Ասանէթը կին տուաւ, որմէ երկու որդիք եղան, Մանասէ եւ Եփրեմ :

ՅԱԿՈԲ ԻՒՐ ՈՐԳԻԲԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՂՐԿԵ

Յովսէփին ըսածին պէս , առատութեան եօթը տարիները եկան , եւ անոնցմէ ետքը ուրիշ եօթը տարի պակասութեան : Անատեն սով եղաւ բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ եւ բոլոր աշխարհի վրայ . եւ ամէն դիւրէ Եգիպտոս կու գային ցորեն գնելու , զոր Յովսէփ ժողովելով պահած էր շտեմարաններու մէջ : Յակոբ իմանալով թէ Եգիպտոս ցորեն կայ՝ զրկեց հոն իր որդիքը որոնք տասն էին , քանզի պզտիկը Բենիամին իր քով պահեց : Յովսէփ ճանչցաւ իր եղբայրները՝ զինք անոնց առանց ճանչցնելու , եւ ձեւացնելով թէ լրտես են՝ անոնց ըսաւ . «Ի՞նչ Եգիպտոսի ելլելու եւ մըտնելու տեղերը դիտելու եկած էք» : «Ոչ , տէր , ըսին եղբայրները , «այլ մենք ցորեն գնելու եկանք : Տասուերկու եղբարք ենք , մէկ մարդու որդիք , որ Քանանացւոց երկիրը կը բնակի : Մենէ ամենէն պզտիկը մեր հօրը քով է , մէկն ալ մէջտեղ չէ» : Յովսէփ անոնց ըսաւ . «Ձեզ ասկէ չեմ թողուր , մինչեւ որ ձեր պըզտիկ եղբայրը գայ . զրկեցէք ձեռնէ մէկը որ զանի հոս բերէ» : Աս ըսելով զանոնք բանտ դրաւ . ետքը երրորդ օրը զանոնք անկէ հանելով ըսաւ . «Ձեռնէ մէկը հոս իմ քովս պատանդ մնայ , միւսները ցորենով մէկտեղ երթան , եւ երբ կը դառնաք , ձեր պզտիկ եղբայրը բերէք , որպէս զի գիտնամ թէ ձեր խօսքերը ճշմարիտ են» : Անոնք իրարու կ'ըսէին . «Նրաւամբ կը կրենք այս նեղութիւնները , վասն զի միտասցինք անոր , եւ չողորմեցանք անոր , երբ մեզի կ'աղաչէր» . եւ չէին գիտեր թէ Յովսէփ իրենց խօսքը կը հասկնար , վասն զի անիկա անոնց հետ թարգմանով կը խօսէր : Բայց Յովսէփ քիչ մը ատեն առանձնանալով լացաւ :

ՅԱԿՈԲԻՆ ՈՐԳԻԲԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ԴԱՌՆՆՍ

Երբ սովը բոլոր երկրի վրայ սաստկացաւ , Յակոբ ըսաւ իր որդիներուն . «Նորէն Եգիպտոս գացէք» : Յուդայ ըսաւ իր հօրը «Եթէ կ'ուզես որ երթանք , Բենիամինը մեզի հետ զրկէ . ես երաշխաւոր կ'ըլլամ քոյն , զանի ինչ ուզէ» : «Եթէ այնպէս է , ըսաւ Յակոբ , ըրէք ինչպէս որ ձեզի հաճոյ է , բայց երկրիս ամենէն ընտիր պտուղներէն առէք որ ընծայ տաք տիրող մարդուն . առջինին կրկինն ալ ստակ առէք . ձեր քուրճերուն մէջ գտնուածն ալ տարէք , չըլլայ որ դաւաճանութիւն մը ըլլայ» : Եւ թողուց որ երթան՝ յանձնելով զանոնք Աստուծոյ խնամքին : Յովսէփ լսեց որ եղբայրներն եկան , եւ թէ Բենիամին ալ անոնց հետ է , հրաման տուաւ իր գործակալին որ ճաշ պատրաստէ : Երբ եղբայրներն անոր ներկայացան , իրենց ընծաներն անոր տուին , եւ մինչեւ գետինը ծռելով բարեւ տուին : Յովսէփ ալ անոնց մեծ քաղցրութեամբ բարեւ տուաւ , եւ հարցուց անոնց . «Ո՞րք է ձեր ձերուսի հայրը որուն համար կ'ըսէիք թէ Քանանացւոց երկիրն է» : Ետքը նայելով Բենիամինին որ իր մէկ մօրէ եղբայրն

էր՝ ըսաւ . «Ա՛յդ է ձեր սլզաիկ եղբայրը . Աստուած քեզի ողորմի , տղաս , եւ քեզ պահէ» , եւ փութալով դուրս ելաւ , քանզի սիրտն ելաւ , եւ ալ չէր դիմանար արցունքը բռնելու : Երեսը լուալէն ետքը դարձեալ եկաւ՝ ինքզինք բռնելով . եւ երբ կերակուրը պատարասուեցաւ , իր եղբայրներուն հետ սեղան նստաւ :

7

ՅՈՎՍԵՓ ՁԻՆՔ ԿԸ ՃԱՆՉՅՆԷ ԵՂԵՍՅՐՆԵՐՈՒՆ

Կերակուրէն ետքը պատուիրեց Յովսէփ իւր գործակալին որ հիւրերուն քուրձերը ցորենով լեցունէ , անոնց բերած ստախս ալ հոն դնէ , իր գաւաթն ալ Բենիամինին քուրձին մէջ դնէ : Անոնք հազիւ թէ քաղքէն դուրս ելած էին , գործակալն անոնց վրայ հասնելով արդելեց զանոնք , եւ իր տիրոջը գաւաթը կ'ուզէր անոնցմէ : Քուրձերը բացուեցան , եւ գաւաթը Բենիամինի քուրձին մէջ գտնուեցաւ : Անտան անոնք զարմանալով եւ զարհուրելով՝ իրենց լաթերը պատուելով քաղաքը դարձան : Յովսէփ անոնց ըսաւ . «Ինչո՞ւ համար դաւաթս դողցաք . չէք գիտեր որ չկայ մէկը որ կորուստ գիտնայ ինձի պէս : Հիմա գաւաթը գողցողն ինձի ծառայ ըլլայ , եւ դուք խաղաղութեամբ ձեր հօրը գացէք : Անտան Յուդայ պատասխան տալով ըսաւ . «Քու ծառադ մեր հայրը պիտի մեռնի , եթէ այդ պատանին անոր չդարձունեմ , քանզի ես մինչեւ ցմահ երաշխաւոր եղած եմ ատոր համար , ես ծառայ ըլլամ քեզ տիրոջս , եւ այդ պատանին թող երթայ իր եղբայրներուն հետ» : Յովսէփ այլ եւս չկրնալով համբերել , բոլոր Եգիպտացիները դուրս հանել տուաւ , եւ մեծ ձայնիւ լալով՝ ըսաւ իր եղբայրներուն . «Ես Յովսէփն եմ . հայրս դեռ ո՞ղջ է» : Եւ որովհետեւ ա-

նոնք վախէն պաղած եւ թմրած էին , կրկին ըսաւ անոնց քաղցրութեամբ . «Մօտ եկէք ինձի . ես Յովսէփն եմ , ձեր եղբայրը , զոր դուք ծախեցիք . բայց մի վախնաք . Աստուած զիս Եգիպտոս զրկեց որ ձեզ կերակուրեմ : Գացէք հօրս եւ պատմեցէք անոր ձեր տեսածը , եւ աճապարեցէք ինձի գալու : Գեսեմ պիտի բնակիք , եւ ես ձեզ կը կերակրեմ , վասն զի այդ սովը տակաւին հինգ տարի պիտի տեւէ» : Եւ Բենիամինի վիզն իյնալով համբուրեց զանի լալով . միւս եղբայրներն ալ համբուրեց մեծ գորովով . եւ անոնք հաւատացին անոր :

8

ՅԱԿՈԲ ԵԳԻՊՏՈՍ ԲՆԱԿԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Յովսէփի հրաման տուաւ որ իր եղբայրներէն ամէն մէկուն համար երկերկու հանդերձ շինուի . իսկ Բենիամինի համար հինգ՝ շատ զեղեցիկ հանդերձ շինել տուաւ , եւ երեք հարիւր արծաթի դահեկան տուաւ անոր : Նոյնչափ դահեկան եւ ուրիշ շատ բան զրկեց իր հօրը : Նոյն իսկ թագաւորը կառքեր տանել տուաւ որ զՅակոբ բերեն իրեններովն ու բոլոր ունեցածովը : Յակոբ իր որդեոցը բերնէն բոլոր եղած զէպքերը լսելով , թագաւորին կառքերն ու Յովսէփի ընծաներն ալ տեսնելով գոչեց . «Այսուհետեւ բանի մը չեմ փափաքիր , վասն զի որդիս Յովսէփ կենդանի է . դեռ չմեռած երթամ զանի տեսնելու» : Ճամբայ ելաւ Յակոբ իր ընտանիքովը եւ բոլոր կարասիներովը , որ Եգիպտոս երթայ : Յովսէփ ղիմաւորեց իր հայրը , ու անոր վիզն իյնալով , արցունքովը կը թրջէր զանի : Յետոյ զանի ներկայացուց Փարաոնին , որ հարցուց Յակոբին թէ քանի տարուան էր . ան ալ պատասխան տալով ըսաւ . «Նրկրի վրայ իմ պանդխտութեանս

տարիներուն թիւը հարիւր եւ երեսուն է . իմ հայրե-  
րուս տարիներուն թիւէն քիչ , եւ ցաւով ու հեծու-  
թեամբ լեցուն » : Յովսէփ Փարաւոնին հրամանաւը Գե-  
սեմի , բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ ամենէն պողա-  
բեր երկիրն , իր հօրը եւ եղբայրներուն տուաւ իբրեւ  
ստացուած :

9

ՅԱԿՈԲ ԻՐ ՈՐԳԻՆԵՐԸ Կ'ՕՐՀՆԷ ՈՒ ԿԸ ՄԵՌՆԻ

Յակոբ Եգիպտոս տասնուեօթը տարի ալ ապրեցաւ :  
Անատեն տեսնելով որ պիտի մեռնի՝ երգում ընել տուաւ  
Յովսէփին որ զանի իր հայրերուն գերեզմանը թաղէ .  
ետքը օրհնեց Յովսէփին երկու որդիքը Նփրեմ եւ Մա-  
նասէ : Յետոյ իր բոլոր որդիքն անկողնին բոլորովը  
կանչելով անոնց ամէն մէկուն խօսեցաւ եւ օրհնեց  
զանոնք : Ռուբէն որդին յանդիմանեց անոր գործած  
մէկ մեծ յանցանքին համար . Շմաւոնն ու Ղեւին ալ՝  
անոնց Սիւքեմացիներէն առած անօրէն վրէժխնդրու-  
թեանը համար : Երբ Յուդային եկաւ , ըսաւ անոր .  
« Դուն գովուիս քու եղբայրներէդ , եւ ձեռքդ քու  
թշնամիներդ լծոյ տակ դնէ » : Յակոբ խօսելէն դադ-  
րելով ոտուքներն անկողնին մէջ տարածեց ու մեռաւ :  
Յովսէփ տեսնելով որ Հայրը մեռաւ , ինկաւ անոր վրայ  
եւ արցունքով համբուրեց զանի : Ետքը Եգիպտացի  
դի պատողներուն պատուիրելով որ անոր մարմինը  
պատեն երկրին սովորութեանը համեմատ , զանի ան-  
ձամբ եղբայրներուն հետ Քանանու երկիրը տարաւ ,  
ու մեծ պատուով դրաւ զանի Մակիեւայ քարայր կոչ-  
ուած գերեզմանին մէջ , Քերրոնի մօտ :

XO

ՅՈՎՍԵՓՍ ՄԱՀԸ

Յակոբին մահուընէն ետքը Յովսէփին եղբայրները  
վախնալով թէ չըլլայ որ Յովսէփ իրենց ըրած գէշու-  
թիւնը յիշէ , աղաչեցին անոր որ իրենց ներէ . անիկա  
ալ զանոնք քաղցրութեամբ եւ սիրով հանդարտեցուց :  
Անիկա անատեն յիսուելէն տարուան էր , եւ յիսու-  
նուչորս տարի ալ ապրեցաւ՝ միշտ սիրելի եւ յարգելի  
ըլլալով Եգիպտացւոց առջեւ որոնց փրկիչ եղած էր :  
Իր մեռնելէն առաջ ըսաւ իր եղբայրներուն . « Աստ-  
ուած օր մը ձեզի նայելով պիտի հանէ ձեզ ասկէ որ  
մեր հայրերուն տուած երկիրը տանի : Երգում ըրէք  
ինձի որ ոսկրներս ձեզի հետ կը տանիք » . անոնք ալ  
անոր երգում ըրին , երբ Յովսէփ հարիւր տասը տար-  
ուան վախճանեցաւ , անոր մարմինը դմառուեցաւ ու  
դադաղի մէջ դրուեցաւ՝ Իսրայելի որդւոց Եգիպտոսէն  
մինչեւ ելլելը Քանանացւոց երկիրը երթալու համար :



### ԱՅԼԵԻԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

X

ՇՆԻԿ

Տղայ մը օր մը առուի մը ջրով պտտելու կ'երթայ ,  
եւ կը հանդիպի հոն քանի մը չար տղոց որ պղտիկ  
չուն մը առուին ջուրերուն մէջ խեղդել կ'ուզէին : Տղան  
խեղճ պղտիկ անասնոյն կը գլթա , զանի կը գնէ եւ ի-  
րեն հետ տուն կը բերէ : Շունը շուտով իւր բարերա-  
րին այնպէս կը վարժի , որ անիկա ուր որ կ'երթայ՝

անոր ետեւէն կը պատի : Գիշեր մը երբ տղան անկողին մտնել կ'ուզէր , շու՛նը սկսաւ հաչել , եւ չէր թողուր անոր որ քնանար : Պատանին շունին ինչու համար հաչելը դիտնալ ուզելով՝ ճրագ մը առաւ , եւ երբ ասդին անդին կը պտտէր բան մը տեսնելու , մէկէն անկողնին տակ ահուելի տեսքով մարդ մը տեսաւ , եւ հասկցաւ որ դող էր : Վախէն պռռալուն պէս , բոլոր տունին մէջ եղողները եկան զուլը ժողովուեցան , եւ գողը բռնելով դատաւորին մատնեցին : Երբ հարցուփորձ եղաւ , խոստովանեցաւ մարդը թէ միտքը դրած էր բոլոր տունին մէջ եղողները մէկիկ մէկիկ սպաննել՝ պատանիէն սկսելով , յետոյ տունը կողոպտել :

Անատեն չնորհակալ եղաւ տղան Աստուծոյ որ այնպէս անփնաս ազատեց զանի , եւ ըսաւ . Ո՞վ երբէք կրնար երեւակայել թէ շունի ձագ մը որուն ես կեանքը փրկեցի՝ պիտի փրկէր իմ կեանքս :

2

ԼԱԻ ԳՐԱՅԻՆՆԵՐ

Ձաղացպան մը պզտիկ տղայ մը ունէր , որ առուի մը եզերքին մօտ խաղալու ատենը՝ ջուրն ինկաւ : Ատաղձագործ մը որ առուին անդիի դին կը բնակէր՝ եղածը տեսաւ , եւ իսկոյն ջուրը նետուելով տղան ողջ հանեց ու հօրը ներկայացուց : Տարի մը անցնելէն ետքը՝ յանկարծ գիշեր մը ատաղձագործին տանը մէջ կրակ պատահեցաւ : Բոցը տունը բռնելէն ետքը ատաղձագործն իմացու , եւ հաղիւ ինքը , կինը եւ որդիքը կրցան ազատիլ , Բայց ազատելու աճապարելէն մոռցան առնել ամենէն պզտիկ տղան որ իրր երկու տարեկան աղջիկ մըն էր : Տղուն ազաղակը բորքոքած կրակին մէջէն կը լսուէր . հայրն ու մայրը դառն կերպով կուլային ,

բայց չկար մէկը որ մտնելու եւ տղան ազատելու համար ձակէր : Անատեն ջաղացպանն աճապարելով եւ կրակին մէջ դիմելով կ'առնու կը բերէ տղան անարատ , եւ հօրը կուտայ ըսելով . Օրհնեալ ըլլայ Տէրը որ ինձի պատահութիւն տուաւ քու ինձի ըրած երախտիքդ հատուցանելու . դուն իմ մանչս ջուրէն հանեցիր , ես ալ Աստուծոյ օգնութեամբ , քու աղջիկդ կրակէն ազատեցի :

Երբ երկու տղաքն ալ չափահաս եղան , ջուրէն հանուողը կրակէն հանուածն իրեն կին ըրաւ :

5

ՎԱՐԴԻ ՅԱՌԸ

Աղքատ կին մը աղջիկ մը ունէր , որ վարդի մատաղ տունկ մը տնկեց հողէ ամանի մէջ , եւ ընակած խուցին պատուհանին առջեւ դրաւ : Գարնան օրեր էին , եւ տունկը վարդի կոկոններով (գօնչա) լեցուն էր . Օդն աղէկ եղած ատեններ՝ աղջիկը վարդին ծառը պատուհանէն դուրս կը թողուր , եւ իրիկուան դէմ , երբ արեւը մտնելու վրայ կ'ըլլար , ներս կ'առնէր : Պատահեցաւ որ իրիկուն մը տունկը պահելու փոյթ չըրաւ , ինչպէս որ սովոր էր ընել , քանզի ըսաւ թէ հարկ չէ , վասն զի օդը տաք եւ մեղմ է : Բայց երբ առտուն ելաւ , վարդին տունկը ցուրտէն չորցած տեսաւ : Կուլար , երբ տունկին կը նայէր , ու տրտմութենէն կ'ըսէր . Ահա մէկ անմտութիւնն այնչափ աշխատութեանս արդիւնքը ջնջեց : Անատեն մայրը պատասխան տուաւ անոր ըսելով . Այդ պզտիկ դիպուածը որ քեզի այնչափ ցաւ կը պատճառէ՝ կրնայ քեզի մեծ օգտակարութեան մը պատճառ ըլլալ , Ասկէ սորվէ թէ ինչ որ ցուրտը ծաղկած վարդի տունկին ըրաւ՝ նոյնը կ'ընէ

բարուց ապականութիւնն անմեղութեան, եւ թէ ինք-  
զինք մոլութենէ զերծ պահելու համար շարունակ  
փոյթ եւ միշտ զգուշութիւն պէտք է :



ԸՆԿՈՒՋԻ ԿԵՂԵՒՆԵՐ

Ծեր կոմսը Ա. ճշմարտութիւնն ու արդարութիւնը  
շատ կը սիրէր : Քանի մը չար մարդիկ աս բանին հա-  
մար անոր բարկացած էին, այնպէս որ մէկտեղ եր-  
դում ըրին եւ զանի կորսնցնելու ետեւէ էին : Եւ ար-  
դարեւ շատ ստակ տուին չարագործ մարդու մը որ  
զանի հետեւեալ օրը գիշերանց սպաննել խոստացաւ :

Ազնուական կոմսը վերահաս վտանգին ամենեւին չէր  
սպասեր : Անոր ջեռորդիները, սիրուն տղաք, իրիկ-  
ուան դէմ անոր եկան : Կոմսն անոնց գալուն վրայ  
ուրախանալով, հանեց պտուղ խնձոր, տանձ եւ ըն-  
կոյզ : Երբ տղաքը մեկնեցան, կոմսն ուղեց քնանալ,  
եւ ինքզինք Աստուծոյ պաշտպանութեանը յանձնելով  
անկասկած քնացաւ : Բայց կէս գիշերուան ատենները  
չարագործը որ գաղտուկ առնը մտած էր՝ կամացուկ  
մը կոմսին սենեակը մտաւ, մինչ անիկա աղէկ մը քը-  
նոյ մէջ էր, պղտիկ լապտեր մ'ալ անկողնին ըով կը  
վառէր : Չարագործը դանակը հանելով, եւ ձեռքը վեր  
վերցուցած անոր կը մօտենար : Բայց մէկէն սենեկին  
մէջ այնպէս սաստիկ շառաչիւն մը լսուեցաւ, որ կոմ-  
սը քունէն արթնցաւ : Երբ ելլելով տեսաւ մարդը դա-  
նակը ձեռքը, շուտով առաւ զէնքերը որ անկողնին  
գլխուն վերեւը պատէն կախուած էին, եւ սպառնա-  
ցաւ զանի սպաննել : Մարդը սարսափելով դանակը  
ձգեց ու թողութիւն կը խնդրէր : Ետքը բանտ մտնելու  
ստիպուելով իրեն խրատ տուողներն յայտնեց :

Կոմսը կը մտածէր թէ այն շառաչիւնը պատճառողն  
ինչ էր որ զանի քունէն արթնցուց : Աչուքներն ասդին  
անդին պտտացած ատենը տեսաւ որ տղաքը գետինը  
ձգած էին ընկուզի կեղեւ մը, որուն վրայ կոխած էր  
չարագործը : Կոմսը դարմանալով ըսաւ . Աստուծոյ  
խնամքովն ընկուզի կեղեւ մը զիս ազատեց, եւ անըզ-  
գամներն արդարութեան սուրին մասնեց :



ՍՍԻՈՒՂԻ ԷՇԻՐԸ

Երեք հոգի Ամստերդամ քաղքէն ճամբայ ելլելով գոր-  
ծի մը համար մէկ տեղ գեղ մը կ'երթային : Ճամբուն  
վրայ կը տեսնեն գեղացի մը որ շտապով անոնց կու  
գար, եւ դէմքին տեսքէն կ'երեւար որ վերջին ատափ-  
ճան տգէտ եւ ապուշ էր : Երեք հոգին իրարու կ'ը-  
սեն . Եկէք ատիկա ծաղր բնեք : Աս կ'ըսեն ու հե-  
ռանալով իբր քարընկէց մը իրարմէ դատ ճամբուն վը-  
րայ կը կենան : Երբ գեղացին առջինին կը մօտենայ,  
անկէ սա խօսքը կը լսէ . Բարեւ, հայր Աբրահամ :  
Այս խօսքը լսելով գեղացին անոր բարեւ կու տայ գըլ-  
խով, եւ կ'ըսէ . Բարեւ : Անկէ քիչ մը հեռուն կը  
տեսնէ առջինին միւս ընկերը, որ անոր կ'ըսէ . Բարեւ,  
հայր Խահակ : Ասոր ալ գեղացին նոյն պատասխանը  
կ'ընէ : Ետքը անկէ առաջ երթալով կը գտնէ երրորդը  
որ կ'ըսէ . Բարեւ, հայր Յակոբ : Ան ատեն գեղացին  
անոնց միտքը հասկնալով, անոր կ'ըսէ . Կը խաբուիք,  
պարոններ, ես Աբրահամ չեմ, ոչ Խահակ, ոչ ալ  
Յակոբ, այլ Կիսեայ որդին Սաուղն եմ, եւ ելած եմ  
հօրս էջերը վնտոելու . բայց զարմանք, մերիններն էգ  
էին, իմ գտածներս պրու են :

ՅՈՎԱԿԻՓ ԿՍՅՍՐ

Յովսէփի երկրորդ , Գերմանացւոց կայսրը , իբր ան-  
 ծանօթ մը ըրած առջի ճամբորդութեան ատեն սուր-  
 հանդակներու կայան մը հասնելով՝ ձիերը փոխելու հա-  
 մար խնայուն մէջ ձի չգտաւ : Սուրհանդակապետն ան-  
 ծանօթ անձին ըսաւ որ քիչ մը սպասէ , խոստովանե-  
 լով թէ ձիերը զրկած էր իր որդւոյն կնուռքին հրաւիր-  
 ուած ազգականներն ու բարեկամները բերելու : Կայս-  
 րը մարդուն հետ խօսակցութեան սկսելով , եւ զանի  
 ողջամիտ եւ հայրենասէր գտնելով՝ յայտնեց անոր թէ  
 կը բաղձայ տղսն կնքահայր ըլլալ : Սուրհանդակապետն  
 անոր առաջարկութեանը զարմացաւ , բայց եւ այնպէս  
 անծանօթ մարդը նախամեծար համարելով իր հօրեղ-  
 բօրորդիէն որ երկրագործ էր՝ հաճելով յանձն առաւ :  
 Երբ եկեղեցի գացին , պաշտօնը սկսաւ : Մկրտող երէ-  
 ցը կայսեր հարցուց : Անունդ ի՞նչ է . ան ալ ըսաւ՝ Յով-  
 սէփ է անունս : Մականունդ ի՞նչ է , կրկնեց երէցը :  
 Ի՞նչ պէտք է քեզի ասիկա , ըսաւ կայսրը , ինձի կ'ե-  
 րեւայ որ Յովսէփի անունը միայն բաւական է : Ոչ ,  
 պարոն , ըսաւ Երէցը . կ'ուզենք ընտանիքիդ մական-  
 ունն ալ գիտնալ : Եթէ այնպէս է , ըսաւ ան ատեն  
 կայսրը , մականունս է Յովսէփի երկրորդ , կայսր Գեր-  
 մանիոյ : Երէցն ու հոն եղողներն ապշեցան , սուրհան-  
 դակապետն ալ թագաւորին ոտքն ինկաւ , որ զանի  
 վերուց մարդասիրաբար , եւ անոր շատ պարգեւներ  
 տալով խօստացաւ որ իւր սանուն յիշատակը չի մոռ-  
 նար :

ԱՆՏԵԱԼ ՄԵՏՈՒԹԻՒՆ

Դիոն աքսորուելով ապերախտ Միրակուսացիներէն ,  
 ապաւինեցաւ Մեղարացւոց քաղաքը , ուր Պրէդոտոս  
 անունով մէկը կ'իշխէր : Երբ պատահեցաւ որ ասիկա  
 օր մը մէկուն կողմէն իրեն եղած անիրաւութեան մը  
 համար իրաւունք պահանջէր , իշխանին պալատն եր-  
 թալով անոր ներկայանալ ուղեց , բայց մէկուն հոգը  
 չեղաւ այս երեւելի անձին առջի մեծութեանն արժա-  
 նի անոր պատիւ ընել : Երկայն ատեն զանի սպասել  
 տալէն ետքը՝ պատասխան տրուեցաւ թէ Պրէդոտոս  
 կարեւոր գործերու զբաղած ըլլալով չի կրնար այն օրն  
 անոր ընդունելութիւն ընել : Դիոնի բարեկամները որ  
 անոր հետ էին՝ կը զայրանային որ իբրեւ անարգ մէկու  
 մը հետ վարուեցան այն սքանչելի անձին հետ որ իշ-  
 խանութեան մէջ եղած ատենը միշտ մարդասիրաբար  
 կը վարուէր իրեն զիմոզներուն հետ : Բայց Դիոն ա-  
 ռանց տրտնջելու հանդարտութեամբ ըսաւ անոնց . Բա-  
 րեկամներ , թերեւս ես ալ նոյնն ըրած եմ Միրակու-  
 սայի մէջ իշխան եղած ատենս : Ժամանակ անցնելէն  
 ետքը այս մեծ անձն իր հայրենիքն ազատեց Դիոնե-  
 սիոս բռնաւորէն որ երկիրը կը հարստահարէր , եւ խա-  
 դաղութիւնն ու արդարութիւնը նորէն հաստատեց .  
 բայց սպաննուեցաւ Աթենացի Կալիպոսէն որ անոր  
 հիւրն ու բարեկամն էր : Իսկ Դիոնեսիոս բռնաւորը  
 Միրակուսայէն աքսորուելով եկաւ բնակեցաւ Կորնթոս ,  
 ուր վարժապետ ըլլալով ազգատուութեան մէջ մեռաւ :

ԳՈՂՆ ՈՒ ԽՈՋԸ

Երկու մարդ որ արջ մը կը պտտցունէին՝ օր մը ի-  
 բիկուան զէմ շատ ուշ գեղ մը հասնելով իջեւան մը

իջան ուր կ'ուզէին այն գիշերն անցունել : Պանդոկապետը որ իւր պարարեալ (պէսլի) խողը նոր ծախած էր՝ արջն այն ախոռը դրաւ ուր առաջ խողը կը կապէր : Այն գիշերուան ասեմները գող մը որ ցօրեկը եղածին տեղեակ չէր՝ գաղա պանդոկը մտնելով կ'ուզէր պարարած խողը տանիլ : Կամացուկ մը ախոռին դուռը բանալով մութին մէջ խարխափելով ներս կը մտնէ , եւ փոխանակ խողին գոր գտնել կը կարծէր՝ կը բռնէ արջը , որ ռաք ելլելով անոնի ձայնով երկու թաթերը մարդուն վրայ կը նետէ , եւ այնպէս ուժով կը պնդէ զանի , որ մարդը չի կրնար շարժիլ : Աւան ու յագնապն անոր ողբալի աղաղակներ հանել կուտան , այնպէս որ պանդոկին մէջ բոլոր քնացողներն անոր պոռալէն ցատկելով կ'արթնան , եւ դժուարաւ կրնան արիւնլուայ մարդը գազանին ճիրաններէն ազատել : Բայց անիկա այս վտանգէն ազատելուն պէս արդարութեան ձեռքը մատնուեցաւ :

9

ԵՐԵՍԷ ԻՆԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆ

Պարսից թագաւորներէն մէկն իր պաշտօնեաներուն զլխաւորին բարկանալով՝ զանի իշխանութենէն կը ձգէ եւ անոր տեղ ուրիշ մը կը գնէ : Բայց շնորհք մը ընելու համար՝ թոյլ կու տայ անոր որ բոլոր ընտանեօքը խաղաղութեամբ բնակելու համար իրեն տեղ մը ընտրէ , բոլոր ստացուածն ալ անոր կը շնորհէ : Բայց պաշտօնեան թագաւորին կ'ըսէ . Ի՞նչ պէտք են ինձի ասկէ ետքը այն ստացուածները զոր ինձի կ'ուզէ շնորհել ձեր վեհափառութիւնը . կ'աղաչեմ , հրաման տուէք որ

ամէնն ալ ինէ առնուի . բայց հաճի ձեր վեհափառութիւնը խնդրածս կատարել : ցօցուի ինձի ձեր տէրութեանը մէջ անպիտան եւ ամայի գեղ մը կամ աւան մը զոր խնամելով շենցնեմ : Անատեն հրաման տուաւ թագաւորը որ մարդ հանուի՝ պաշտօնէին փափաքածին պէս տեղ մը փնտռելու . բայց թագաւորէն զրկուողները գալով լուր տուին թէ՛ բոլոր տէրութեան մէջ գիւղ կամ աւան եւ կամ բնակութեան տեղ մը չկար որ անշէն եւ անմշակ ըլլար : Անատեն պաշտօնեան թագաւորին կ'ըսէ . Աղէկ գիտէի , արքայ , որ ինձի կառավարելու յանձնուած բոլոր երկրին մէջ չկայ բնաւ աւեր եւ անբնակ տեղ մը . այսպիսի տեղ մը խնդրած ատենս՝ նպատակս էր առիթ տալ որ անձամբ հասկնաք թէ ինչպէս չէն եւ ծաղկած ձեռի կը դարձնեմ երկիրը : Երանի թէ ձեր վեհափառութիւնը գտնէր ուրիշ պաշտօնեայ մը որ կարող ըլլար ետքը նոյն վկայութիւնը տալ :

XO

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Կարոյս ժ.Յ. Պետրոս մեծէն Բուլղաւայի քով յաղթուելէն ետքը՝ Երեք Սուետայի գիւղականք հայրենասիրութեան զարմանալի օրինակ մը տուին : Ասոնք իմանալուն պէս որ Սուետի թագաւորն յաղթուեցաւ եւ մեծ կարօտութեան մէջ էր , իրենց բոլոր աւելորդ բաները՝ կարասի , հանդերձ , դարի , չոր խոտ եւ անասուն ժողվելով , զանոնք մօտ քաղաքներէն մէկուն մէջ ծախելու գացին , եւ անոնցմէ մէկը ծախուածին գինն առնելով եւ ձի մը հեծնելով՝ աճապարանօք Սուետի բանակն հասաւ : Ո՛ւր է թագաւորը , կը գոչէր պահապաններուն հեռուէն , զիս անոր տարէք , անոր բան մը պիտի ըսեմ : Պաշտօնակալներէն մէկն անոր

մտիկ ընելով՝ զանի կարողութիւն առջեւ տարաւ : Երբ գեղացիին թագաւորին քով մտաւ՝ մէկէն ծնկան վրայ գալով ծոցէն երկու քսակ ոսկի հանեց , եւ թագաւորին տուաւ՝ յայտնելով անոր թէ ինչպէս մէկտեղ բերած էր այն դուժարը երկու ընկերներովը : Կ'ըսուի թէ կարողոս մարդուն պատմութեանը վրայ յարտօսը շարժեցաւ , եւ ըսաւ . Ազնուականներէս եւ ոչ մէկը հաւատարմութեան այսպիսի ապացոյց մը տուաւ : Յետոյ խոստացաւ գեղացւոյն որ անոր հայրենասիրութեանն իբր վարձ՝ զանի ազնուականութեան աստիճան բարձրացնէ , բայց երբ անիկա յանձն չառաւ եւ ընտրեց յաւէտ իւր վաղեմի բարեկամներուն հետ իր աստիճանին մէջ մնալ , թագաւորն իր առջեւ գրել տուաւ հրովարտակ մը որով այն ազնուամիտ գեղացիին եւ անոր երկու ընկերները բոլորովին հարկէ ազատ կ'ընէր , եւ իւր շնորհակալութիւնը ցուցնելու համար՝ մօրուքէն քանի մը թէլ փրցնելով հրովարտակը կնքած կնքամօմին տակը դրաւ :

xx

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՓԱՐՈՍԸ

Փարոսի աշտարակը որ Պաղոմէոս Եղբայրասիրի հրամանաւ շինուեցաւ՝ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկն էր , եւ ուրիշ անոր նման աշտարակներ որ նաւավարներու առաջնորդութեան համար ետքը շինուեցան՝ նոյն անունն առին : Անիկա քառանկիւն , ձերմակ մարմարէ , բազմայարկ մեծ շէնք մըն էր , եւ ունէր տանիք ուրուն վրայ ամէն գիշեր մեծ կրակ կը վառուէր , զոր նաւավարք շատ հեռուէն կրնային տեսնել : Շէնքին ձեւն հանող եւ գործը լմնցունող ճարտարապետը կը

կոչուէր Սոստրատոս : Ասիկա իւր ճարտարութեան համաբաւը յետնոց թողուլ վաւիաքելով , եւ իւր անունը թագաւորին անուանը հետ դնել չհամարձակելով՝ այսպիսի միջոց մը խորհեցաւ : Շէնքին ճակատը կրով ձեփելով՝ վրան թագաւորի համար գովեստի խօսքեր գրեց , իսկ ձեփին տակը քարի վրայ ուրիշ գրուած մը փորագրեց : Երբ դար մը ետքը ձեփը թափելով՝ Պաղոմէոսի վրայ գրուածը շնջուելով կորսուեցաւ , տակը փորագրուածը միայն կ'երեւար մեծամեծ նշանագիրներով այսպէս . «Սոստրատոս Անիդացի , փրկիչ աստուածներուն՝ նաւարկութեան օգտին համար» :

xx

ԳՐՕՇԱԿ

Գերձակ մը մեռնելու հիւանդութեան մէջ ինչպիսի՞ երազի մէջ զարմանալի բան մը կը տեսնէ : Անոր կ'երեւար թէ վերջին ատեանին մէջ կը կենար , մահուան հրեշտակն ալ կեցած կը բանար անոր առջեւ շատ մեծ դրօշակ մը (պայրազ) , տեսակ տեսակ կերպաներու (խումաչ) կտորներէ շինուած , զորոնք անիկա ատեն ատեն իր յաճախորդներէն (միւշթերի) դողցած էր : Նոյն վայրկենին անոր կ'երեւէր թէ դժողքը կը մօտէր : Մարդն այն տեսարանէն վախնալով քունէն ցատկելով ելաւ՝ բոլորովին պաղ քրտինքի մէջ :

Այս երազն իրեն Աստուծոյ ազգարարութիւն մը համարելով , ուխտ ըրաւ որ ալ չդողնար , եթէ ողջնար հիւանդութենէն : Քիչ ատեն ետքը իրաւ հիւանդութենէ կ'առողջանայ , եւ որովհետեւ իր առաքինութեանը վստահ չէր , կը պատուիրէ իր գործաւորներէն մէկուն որ դրօշակն իրեն յիշեցնէ , երբ լաթ մը կըտրելու ըլլայ : Մարդն ատեն մը իր ուխտին մէջ հաւա-

տարիմ մնալէն ետքը՝ օր մը թանկագին կերպուսէ մը լաթ կտրած ատենը՝ ազահութեան հոգիէն փորձուելով կը զիջանի ընչատիրութեան, եւ կտաւէն մաս մը կը գողնայ : Յիշեցնող մարդը պարապ տեղ անոր ազգարարութիւն կ'ընէ որ դրօշակն յիշէ : «Գու ալ դրօշակովդ չափազանց կը ձանձրացնես ականջներս, կ'ըսէ անոր դերձակը . երազի մէջ տեսած դրօշիս մէջ այս տեսակ կ'երպաս չկար» :

ԽՅ

ՍԱՓՐԻՉՔ

Սափրիչ մը որուն գործն էր մօրուք ածիլել եւ մազ կտրել՝ շատ յաճախորդներ իրեն ձգելու համար խանութին դուրսը պատին վրայ նկարել տուաւ մարդ մը որ ծոփն ինչալով խղճուելու մօտ էր, եւ ուրիշ մը անոր վրայ գթալով լողալով կու գար զանի ջուրէն հանելու, բայց բռնելու ատեն մազերէն որ ճշմարիտ չէին՝ սուտ մազը միայն ձեռքը կը մնայ, եւ աղատել ուզած մարդն ընկղմելով կը խղճուի : Այս պատկերին վրայ մեծ տառերով գրուած էր այսպէս . «Այս անոնք որ կեղծ հաշտ են» : Ասով կ'ուզէր իմացնել թէ կեղծ մազերը վնասակար են :

Ուրիշ սափրիչ մը որուն գործն էր կեղծ մազեր շինել, երբ տեսաւ որ շատերն իր արուեստակցին օրինակէն համոզուելով կեղծ մազ գործածելէ ետ կը կենային, իրեն եղած վնասին առաջն առնելու համար սահարքը խորհեցաւ : Նոյնպէս իր խանութին ճակատը նկարել տուաւ Աբիսողոմ մազերէն կախուած ծառէ մը . եւ տակը գրեց այսպէս, Երանէ՛ ի՛նչ հաշտ են ըլլանք :

Պատմութիւնն այս գարմանալի մրցման (եարըշ) ինչ վախճան ունենալուն վրայ բան մը չըսեր, բայց հի-

մակուան սովորութիւնը կը ցուցնէ թէ կեղծ մազերը խախտուեցան, այլ անշուշտ նորէն կ'ելլեն . պէտք է համբերել : Ասոր պէս շատ հրաշքներ գործած է նորածնութիւնը :

ԽԶ

ՀԱՆՃԱՐԵՊ ԽՐԱՏ ՄԸ

Մեծ զօրութեան տէր երկատասարդ իշխան մը Հնդկաստան կը թագաւորէր . եւ որովհետեւ շատ ինքնահաւան եւ հպարտ էր, իրեն եւ իր հպատակներուն շատ վնաս կ'ընէր : Անոր հաւատարիմ ծառաները պարապ տեղ կ'իմացնէին անոր թէ թագաւորի մը ամենէն մեծ զօրութիւնն՝ իր հպատակներուն սիրտը շահն է : Անոր այս խրատը տուողներէն շատերն աչքէ ինկան եւ պատժի ենթակայ եղան : Իմաստուն մարդ մը ուղեով թագաւորը համոզել՝ զանի առանց բարկութեան չարժեղու, նարտի խաղը հնարեց, ուր թագաւորը, թէպէտ ուրիշ անձինքներէն երեւելի է, առանց հպատակներուն եւ զինուորներուն օգնութեանը բան մը չի կրնար ընել : Երկատասարդ թագաւորը, բնականէն հանձարեղ ըլլալով, խրատին զօրութիւնը հասկցաւ ու վարքը փոխեց, եւ այնպէս վերահաս չարիքին առջեւն առաւ :

Խաղը հնարող մարդուն երախտեացը հատուցում ընել ուզելով, անոր հարցուց թէ ինչ փոխարէն կը խնդրէր . ան ալ ուզեց որ իրեն այնչափ հատ ցորեն տար որչափ որ նարտին տախտակին վրայ խորշեր կային, սա պայմանաւ որ ցորենի հատերուն թիւը միշտ կրկնուէր՝ առաջին խորշէն մինչեւ վերջինը որ վաթսուն եւ եօթներորդ է : Թագաւորն անմիջապէս անոր խնդրքը շնորհեց զեռ չքննած . բայց ետքը հաշիւ ընելով գտաւ որ Հնդկաստանի բոլոր հունձքը բաւական չէին խոս-

տացածը կատարելու : Ասկէ առիթ առնելով իմաստու-  
նը ցուցուց երիտասարդ թագաւորին թէ որչափ հար-  
կաւոր է որ թագաւոր մը իր բոլորտիքն եղողներէն  
զգոյշ ըլլայ , եւ անոնց չթողու որ անոնց ըրած բա-  
րերարութիւնները գէշի գործածեն :

X 5

ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՍՆԵՐ

Ուէսդմինսդէրի մեծ դպրոցին աշակերտներուն եր-  
կու դասերուն մէջտեղ վարագոյր մը կար դանոնք ի-  
րարմէ դատելու համար : Պզտիկ աշակերտներուն մէկը  
օր մը չգիտնալով (առանց գիտման) վարագոյրը պատ-  
ռեց , եւ որովհետեւ տղան ընութեամբ հեղ եւ վախ-  
կոտ էր , կը վախնար որ չըլլար թէ պատիժ ընդունէր  
վերակացուէն որ խիստ մարդ մըն էր : Տղուն աշա-  
կերտակիցներէն մէկը որ անկէ մեծ էր տարիքով դանի  
հանդարտեցուց խոստանալով անոր թէ յանցանքն իր  
վրայ կ'առնէ , եւ ինք կը կրէ պատիժը :

Բաւական տարիներ ետքը ընտանի պատերազմ ելաւ  
Անգղիոյ մէջ , եւ այս երկու տղոց որ արդէն չափա-  
հաս էին՝ ամէն մէկը մէկ կուսակցութեան կողմնակից  
եղաւ . մէկը ռամկապետաց կողմէն էր , մէկալն ալ  
թագաւորական կողմէն , Երբեմն մէկ կուսակցութիւ-  
նը , երբեմն մէկալը յաղթելէն ետքը , ռամկապետա-  
կանք յաջողելով թագաւորական զօրքին բոլոր վերին  
պաշտօնակալները բռնեցին : Ասոնց համար դատաւոր-  
ներ դրուեցան , այն վախկոտ աշակերտն ալ որ դա-  
տաւորութեան հետեւած էր՝ այն դատաւորներէն մէկն  
եղաւ : Գատուելու համար ատեան բերուողներուն ա-  
նուններուն մէջ լսելով իր աշակերտակցին եւ բարե-  
կամին անունը , զոր դպրոցէն ելլելէն ի վեր տեսած  
չէր , սիրտը շարժեցաւ . ուշադրութեամբ անոր նայե-

ցաւ եւ իրեն այնպէս երեւցաւ որ ան էր , եւ անոր  
քանի մը բան հարցնելով ստուգեց որ իրաւ ան էր , եւ  
առանց ինքզինք անոր յայտնելու շուտ մը ճամբայ ե-  
լաւ Ղոնտրա երթալու : Հոն պէտք եղած անձանց քով  
բանեցուցած աղբեցութեամբն ու ջանքովը յաջողեցաւ  
իր բարերարն ազատելու այն պատմէն որմէ անոր ըն-  
կերներէն մէկը չկրցաւ ազատիլ :

X 6

ԳԱՄ ՄԸ

Գեղացի մը քաղաք երթալու համար իր ձին համե-  
տելով , տեսաւ որ ձիուն ոտքին գամերուն մէկը  
պակաս էր . եւ որովհետեւ երթալու կը փութար , ինք-  
նիրեն ըսաւ . Ի՞նչ մնաս կամ օգուտ կայ ինձի , եթէ  
ձիուն ոտքը դամ մը աւելի կամ պակաս է : Աս ըսե-  
լով ճամբայ ելաւ : Ճամբան ձիուն մէկ ոտքին պայտը  
(նալը) խախտելով ինկաւ : «Եթէ հոս տեղ մը պայ-  
տառ մը ըլլար» , ըսաւ , «կրնայի պայտը տեղը դնել  
տալ . բայց որովհետեւ հոս այնպիսի մէկը չկայ , ձին  
կրնայ մէկալ երեքովը ճամբան գլուխ հանել» : Բայց  
ճամբուն վրայի քարերը վիրաւորեցին կենդանւոյն ոտ-  
քը , որ սկսաւ քաշելու ատենը կաղալ . եւ այսպէս  
կաղն ի կաղը ծանր կերպով գացած ատենը , յանկարծ  
երկու գող ելան մացառներէն դուրս մարդը կողոպ-  
տելու , որ ձիուն կաղալէն չկրնալով շուտով պրծիլ ,  
աւագակներուն ձեռքն ինկաւ , որոնք անոր մախաղին  
եւ մէջը եղածներուն հետ մէկտեղ ձին ալ առնելով ,  
թողուցին մարդը որ երթար : Անիկա ամէն բանէ զուրկ  
տուն դառնալու ստիպուելով , տրտմած ըսաւ ինքնի-  
րեն . «Ի՞նչպէս կրնայի խորհել որ դամ մը պակաս ըլ-  
լալուն համար ձիւ պիտի կորսնցունէի» :

Բուսիոյ մեծամեծներէն մէկը՝ Տէրութեան գաւառներէն մէկուն իշխանութիւնը կ'առնէ, եւ գաւառին մէջ այցելութեամբ պտտած ատենը, կը տեսնէ ձերմակ մազերով մարդ մը որ գեղէն քիչ մը հեռուն եղող անակի մը դուռը նստած կուլար, եւ անոր կ'ըսէ . «Ի՞նչ ունիս, մարդ, ինչո՞ւ համար տրտմած ես եւ կուլաս» : «Տէր», կ'ըսէ ձերը հառաչելով, «կուլամ, վասն զի հայրս զիս ձեծելով դուրս բրաւ» : Իշխանը դարմանալով այս խօսքին, եւ շուտ մը ձիէն իջնելով ներս կը մտնէ : Ոտքը տանը բակին մէջ դրածին պէս՝ հոն ճերմակ մազերով առջինէն աւելի ձեր ուրիշ մարդ մը կը տեսնէ, որ բարկացած ալ կ'երեւէր : «Ինչո՞ւ համար խռոված ես», կ'ըսէ անոր գաւառապետը : «Մի հարցունէր, տէր», կ'ըսէ ձերը . «որդիս որ դուռը կը կենայ՝ անդդուչութեամբ դեռինը ձգեց ձերունի հայրս, որ քամակին ոսկրը կոտրելով նստած է» : Գաւառապետն ըսուածները կատակ կարծեց . Քայց շուտով հասկցաւ որ կատակ չէր խօսքը, քանզի սենեակ մը տարուելով հոն կրակարանին մօտ մեծկակ աթոռի մը վրայ ուրիշ մարդ մը տեսաւ շատ ձեր, որուն կոնակը ծոած էր ձերութենէն, բայց դեռ աչխոյժ եւ ուժով էր : «Իրաւ», ըսաւ գաւառապետն ինքնիրեն, «այս մարդիկը նահապետներուն ցեղէն են» :

Բժիշկ մը իր ջորին հեծնելով՝ կոկորդին մէջ խաղաւարտ մը ունեցող հիւանդ մը տեսնելու կ'երթար :

Երթալու տեղը հասնելով եւ ջորիէն վար իջնելով, հոն դրանն առջին հանդիպեցաւ իր ճանչուորներէն մէկուն որուն հետ սկսաւ խօսիլ : Երբ խօսքը երկնցաւ, սանձը թողուց, ջորին ալ տանը դուռը բաց գտնելով, ներս մտաւ : Հիւանդին խուցը, կ'ըսէ պատմութիւնը, բակին վրայ էր եւ կէս մը բաց թողուած էր, որպէս զի ներս օդ բանէր : Կենդանին ասդին անդին նայելով, գուցէ ուտելու բան մը գտնելու համար, եւ բաց դուռը տեսնելով սանձովը եւ համետովը կը մտնէ հիւանդին խուցը, որ ոտքի ձայն լսելով եւ կարծելով թէ բժիշկն է, առանց ասդին դառնալու՝ թեւն անոր կ'երկնցնէ որպէս զի զննէ : Ջորին առանց պատճառը գիտնալու իր առջեւը երկնցած թեւ մը տեսնելով ակոռաներովը դաստակէն (պիլէկ) կը բռնէ . Հիւանդը սարսափած ասդին կը դառնայ, եւ ջորին տեսնելով՝ անկողնէն ցատկելով կ'իջնէ որ կենդանին դուրս ընէ, բայց սաստիկ ծիծաղելէն կոկորդին մէջի խաղաւարտը կը պատռի : Այն միջոցին բժիշկը վրայ հասնելով կ'ողէր ջորին մտրակով (խամչիով) ձեծել . հիւանդը ձայն հանելով կ'ըսէ . «Այդ անասնոյն վնաս մ'ընէր, պարոն բժիշկ, այս դէպքը զարմանալի է . այդ ջորին ուրնացուց այնպիսի հիւանդութիւն մը որուն գուցէ արուեստը ճար մը պիտի չկրնայ ընել . եթէ նորէն այսպիսի հիւանդութեան մը մէջ լցնամ, այդ ջորին զրկէ, եւ դուն անձամբ ինձի գալու մի յոգնիր» :

Կը պատմուի թէ երկրագործ մը որ աշխատութիւնը շատ կը յարգէր՝ ուզելով իր մահուանը մօտ գործքով ցուցնել իր որդւոյն թէ որչափ օգտակար է աշխա-

տութիւնը , զանի կը կանչէ իր քով , եւ գաղտնիք մը յայտնելու պէս անոր կ'ըսէ . «Տղաս , մեր արտին մէջ որ կը գործենք՝ թաղուած դանձ մը կայ , բայց թէ որ տեղն է՝ չեմ գիտեր» : Այս ըսելով՝ անոր խրատ կու տայ որ , առանց մէկուն յայտնելու , ինք անձամբ փոքրէ արտը : «Այսպէս ընելով» , կ'ըսէր , «ստուգիւ պիտի դանեա դանձը» : Մարդը կը մեռնի , եւ որդին թաղուած դանձը գտնելու յուսով , կ'առնէ բահ եւ բրիչ , եւ շատ օրեր աշխատելով արտը ծայրէ ծայր փորեց , եւ դանձին չպատահելով՝ տրտմեալ եւ յուսահատ կ'երթայ :

Բայց երկիրն այնպէս գործուելով եւ ցանուելով , հունձքի առեւնը կու տայ առատ բերք , զոր երիտասարդ երկրագործը ժողովելով եւ շահմարաններու մէջ դնելով շատ կը հարստանայ : Անտեսն կը հասկնայ թէ հօրն ըսած դանձը նոյն իսկ աշխատութիւնն էր :

ՎԵՐՁ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

- Ածական . Ի՞նչ է . 4. Տեսակները . 27. Որակական ածականք . 27. Ածականաց համաձայնութիւնք . 54 , 55. Ածականաց աստիճանները . 159. Գերադրական աստիճան . 140. Ածական մը իրի մը յատկութիւնք քանի կերպով կրնայ ցուցնել . 159. Ածականաց ինքիւրները . 145. Ստացական ածականք . 28. Ի՞նչպէս կը հոլովին . 52. Անոնց համաձայնութիւնք . 59. Յուցական ածականք . 28. Ի՞նչպէս կը հոլովին . 55. Անոնց համաձայնութիւնք . 42. Անորոշ ածականք . 28. Ի՞նչպէս կը հոլովին . 55. Անոնց համաձայնութիւնք . 46. Թուական ածականք . 28. Տեսակները . 28. Բացարձակ թուականք և անոնց հոլովմունքը . 28-50. Դասական թուականք և անոնց հոլովումը . 51. Անձներական թուականք և անոնց հոլովումը . 52. Թուական ածականաց համաձայնութիւնք . 57. Թուական և անորոշ ածականաց ինքիւրք . 145. Հարցական ածականք . 28. Անոնց հոլովումը . 54. Անոնց համաձայնութիւնք . 46 , 47 :
- Ածանցական մասնիկներ . 171-177
- Ածանցեալ բառեր . 171
- Անեզական անուանք , Տես Անուն .
- Անորոշ և որոշեալ հայցական . 62. Ասոնց տարբերութիւնք . 62.
- Անուն , Ի՞նչ է . 2. Քանի յատկութիւն ունի . 2. Անեզական անուն . 5. Անեզական անուն տէր բային . 44. Անուններն Ի՞նչպէս կը հոլովին . 5 , 15.
- Անուն և Գրէն բառերուն հոլովումը . 54.
- Արմատ բառեր . 174.
- Բաղդատութիւն : Քանի՞ տեսակ է . 159. Հաւասարութեան և տարբերութեան բաղդատութիւններն Ի՞նչ կը ցուցնեն և Ի՞նչպէս կը բացատրուին . 159. Բաղդատութեան մէջ ածականին վրայ Ի՞նչ մասնիկ կ'աւելնայ . 159. Բաղդատութիւնք երբ նուազութիւն կը ցուցնէ . 140
- Բայ . Ի՞նչ է . 5. Քանի յատկութիւն ունի . 6. Տեսակները . 6. Էական բայ . Խոնարհումը . 7. Ածական բայ . 52. Տեսակները . 52. Ներգործական բայ . 55. Չէզոք բայ . 55. Լծորդութիւն Ա . 54. Ա . Լծորդութեան վրայ գիտելիք . 56. Լծորդութիւն Բ . 60. Բ . Լծորդութեան վրայ գիտելիք . 62. Լծորդութիւն Գ . 70. Գ . Լծորդութեան վրայ գիտելիք . 74. Լծորդութիւն Դ . 77. Դ .

լծորդութեան վրայ գիտելիք . 79. Բայերուն ժամանակները . Կա-  
նի՞ Էն . 6. Բաղադրեալ ժամանակներ . 7, 158. Բայերուն եղա-  
նակները . Քանի՞ Էն . 6. Բայերուն կրաւորականը . 85. Ասոնց  
խոնարհման ձեւը . 85-90. Անկանոն բայեր . 96, 402, 409, 417.  
Պատմական և պորաւական խնդիր առնող բայեր . 419. Անցողա-  
կան բայեր . 429. Ասոնց խոնարհումը . 450 : Ե՛ր բայը երբ էա-  
կան բայ է . 454. Ե՛ր բային ուրիշ նշանակութիւնները . 455. Ե՛ր  
բայը ունի նշանակութեամբ . 456. Ասոր գործածութիւնը . 455.  
Գո՛ր բայը . 457. Ասոր գործածութիւնը . 457. Դիմաւոր բայ մը  
անդէմի փոխել . 465-468 :

Բայանուն . Ի՞նչ է . Ասոնց գործածութիւնը . 82, 180. Բայա-  
նունէ և գոյականէ բաղկացեալ բարդեր . 480. Բայանունէ և  
մակբայէ բաղկացեալ բարդեր . 486 :

Բառեր , Ի՞նչպէս խօսք կը կազմեն . 4. Տեսակները . 2 :  
Բարդ անուններ . 477. Ասոնց կապը . 478. Երկու գոյականէ  
բաղկացեալ բարդեր . 478. Գոյականէ և ածականէ բաղկացեալ  
բարդեր . Տես և Բայանուն :

Բացայայտիչ . 447.  
Գիր , Ի՞նչ է . 4.  
Գոյական , տես Անուն :  
Դերանուն . Ի՞նչ է . 48. Տեսակները . 49. Էական դերանուն և  
Հոլովումը . 49. Ստացական դեր . 50. Ասոնց վրայ գիտելիք . 51  
Յուշական դեր . 50. Ստացական և ջուշական դերանունը ածա-  
կան էն թէ գոյական . 50. Յարաբերական դեր . 50, 454. Յա-  
րաբերականը դիմաւոր բայով Ի՞նչ բառերու գորութիւն ունի . 452  
Յարաբերականին բային ժամանակները . 455. Դիմաւոր բայով  
յարաբերական հոլոված . 454. Յարաբերական՝ յարաբերելոյն  
նախադաս . 456

Դեմք . Քանի՞ է . 6.  
Թիւ , Ի՞նչ է . 5. Քանի՞ է . 5. Անեղական . 5. Ի՞նչպէս կը հո-  
լովն . 5. Անեղականաց բայը . 44. Բայերուն թիւը . 6. Թուա-  
կան անուն , տես Ածական :  
Ինչ , Ի՞ր բառերը . 48  
Լեզու . Ի՞նչ է 1 . Օրէնքը . 4 :  
Լծորդութիւն , տես Բայ :  
Լուծում , 8. 14. 26. 56. 59. 44. 44. 45. 48. 52. 58. 60. 65.  
68. 76. 84. 85. 87. 101. 408. 417. 426. 429. 457. 458. 442.  
447. 454. 457. 459 :

Խնդիր , Հայցական հոլով սեռի խնդիր . 55. Բնութեան  
խնդիր . 65 : Հայցական հոլով բնութեան խնդիր . 124, 429 :  
Խօսք , Ինչ բանէ կը բաղկանայ . 4 :  
Կոչական , 448 : Կոչականին հետ Ի՞նչ բառ կը գործածուի ,  
449 :

Հոլով , Ի՞նչ է . 2 : Քանի՞ է . Սեռական հոլով 25 : Ի՞նչ կը  
կոչուի . 25 : Տրական հոլ . 65 : Բացառական հոլ . 91 : Գործի-  
ական հոլ . 94 : Հայցական հոլով , տես Խնդիր :

Հոլովում . Ա . 5. Գիտելիք Ա , հոլովման վրայ , 5 : Բ . հոլովում ,  
4 : Գ . հոլովում , 4 : Գիտելիք , 4 : Գ . հոլովում , 4 : Գիտելիք ,  
4 : Ե . հոլովում , 15 : Գիտելիք , 15 : Զ . հոլովում , 15 : Է . հո-  
լովում , 16. Գիտելիք , 17 : Ը . հոլովում , 17 : Գիտելիք , 17 : Հո-  
լովման մէջ ձայնաւորներու փոփոխութիւնը . 18, 49 : Անկա-  
նոն հոլովումներ . 24, 22 :

Չայն . Ի՞նչ է . 4 :  
Մակբայ , 72 : Տեսակները , 72 : Ա . , ար , ան , մակբայներուն  
մէկ գործածութիւնը . 75 : Բացասական մակբայ , 98 :

Մասունք բանի . 2 :  
Յատկացուցիչ , 25 : Ո՞ւր կը դրուի . 25 : Յատուկ անուն յառ-  
կացուցիչ . 24 :  
Յատուկ անուն . յատկացուցիչ . 25 : Յատուկ անունաց տիա-  
ղոսները . 448 :

Յօդ . Ի՞նչ է . 9. Ո՞ւր կը դրուի . 9. 25 : Ե՛րբ չի դրուի . 9 :  
Ե՛րբ կը դրուի . 42, 40 :  
Նախադասութիւն , Ի՞նչ է . 8 : Զեղչեալ նախադասութիւն .  
69 : Խօսք մը քանի՞ նախադասութիւնէ կը կազմուի . 457 :  
Խօսքի մէջ քանի՞ նախադասութիւն ըլլալը գիտնալ . 458 : Գլխա-  
ւոր նախադասութիւն . 457 : Միջանկեալ նախադասութիւն . 458 :  
Միջանկեալ նախադասութիւնն Ի՞նչպէս կը հասկցուի . 458 :

Նախադրութիւն . Ի՞նչ է . 65 : Ը՛տ նախադրութիւն . 405 :  
Ը՛տ՝ սեռականով , 405 : Ը՛տ՝ տրականով , 406 : Ը՛տ՝ Հայցակա-  
նով , 406 : Ը՛տ՝ կրկնուած , 406 : Ը՛տ՝ գործիականով , 407 :  
Ը՛տ նախադրութիւն՝ տրականով . 407 : Ը՛տ հայցականով , 407 :  
Տեղւոյ այլեւայլ պարագայ ցուցնող նախադրութիւնը . 445 : Ի  
յե՛տ , հարէ՛ր նախադրութիւնները . 428 :

Նախդիր . Ի նախդիր . 66, 81 : Ա , փոխանակ է նախդիր . 67 :  
Ա , -- է , 82 : Ասոնց գործածութիւնը աներեւոյթի հետ . 82 :  
Ա- նախդիր անորոշ հայցականով , 92. Տրականով , 95. Սեռա-

կանով, 95: Գործիականով, 99: Յ նախդիր, 99: Զ նախդիր՝  
բացատրականով, 149: Զ նախդիր՝ գործիականով, 149:  
Շարադրութիւն, կարգը, 56:  
Պարադայք գործողութեան, 65: Ի՞նչպէս կը բացատրուին, 66:  
Ս, ք, շ գերերուն գործածութիւնը 45, 152:  
Ստորգելի, Ի՞նչ է, 8: Ի՞նչ հոլով ըլլալու է, 166: Ստորո-  
գելի՛ Տէր բային վերաբերեալ, 146: Ուղղականէն զատ ուրիշ  
Ի՞նչ կերպով կրնայ գործածուիլ 146: Հայցական ստորոգելի, 146:  
Տ՝ բայով աներեւոյթ, 152:  
Տէր բայի, 8: Անդրական տէր բայիներուն բայը, 41: Սեռա-  
կան տէր բայի, 161: Տրական տէր բայի, 162:  
Քերականութիւն, Ի՞նչ է, 2:



ՅԱՆԿ ԳԼԽ ՈՅ

Դ.առ	Ա.	Լեզու, քերականութիւն, մասունք բանի	1
»	Բ.	Անուն և ածական	2
»	Գ.	Բայ	5
»	Դ.	Լուծում եւ յօդ	8
»	Ե.	Տէր բայի եւ յօդ	14
»	Զ.	Հոլովմունք անունաց	15
»	Է.	Հոլովման մէջ ձայնաւոր գերերու փոփոխութիւնը	18
»	Ը.	Անկանոն հոլովմունք	21
»	Թ.	Սեռական հոլով յատկացուցիչ	25
»	Ժ.	Ածականներուն տեսակները	27
»	Ժ.Ա.	Ածականաց համաձայնութիւնը	54
»	Ժ.Բ.	Դերանուն	48
»	Ժ.Գ.	Ածական բայ, սեռի խնդիր	52
»	Ժ.Դ.	Ս. ընդդրութեան բայեր, շարադրութեան կարգը	54
»	Ժ.Ե.	Բ. ընդդրութեան բայեր, անորոշ հայցական բնութեան խնդիր	60
»	Ժ.Զ.	Նախադրութիւն	65
»	Ժ.Է.	Գ. ընդդրութեան բայեր, մակբայ	70
»	Ժ.Ը.	Դ. ընդդրութեան բայեր	77
»	Ժ.Թ.	Ի, առ, նախադրութիւնը, բայանուն	81
»	Ի.	Կրաւորական բայ, բացատրական հոլով	85
»	Ի.Ա.	Ա, նախադրութիւն. գործիական հոլով	92
»	Ի.Բ.	Անկանոն կամ զարուզի բայեր, բացատրական մակբայ, առ, նախադրութեան ուրիշ գործածութիւնը, ց, նախդիր	96
»	Ի.Գ.	Անկանոն բայեր. ընդ և բառ նախադրութիւնը	102
»	Ի.Դ.	Անկանոն բայեր. տեղոյ զարագայ ցուցնող նախադրութիւնը	109
»	Ի.Ե.	Անկանոն բայեր	117
»	Ի.Զ.	Զ նախդրին այլևայլ գործածութիւնները	119
»	Ի.Է.	Հայցական հոլով բնութեան խնդիր	124
»	Ի.Ը.	Հայցական հոլով բնութեան խնդիր. Ի ձեռն, հանդերձ, նախադրութիւնները	127
»	Ի.Թ.	Անցողական բայեր, տամ բայով աներեւոյթ	150
»	Լ.	Եմ բային քանի մը գործածութիւնները. Գամ	150

Դաս ԼԱ.	Եմբայն ունիմ նշանակութեամբ	157
» ԼԲ.	Ածականաց աստիճանները	159
» ԼԳ.	Ածականաց խնդիրները	142
» ԼԴ.	Ստորոգելի հայցական, և նախդրիւ	146
» ԼԵ.	Բացայայտիչ, կոչական	147
» ԼԶ.	Յարարերական դերանուն	151
» ԼԷ.	Բաղադրեալ ժամանակներ, Տէր բայի	160
» ԼԸ.	Դիմաւոր բայերն անդէմի փոխել	165
» ԼԹ.	Արմատ և ածանցեալ բառեր	171
» Խ.	Բարդ անուններ	177
» ԽԱ.	Բայանուն, բարդ բառեր	180
» ԽԲ.	Բարդ բառեր. բայանուն և մակբայ	186
Նախընթաց դասերուն վերաբերեալ խառն հրահանգներ	188	
Յովտէփ գեղեցիկն պատմութիւնը	216	
Այլեւայլ պատմութիւններ	225	
1.	Շնիկ	225
2.	Լաւ դրացիներ	226
3.	Վարդի ծառը	227
4.	Ընկուղի կեղեւներ	228
5.	Սաւուղի եշերը	229
6.	Յովտէփ կայսր	250
7.	Անցեալ մեծութիւն	251
8.	Գողն ու խոզը	252
9.	Երեսէ ինկած պաշտօնեան	252
10.	Հայրենասիրութեան օրինակ մը	255
11.	Աղեքսանդրիոյ փարոսը	254
12.	Դրօշակ	255
13.	Սափրիչք	256
14.	Հանճարեղ խրատ մը	257
15.	Երկու բարեկամներ	258
16.	Գամ' մը	259
17.	Խոր ծերութիւն	240
18.	Ջորի մը	240
19.	Թաղուած գանձ մը	241



2517

2013

« Ազգային գրադարան



NL0061463

ՅՈՒՆԿ ԳՐՈՑ

Ի ԳՐԱՏԱՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳՕՎԱՅԵԱՆ

ԴՇ. ՓՐ.

Այբբենարան , Հեգարան և Ընթերցարան	20
Աշխարհագր. Բնա. Քաղ. Գարագաշեանի	4
Աշխարհագր. Ուսում. Բնա. Քաղ. Գարագաշ.	8
Աշխարհագր. » » » Ս. Մեքայել	8
Գրագիտութիւն առ ձեռն Ե. Մուրատեանի	2 20
Վեղադրութիւն կուրճեան Հայ. Գղղ. Յն. Տճ.	5
Գեղաչքութիւն Մակուայի աիւց	10
Երգարան նոր կամ՝ Քնար Հայաստանի	6
Ընթերցարան կամ՝ Գաստիարակ. Գարագաշ.	2 20
Ընթերցարան կամ՝ Նախագիտել. Ս. Փափաղ.	5
Թուարանութիւն ընդարձակ Տ. Պօղաճեան	8
Ժողովրդական մատենադարան Ա. Բ. Գ մաս	6
Հատընտիր քաղաածք 'ի նախնեաց Գրգշ.	12
Հեգարան	20
Մանր ուսմունք ֆրիտոննէական Գ. Մարկոս.	2
Նոր ընթացք դրարաւ լեզուի Մուրատեան	4
Պատմ. Հոյոց Ս. Փափաղեան	7
Պատմ. Սրբազան Ս. Փափաղեան	6
Պարտք Տղայոց	4
Սրբազան պատմ. բաղմնապատկեր Գարագաշ.	5
Սկզբունք դաստիարակութեան Ա. Հար.	6
Իաղգամ ճեպիլի	4
Փոքրիկ քարտուղար կամ՝ Նամականի	10
Քերականութիւն գործնական. Գարագաշ.	10
» ընդարձակ »	8
» համառօտ »	4
» ըստ Օլլէնտորֆի Գաղղի-	
երէն , Հայերէն Գարագաշ.	27
Քերականութիւն Շիշմանեանի ընդարձակ	6
Քերական բաղնադատիկեր կամ՝ Այբբենարան	40
Քերական կամ՝ Այբբենարան հին ոճով	20